# ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

34ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 46 (1696) ՇԱԲԱԹ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 13, 2014
VOLUME 34, NO. 46 (1696) SATURDAY, DECEMBER 13, 2014

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## Թրքերէնով Հրատարակուած է Նոր Գիրք՝ Հայերու Բռնի Մահմետականացման Մասին



Փրոֆեսոր Թանէր Աքչամ

Թուրքիոյ մէջ հրատարակուած է Հայոց ցեղասպանութեան մասին բազմաթիւ գիրքերու հեղինակ՝ փրոֆեսոր Թաներ Աքչամի նոր գիրքը՝ «Հայերու Բռնի Մահմետականացումը. Լռութիւն, Ժխտում եւ Ձուլում» վերնագրով:

Ըստ «Ակունք» կայքէջին, առաջին մասով Աքչամ կը ներկայացնէ, թէ ինչու եւ ինչպէս սկսած է հետաքրքրուիլ Հայոց ցեղասպանութեան հարցով եւ անոր հետեւանքով ինչպիսի դիմադրութեան առջեւ գտնուած է վերջին 30 տարիներու ընթացքին:

Երկրորդ մասով փրոֆեսորը կ'անդրադառնայ Սարգիս Թորոսեանի յուշերու հրապարակումէն յետոյ ծաւալուած բանավէճերուն, որոնք շարունակուեցան տարբեր ճակատներու վրայ: Իսկ գրքի վերջին հատուածին մէջ, Թաներ Աքչամ կը վերլուծէ հայերու բռնի ձուլման հարցը:

Ըստ Աքչամի, բռնի ձուլումը տեղի ունեցած է չորս տարբերակով. բռնի մահմետականացում, ժամանակաւոր վերաբնակեցում, երեխաներու հաւաքագրում ու անոնց փոխանցումը մահմետական ընտանիքներուն եւ վերջապէս, հայ կանանց ու աղջիկներու բռնի ամուսնութիւնը մահմետականներու հետ:

Պնդելով, որ բռնի ձուլումը Հայոց ցեղասպանութեան անքակտելի մաս կը կազմէ, Թուրք գիտնականը նաեւ կ'անդրադառնայ այն հարցին, թէ ինչու համար այդ փաստը մինչեւ հիմա անտեսուած է:

## Ռուսաստանի Խորհրդարանը Վաւերացուց ԵՏՄ-ին Հայաստանի Անդամակցութիւնը

Ռուսաստանի Խորհրդարանը՝ Պետդուման, Դեկտեմբերի 10-ին վաւերացուց Եւրասիական Տնտեսական Միութեան Հայաստանի անդամակցութեան պայմանագիրը: Այդ հարցը Պետդումայի օրակարգ ներառուած էր նախագահ Վլատիմիր Փութինի կողմէ: Որոշումը ընդունուած է միաձայնութեամբ:

Դեկտեմբեր 4-ին Հայաստանի Ազգային Ժողովը ձայներու ճնշող մեծամասնութեամբ վաւերացուցած էր Եւրասիական Տնտեսական Միութեան Հայաստանի անդամակցութեան պայմանագիրը:

Յիշեցնենք, որ Ռուսաստան, Պելառուս եւ Ղազախստան Մայիսին ստորագրած էին եւ արդէն իսկ վաւերացուցած՝ ԵՏՄ-ի ստեղծման մասին պայմանագիրը, որ պիտի սկսի գործել 2015-ի Յունուարի 1-ին:

Հոկտեմբեր 10-ին Մինսկի մէջ ստորագրուած էր ԵՏՄ-ին Հայաստանի անդամակցութեան պայմանագիրը: Փաստաթուղթի վաւերացումը ԵՏՄ անդամ երկրներու խորհրդարաններուն կողմէ կը կատարուի մինչեւ տարուայ վերջը:

ԵՏՄ-ին անդամակցութեան կը պատրաստուի նաեւ Ղրղզստանը, դառնալու համար այդ կառոյցի անդամ 5-րդ երկիրը:

## Ցեղասպանութեան Մասին Ֆիլմը Թուրքիոյ Մէջ Ցուցադրուած է «Միայն 18 Տարիքէն Վեր» Նշումով

Թուրք յայտնի բեմադրիչ Ֆաթիհ Աքընի «Հատում» (The Cut) ֆիլմը Թուրքիոյ սինեմայի թատրոններուն մէջ սկսած է ցուցադրուել «+18» նշումով:

Թրքական «Էվրընէսթ» կայքէջի փոխանցմամբ՝ Թուրք սինեմայի գործիչները քննադատած են Ֆաթիհ Աքընի «Հատում» ֆիլմի ցուցադրութեան ժամանակ «+18» նշումը՝ այն անուանելով գրաքննութիւն: Եւրոպայի մէջ «Հատում» ֆիլմը ցուցադրուած է «+12» նշումով:

Յայտնենք, որ Հայոց ցեղասպանութեան մասին պատմող The Cut ֆիլմը առաջին անգամ ցուցադրուած է Վենետիկի 71-րդ ֆիլմերու փառատօնի ընթացքին:

Ֆաթիհ Աքըն հարցազրոյցի մը ժամանակ խոստովանած էր, որ Հասան Ճեմալի «1915. Հայոց Ցեղասպանութիւն» գիրքն է որ, իրեն քաջութիւնը տուած է օգտագործել «ցեղասպանութիւն» բառը: «Մինչ այդ ես տարբեր ռազմավարութիւններ կ'օգտագործէի տեղի ունեցածի մասին խօսելու ընթացքին այդ բառի օգտագործումէն խուսափելու համար: Հասան Ճեմալ կոտրեց այդ վախը»,- ըսած էր բեմադրիչը:

## Սամասթ Նոր Մանրամասնութիւններ Կը Բացայայտէ Հրանդ Տինքի Սպանութեան Հարցով



Արխիւային նկար.. Հրանդ Տինքին սպաննող Օգիւն Սամասթ թուրք ոստիկաններու կողմէ կը բերուի դատարան

Թրքական ոստիկանութեան բարձրաստիճան աշխատակիցները ոչ միայն տեղեակ եղած են «Ակօս»-ի խմբագիր Հրանդ Տինքի ծրագրուող սպանութեան մասին, այլեւ ուղղորդած են անոր նախապատրաստման գործընթացը: Անցեալ շաբաթ Իսթանպուլի քրէական գործերով դատարանին մէջ նման ցուցմունքով հանդէս եկած է Տինքի սպանութեան անմիջական հեղինակը՝ 23 տարուայ բանտարկութեան դատապարտուած Օգիւն Սամասթ:

«Ազատութիւն» ռատիոկայանի կայքէջը կը հաղորդէ, որ Թուրքիոյ Իշխող «Արդարութիւն եւ Զարգացում» կուսակցութեան հետ սերտ կապեր ունեցող «Սապահ» օրաթերթը որոշ հատուածներ հրապարակած է Սամասթի՝ դատարանին մէջ հնչեցուցած ցուցմունքներէն, ուր պարզ կը դառնայ, որ իրաւապահ մարմիններուն եւ Տինքի մարդասպանի միջեւ գլխաւոր միջնորդը եղած է դատարանին կողմէ սկիզբը արդարացուած, հետագային կրկին ձերբակալուած տրապիզոնցի ազգայնական Էրհան Թունճէլ:

«Սպանութենէն առաջ ես Էրհան Թունճէլին այցելեցի իր բնակարանին մէջ: Այդ հանդիպման ժամանակ ան ինծի տեղեակ պահեց Ռամազան Աքիւրեքի եւ Ալի Ֆուաթ Եըլմազերի մասնակցութեան մասին», - Սամասթի խօսքերը մէջբերելով կը գրէ «Սապահ»:

Սամասթի ցուցմունքներուն մէջ յիշատակուած Ռամազան Աքիւրեքը ոստիկանութեան քրէական հետախուզութեան նախկին ղեկավարն է, իսկ Ալի Ֆուաթ Եըլմազերը՝ Իսթանպուլի ոստիկանութեան նախկին ղեկավարը, որ սպանութեան պահուն կը գրաւէր Իսթանպուլի ոստիկանութեան հետախուզութեան բաժնի ղեկավարի պաշտօնը:

Թրքական մամուլի տեղեկութիւններով, երկու ոստիկաններն

Շար.ը էջ 4

## Դէպի Հայաստան Փոխանցումներու Հոսքի Հսկայական Անկումը Կը Շարունակուի

Ռուսաստանէն դրամական փոխանցումներու անորոշութիւնը, որ առկայ էր տարուայ առաջին ամիսներուն, ներկայիս փոխարինուած է յստակ եզրակացութեամբ եւ անկումը ակնյայտ է:

Յունուար-Հոկտեմբերին բոլոր երկիրներէն փոխանցումներու ընդհանուր գումարը տարեկան համեմատութեամբ նուազած է 28.6 միլիոն տոլարով (կամ 1.9%-ով): Այդ նուազումը կապուած է Ռուսաստանէն փոխանցումներու հոսքի զգալի անկման հետ. ան կազմած է 57.2 միլիոն տոլար կամ 4.6%:

Ռուսական փոխանցումներու անկումը այնքան մեծ եղած է, որ կրկնակի գերազանցած է այլ երկրներու մասով արձանագրուած որոշակի դրական աճը: Հայաստան ուղղուող դրամական փոխանցումներու առիւծի բաժինը Ռուսաստանէն է: Նոյնիսկ հոսքի կրճատման պայմաններուն մէջ, ռուսական փոխանցումներու բաժինը Յունուար-Հոկտեմբերին կազմած է ընդհանուր գումարի 83.6%-ը:

Տնտեսագէտները կ'եզրակացնեն որ Հայկական շուկայի վրայ դրամի փոխարժէքի անկումը տոլար համեմատ, որոշ չափով նաեւ կրնայ կապուած ըլլալ փոխանցումներու նուազումին հետ:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Փոխանցիկ իշխանափոխութիւն

*ԵՂԻԱԶԱՐ ԱՅՆԻԱՊՑԻ*

*ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկեանը Գիւմրիում լրագրողների հետ կարճ զրոյցի ընթացքում յայտարարել է, որ Յովիկ Աբրահամեանը կասկածի տակ չի դրել, որ ինքը պատրաստւում է իշխանափոխութիւն անել: «Ջեն գնում իշխանափոխութեան՝ իմ կարծիքով»,- յայտարարել էր Յովիկ Աբրահամեանը:*

*Սակայն հետաքրքրականը այն է, որ Գագիկ Ծառուկեանը ոչ թէ հերքում է Յովիկ Աբրահամեանին ու յայտարարում, որ Աբրահամեանը սխալւում է կամ պարզապէս յայտարարում, որ ոչ՝ իրենք հենց իշխանափոխութեան էլ գնում են, այլ ուղղակի մեկնաբանում է իր խնամու յայտարարութիւնն ու ասում, որ նա նման բան չի ասել:*

*Ըստ էութեան, նմանօրինակ ձեւակերպմամբ Գագիկ Ծառուկեանը իրականում չի հերքում Յովիկ Աբրահամեանին, այլ հաստատում է: Միեւնոյն ժամանակ դա հաստատում է նաեւ իրականութիւնը: Իսկ իրականութիւնն այն է, որ Հայաստանում այսօր քաղաքական կեանք ըստ էութեան չկայ, եւ ամենաաղմկոտ իրադարձութիւնը ըստ էութեան եղել է այն, որ ոչ իշխանական ուժերը հաւանութեան են արժանացրել ԵՏՄ-ին անդամակցելու մասին Սերժ Սարգսեանի որոշումը, ինչը, մեղմ ասած, ոչ միայն չի կարող կապ ունենալ իշխանափոխութեան հետ, այլեւ, ըստ էութեան, նաեւ իշխանափոխութեան լիազօրութիւնը լիովին յանձնում է Ռուսաստանի իշխանութիւններին:*

*Քաղաքական կեանքը Հայաստանում աշնանային զարմանալի ակտիւացմանը զուգընթաց՝ յանկարծ կտրուկ կերպով պասիւացաւ ԵՏՄ-ին Հայաստանի անդամակցութեան մասին պայմանագրի ստորագրումից յետոյ: Այդ պայմանագիրը Դեկտեմբերի 10-ին քննարկուելու է ՌԴ Պետումայում, եւ հետաքրքրական է, որ ինչպէս Հոկտեմբերի 10-ին, երբ Մինսկում Սերժ Սարգսեանը ստորագրում էր պայմանագիրը, այս անգամ էլ Դեկտեմբերի 10-ին Երեւանում զուգահեռաբար զանգուածային միջոցառում է պատրաստւում ոչ իշխանական բեւեռը: Մարդու իրաւունքների օրուայ առթիւ երթ է լինելու, որը աւանդաբար անցկացրել է ՀԱԿ-ը, սակայն այս անգամ երթն անցկացւում է ոչ իշխանական ուժերի շրջանակում: Սա եղել է կոմպրոմիսային որոշում՝ ի պատասխան ՀԱԿ-ի դիտողութիւնների, երբ Կոնգրեսը դժգոհել էր հանրահաւաքային ալիքը դադարեցնելու առթիւ: ԲՀԿ-ն շատ չոր պատասխանեց, սակայն յարաբերութիւնները չխզեց, եւ Դեկտեմբերի 10-ին կոմպրոմիսը եղաւ:*

*Հայաստանում ոչ իշխանական ուժերի զանգուածային միջոցառումների եւ ԵՏՄ-ին Հայաստանի անդամակցութեան հարցում կարեւոր իրադարձութիւնների ժամանակային այս համընկնումն իսկապէս հետաքրքրական եւ առաջին հերթին, իհարկէ, խորհրդանշական է, յատկապէս հենց ԵՏՄ-ին անդամակցութեանը զուգահեռ ակտիւացման եւ վաւերացմանը զուգահեռ, այսպէս ասած, հանգստանալու, դադար վերցնելու կապակցութեամբ:*

*Դեկտեմբերի 10-ին անկասկած Հայաստանում կը փակուի, այսպէս ասած, քաղաքական տարին, եւ այն կը վերսկսուի լաւագոյն դէպքում երեւի թէ Փետրուարին: Փետրուարին էլ Սերժ Սարգսեանը խոստացել է իր կարծիքը յայտնել սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի մասին եւ ասել՝ անելո՞ւ են փոփոխութիւնները, թէ՞ ոչ:*

*Չի բացառւում, որ Փետրուարին ոչ իշխանական եռեակն արդէն երկեակ դարձած լինի, քանի որ Րաֆֆի Յովհաննիսեանը ոչ իշխանական ուժերին մինչեւ Նոր տարի ժամանակ է տուել օրակարգի վերաբերեալ յստակեցումներ անելու համար: Մեղմ ասած՝ միամիտ կը լինի պատկերացնել, որ Րաֆֆի Յովհաննիսեանի վերջնագիրը որեւէ ազդեցութիւն կը թողնի ՀԱԿ-ի ու ԲՀԿ-ի առաջնորդների վրայ:*

*Որոշումները կայացնում է Գագիկ Ծառուկեանը, իսկ Լեւոն Տէր-Պետրոսեանը հիմնաւորում է այդ որոշումները: Րաֆֆի Յովհաննիսեանը որեւէ ֆունկցիա չունի, եւ տրամաբանական կը լինի նրա դուրս մնալը ոչ իշխանական ուժերի ֆորմատից: Ըստ որում՝ շատ հաւանական է, որ Յովհաննիսեանն ինքը հենց այս իրողութիւնը կանխազգալով՝ փորձում է ըստ էութեան նախապատրաստուել այս հեռանկարին եւ ինքնուրոյն գործողութիւնների մեխանիզմ գործի գցել:*

*«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»*

# Եւրասիական միութիւնը որոշում ունի Ղարաբաղի հարցով

*ՆԱՑԻՐԱ ՀԱՑՐՈՒՄԵԱՆ*

*Բազելում հանդիպել են ԵԱՀԿ արտաքին գործերի նախարարները, որպէսզի քննարկեն Սիրիայի, Իրաքի եւ Ուկրաինայի խնդիրները: Արդիւնքում յայտարարութիւն է ընդունուել Ղարաբաղի հարցով:*

*ԱՄՆ-ը, Ռուսաստանն ու Ֆրանսան թւում է թէ ընդունել են հերթական յայտարարութիւնը Ղարաբաղի մասին, որում կոչ են արել բացառապէս խաղաղ լուծում փնտռել ու շուտափոյթ համապարփակ համաձայնագիր մշակել: Յայտարարութիւնը, սակայն, այնքան էլ հերթական չէր: Բանն այն է, որ մինչ ԱԳՆ ղեկավարները Բազելում էին, Երեւանում խորհրդարանը 103 ձայնով Հայաստանը միացնում էր Եւրասիական Միութեանը: Այլ կերպ ասած, խորհրդարանը Հայաստանի անվտանգութիւնը, ինչպէս նաեւ ղարաբաղեան կարգաւորումը փոխանցում է Կրեմլին:*

*Բազելում յայտարարութիւնը կարելի է պայմանաւորել ԵՏՄ-ին Հայաստանի վերջնական միանալուց յետոյ ղարաբաղեան հակամարտութեան գօտում ուժերի հաւասարակշռութեան փոփոխութեան հեռանկարով: ԱՄՆ-ը եւ Ֆրանսան Ռուսաստանից փորձում են փոփոխութեան բացառման երաշխիքներ ստանալ, սակայն այն իրավիճակում, երբ Հայաստանը կամաւոր յանձնում է իր անվտանգութիւնը, դա պարզապէս ծիծաղելի է թւում:*

*ԵՏՄ-ին Հայաստանի անդամակցութիւնն ի՞նչ կը տայ ղարաբաղեան կարգաւորմանը: Եւրասիական Միութիւնը որոշում ունի՞ ղարաբաղեան խնդրով: Հայ քաղաքական գործիչները գերադասում են չխօսել այս թեմայով, չնայած, անզէն աչքով կարելի է անմիջապէս տեսնել միանգամից մի քանի միտում՝ հայկական բանակի՝ որպէս Հայաստանի ու Ղարաբաղի անվտանգութեան երաշխաւորի, գործօնի թուլացումը, սուվերէն սուբիեկտութեան նուազումը եւ ռազմավարական համաձայնագրերի ստորագրման արգելքը «երրորդ երկրների» հետ, Ղարաբաղի մեկուսացումը, ինչպէս նաեւ տնտեսական փլուզումը:*

*Սակայն մէկ կարեւոր միտում էլ կայ. համանախագահները սկսել են աւելի յաճախ խօսել Համապարփակ համաձայնագրի մասին, որը, ինչպէս յայտնի է, նախատեսում է ղարաբաղեան տարածքների յանձնում եւ անկախութեան հիպոթետիկ հանրաքուէ: Այդ գաղափարն ակտիւօրէն առաջ է մղում Ատրպէյճանը եւ չի ընդունում Հայաստանը, սակայն դատելով նրանից, որ համանախագահները պնդում են, Հայաստանի կարծիքն արդէն չի հետաքրքրում շահագրգիռ կողմերին: Կարգաւորումն էլ տեղափոխւում է Ռուսաստանի, Ատրպէյճանի ու Թուրքիայի «ցանկութիւնների» շրջանակ՝ առանց Հայաստանի շահերը հաշուի առնելու:*

*Ինչու՞ են համանախագահները ցանկանում հնարաւորինս շուտ լուծել ղարաբաղեան հակամարտութիւնը: Բանն այն է, որ արեւմուտքը փաստաթուղթ է մշակում, որը պէտք է փոխարինի Հելսինկիի Եզրափակիչ ակտին, որը 1975 թուականին դրուել է Եւրոպայի անվտանգութեան համակարգում: ԵԱՀԿ ԽԱ նախագահ Իլկա Կաներվան յայտարարել է, որ Ռուսաստանը կազմակերպութեանը «էքզիստենցիալ ճգնաժամի» մէջ է մտցրել՝ խախտելով Ուկրաինայի ինքնիշխանութիւնն ու տարածքային ամբողջականութիւնը: Այժմ ԵԱՀԿ-ը պէտք է մեթոդներ մշակի Հելսինկիի ակտի սկզբունքների խախտման նոր դէպքերի համար:*

*Ղարաբաղեան կարգաւորումը նոյնպէս իրականացւում է այդ սկզբունքների՝ տարածքային ամբողջականութեան, ինքնորոշման իրաւունքի եւ ուժի կիրառումից հրաժարուելու վրայ: Եթէ Հելսինկեան ակտը չեղեալ արուի, ղարաբաղեան կարգաւորումը կը մնայ առանց հենքի: Վտանգ կայ, որ ինչ-որ մէկը միանձնեայ պատասխանատուութիւն կը վերցնի կարգաւորման համար:*

*«ԼՐԱԳԻՐ»*

# Անշրջելի Չէ

*ԱՐՄԻՆԷ ՕՀԱՆԵԱՆ*

*Դեկտեմբերի 9-ը Կոռուպցիայի դէմ պայքարի միջազգային օրն է: Մեզ համար շատ արդիական ու «յիշելու» արժանի մի օր: Եթէ չեմ սխալւում՝ Հայաստանում այս օրը որեւէ կերպ չնշեցին, իսկ իշխանութիւնն ընդհանրապէս նախընտրեց «մոռանալ», դե՝ ո՞վ է իր թերութիւնների մասին սիրում բարձրաձայնել: Բայց, այ, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնը հանդէս եկաւ յայտարարութեամբ, որտեղ համեմատական վերլուծութիւն էր կատարել այլ երկրների եւ նախորդ տարուայ վիճակի կապակցութեամբ:*

*Եւ որքան էլ այն մխիթարական չէր, յայտարարութիւնն աւարտել էր լաւատեսութեամբ. «Որքան էլ պարադոքսալ հնչի, կոռուպցիայի ներկայ իրավիճակը Հայաստանում անդառնալի չէ: Վերջին շրջանի տնտեսական վիճակի վատթարացումը, մեծ չափերի հասած արտագաղթն ու դրամի սրընթաց արժեզրկումը ոչ թէ գործող համակարգի «առանձին թերութիւններն» են, այլ, աւելի ճիշդ, դրա անգործունակութեան դրսեւորումները: Գործող համակարգի ինստիտուցիոնալ «յենասիւներից» են սեփականութեան չպաշտպանուածութիւնը, մոնոպոլիզմը ե՛ւ տնտեսական, ե՛ւ քաղաքական ոլորտներում, թոյլ դատական համակարգն ու պետական կառավարման նորմի վերածուած կոռուպցիան:*

*Այս պայմաններում գտնուող ցանկացած երկիր արագօրէն յայտնւում է պետականութեան կորստի ու գործող համակարգի ապամոնտաժման երկընտրանքի առաջ: Պետականութեան կորստից խուսափելու եւ երկրորդ ուղին ընտրելու դէպքում, ի թիւս այլ բարեփոխումների, արմատական քայլեր պէտք է ձեռնարկել նաեւ կոռուպցիայի էական կրճատման ուղղութեամբ: Առաջին՝ կարեւորագոյն քայլերը պէտք է լինեն քաղաքականութեան եւ բիզնեսի սերտաճման յաղթահարումը, տնտեսական եւ քաղաքական ոլորտներում մենաշնորհների վերացումը, իրապէս անկախ դատական համակարգի կայացումը եւ պետական հաստատութիւնների նկատմամբ վստահութեան վերականգնումը»:*

*«ՀՐԱՊԱՐԱԿ»*


*ՄԱՍԻՍ* ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**

Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $80.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

### Ազատամարտիկները Ենթարկւում են Բռնութիւնների

Իշխանափոխութիւն պահանջող ազատամարտիկները իշխանութիւնների կողմից հետապնդումների են ենթարկւում, «Ազատութեան» հետ զրոյցում նման կարծիք յայտնեցին «Ազատամարտիկների Դաշինք»-ի վարչութեան անդամները:

Նրանք պատմեցին, որ երկու օր առաջ յարձակման են ենթարկուել «Արաբօ» Ջոկատի հրամանատար Մանուէլ Եղիազարեանը եւ «Ապարան» Ջոկատի հրամանատար Ռազմիկ Պետրոսեանը, իսկ այսօր առաւօտեան չորս դիմակաւորուած անձինք ծեծի են ենթարկել «Ազատամարտիկների Դաշինք»-ի վարչութեան անդամ Սուրէն Սարգսեանին: Վերջինս գանգուղեղային վնասուածքով գտնւում է «Իզմիրլեան» բժշկական կենտրոնում:

«Առաւօտեան դուրս եկայ իմ առօրեայ գործերով, ընկերներս փողոցում կանգնած էին, մի քանի մետր մայթով քայլեցի, մեքենայի միջից ֆորմով, դիմակներով տղաներ դուրս եկան՝ չորս հոգի, ու յարձակուեցին: Ասացին՝ դու Թոխմախի Մհերին ճանաչո՞ւմ ես, որ իրեն բան ես ասում: Ձեռքները բաներ կային, ես հասկացայ, որ ուզում են գլուխս ջարդել, բռնեցի գլուխս: Ընկել էի, իրենք պպզել էին, գլխիս էին խփում», - «Ազատութեան» հետ զրոյցում պատմեց Սարգսեանը:

Բժշկական կենտրոնի նեյրովիրաբուժական բաժանմունքի վարիչ Վահրամ Համբարձումեանն ասաց, որ ազատամարտիկը գլխուղեղի ցնցում է ստացել, վիրահատութեան կարիք չունի, կեանքին վտանգ չի սպառնում:

«յայտնաբերուել է գանգուղեղային վնասուածք, դիմային ոսկրերի կոտրուածք՝ ձախից: Նախնական ախտորոշումը՝ գլխուղեղի ցնցում: Ստանում է կոնսերվատիւ բուժում, վիրահատական միջամտութեան կարիք հիւանդը չունի, ընդհանուր վիճակը կայուն է», - փոխանցեց բժիշկը:

Ազատամարտիկն «Ազատութեան» հետ զրոյցում պնդեց, որ իր հետ պատահածը իշխանութիւններին կողմից ընդդիմախօսներին լռեցնելու փորձ է՝ ընդգծելով, որ չեն վախենում ու յանձնուել եւս չեն պատրաստւում:

Սարգսեանը մէկն է այն տասնեակ ազատամարտիկներից, որոնք մասնակցում էին եռեակի՝ իշխանափոխութիւն պահանջող ցոյցերին:

Ոստիկանութիւնից «Ազատութեանը» փոխանցեցին, որ Սուրէն Սարգսեանի վրայ յարձակման



Ազատամարտ Սուրէն Սարգսեան յարձակման ենթարկուելէ ետք

դէպքի կապակցութեամբ հետաքննութիւն է կատարւում:

Երկու օր առաջ, իրենց խօսքով, յարձակման ենթարկուած Մանուէլ Եղիազարեանն ու Ռազմիկ Պետրոսեանը նոյնպէս ընդգծեցին, որ հետապնդւում են ընդդիմադիր հայեացքների համար:

«Արաբօ» Ջոկատի հրամանատարը պատմեց, որ իրենց վրայ յարձակուողները վէճը սկսել են քաղաքական հարցեր պարզելով:

«Բա, մենք ձեր կողքի կուպեում հաց էինք ուտում», մեզ էին ասում. «Բա, էդ ի՞նչ էիք խօսում՝ իշխանափոխութիւն էք ուզում անել, Նախագահ էք ուզում փոխել, մեր Նախագահը...»: Ասացինք՝ երիտասարդ, դու ո՞վ ես: Ասաց՝ քաղաքացի: «Մենք էլ ենք քաղաքացի, մենք էլ մեր կարծիքն ունենք, ամէն մարդ իր կարծիքն է արտայայտում», մենք պատասխանեցինք, ու իրենք սկսեցին Ռազմիկին քաշել, վրայ տուեցին, խառնուեցինք իրար, իրար մի լաւ ճանկռեցինք ու եկանք տուն: Սարսափելի բան չի եղել, բայց դա չի նշանակում, որ չէր կարող չլինել: Մենք մնում ենք մեր կարծիքին՝ Հայաստանը պէտք է կարգի գայ, սա մեր հայրենիքն է, մենք վախենում ենք Հայաստան երկիրը կորցնելու համար, ժողովրդի վիճակն օրհասական է», - ասաց Մանուէլ Եղիազարեանը:

Բռնութեան մասին յայտարարող ազատամարտիկները, այդ թւում՝ հիւանդանոցում գտնուող Սուրէն Սարգսեանը ոստիկանութիւն չեն դիմել, ասում են՝ չեն վստահում իրաւապահ մարմիններին:

Այսօր ազատամարտիկները հաւաքուել էին քննարկելու իրավիճակը: Նրանք միաձայն պնդեցին՝ չեն վախենում եւ շարունակելու են իշխանափոխութիւն պահանջել:

### Գագիկ Ծառուկեան. «Համաժողովրդական Շարժումը Իր Ընթացքի Մէջ է»

«Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան ղեկավար Գագիկ Ծառուկեանն Գիւմրիում յայտարարել է, թէ եռեակի հռչակած համաժողովրդական շարժումը «իր ընթացքի մէջ է»:

Վարչապետ Յովիկ Աբրահամեանը, ով Ծառուկեանի հետ խնամիական կապ ունի, օրերս կարծիք էր յայտնել, թէ Ծառուկեանն իշխանափոխութեան չի գնա:

Հարցին, թէ ինչպէս է մեկնաբանում Աբրահամեանի ասածը, Ծառուկեանն արձագանքեց. - «Ինքն այդպիսի բան չի ասել: Ես ուզում եմ, որ դուք թիւրիմացութեան մէջ չգցէք ոչ մէկին: Յովիկ Աբրահամեանն ասել է՝ իմ բարեկամը բարեկամն է: Բայց ես իրա տեղը հո պատասխան չե՞մ տալու: Այնպէս որ, համաժողովրդական շարժումը իր ընթացքի մէջ է, եւ այսօր ես չեմ ուզում քաղաքականութիւնից խօսել... Երբ որ հարկ կը լինի, ես պարզ ամէն ինչը կարճ, կոնկրետ կ'ասեմ: Ամենակարեւորը ես ասել եմ՝ որ Ծառուկեան Գագիկը ինչ որ ասել է, միշտ իր խօսքի տէրն է եղել, եւ Ծառուկեան ազգանունը չի վաճառւում: Դա յատուկ, Աստծու կամօք տրուած է ժողովրդին, դա սրբութեամբ ես պահելու եմ, պահպանեմ»:

Գագիկ Ծառուկեանը իր գիւմրեցի կուսակիցների ուղեկցութեամբ ծաղկեպսակ դրեց երկրաշարժի զոհերի յուշարձանին: Թէպէտ «Բարգաւաճ Հայաստան»-ի անդամ, Գիւմրիի քաղաքապետ Սամուէլ Բալասանեանը յաճախ նշում է, որ քաղաքապետարանն ապաքաղաքական կառոյց է, բայց այսօր աշխատանքային ժամին



«Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան ղեկավար Գագիկ Ծառուկեան

քաղաքապետարանի գրեթէ ողջ աշխատակազմը ուղեկցում էր Գագիկ Ծառուկեանին:

Ծաղկեպսակ դնելուց յետոյ ԲՀԿ-ի ղեկավարն անդրադարձաւ Գիւմրիի խնդիրներին. - «Ես եկել եմ, գլուխ եմ խոնարհում երկրաշարժից անմեղ զոհերի յիշատակին: Սա վէրք է, որ ոչ մի հայ չի կարող մոռանալ... Մենք պէտք է կարողանանք միասնական այնպէս անել, որ մեր երիտասարդ սերունդը երկրաշարժի հետեւանքները չյիշի: Իհարկէ, դա կը լինի այն դէպքում միայն, երբ որ, ասենք թէ, աշխատատեղերը չփակուեն, այլ աշխատատեղերը բացուեն, կը լինի այն դէպքում, երբ որ արտագաղթը կանգ առնի, գնացածները հետ վերադառնան, կը լինի այն դէպքում, որ ոչ թէ ամէն օր կրպակներ խանութներ, գործարաններ փակուեն, այլ ընդհակառակը՝ պէտք է բացուեն: Իսկ այդ բոլորը հնարաւոր է»:

### Մարդու Իրաւունքներին Նուիրուած Երթ Երեւանում

Մարդու իրաւունքների պաշտպանութեան միջազգային օրուան նուիրուած՝ Ազատութեան հրապարակում հանրահաւաք-երթը տեղի ունեցաւ Դեկտեմբերի 10-ին, աւարտուեց Ազատութեան հրապարակում:

NEWS.am-ի թղթակիցը հաղորդում է, որ ՀԱԿ-ի նախաձեռնած խաղաղ երթի մասնակիցները «Պայքար, պայքար մինչեւ վերջ», «Անսերժ, ազատ, անկախ Հայաստան», «Սերժիկ հեռացիր» վանկարկումներով երթով շարժուեցին Մաշտոցի պողոտայով, Ամիրեան, Նալբանդեան, Թումանեան փողոցներով եւ ոստիկանների ուղեկցութեամբ վերադարձան Ազատութեան հրապարակ:

Երթին մասնակցում էին ՀԱԿ խմբակցութեան պատգամաւորներ Գագիկ Ջհանգիրեանը, Լիւդմիլա Սարգսեանը, ԲՀԿ-ական պատգամաւորներ Վահան Բաբեանը, Էլինար Վարդանեանը եւ «Ժառանգութեան» առաջնորդ Րաֆֆի Յովհաննիսեանը:

Ազատութեան հրապարակում ԲՀԿ-ական պատգամաւոր Վահան Բաբեանը յայտարարեց, որ այս հանրահաւաք-երթը ապացոյցն էր իրենց միասնականութեան:

«Այսօր մենք ապացուցեցինք մեր միասնականութիւնը, քայլեցինք Երեւանով եւ մեր շարժման յաջողութեան վրայ կասկածող մարդկանց ցոյց տուեցինք, որ մեր շարժումը անկոտրում է: Փոփոխութիւնների ժամանակն է եկել: Մեզ պառակտել չի լինի, հիասթափեցնել չի լինի: Շատ կարճ ժամանակ յետոյ մեր յաղթանակն ենք տօնելու»,- յայտարարեց Վահան Բաբեանը:

### Կոռուպցիայի Դէմ Պայքարում Հայաստանը Լուրջ Առաջընթաց Չի Արձանագրել

Կոռուպցիայի դէմ պայքարում նախորդ տարիների նման Հայաստանը լուրջ առաջընթաց չի արձանագրել: Այս մասին, Դեկտեմբերի 9-ին, լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշել է «Թրանսփերենսի Ինթերնեյշնլ» միջազգային հակակոռուպցիոն կազմակերպութեան գործադիր տնօրէն Վարուժան Հոկտանեանը: Նրա խօսքով՝ իրավիճակը չի վատացել, սակայն լաւացման մասին վաղ է խօսել, թէեւ կան լաւացման թոյլ նշաններ:

Խօսելով կոռուպցիայի պատճառների մասին, Հոկտանեանն այդ շարքում թուարկել է բիզնեսի եւ քաղաքական վերնախաւի սերտաճումը, տնտեսութեան մոնոպոլիզացիայի բարձր աստիճանը, դատական համակարգի ոչ անկախ լինելը, ինչպէս նաեւ հասարակութեան հանդուրժողական վերաբերմունքը կոռուպցիայի նկատմամբ:

Անդրադառնալով Հայաստանի՝ ԵՏՄ անդամակցութեանը, Հոկտանեանը համոզմունք է յայտնել, որ ԵՏՄ-ին Հայաստանի անդամակցութիւնը կոռուպցիայի առումով լաւատեսութեան հիմք չի տալիս:

Այդուհանդերձ, Հոկտանեանը վստահ չէ, որ եթէ Հայաստանը ԵՄ-ի հետ ասոցացման պայմանագիր ստորագրեր, կոռուպցիայի առումով վիճակը կը լաւանար:

### «Հայաստանում Քաղբանտարկեալներ Չկան»,- Արդարադատութեան Նախարար

Հայաստանում քաղբանտարկեալներ չկան: Այս մասին այսօր՝ դեկտեմբերի 8-ին, «Ազատութիւն» ռադիոկայանի «Ֆէյսբուքեան ասուլիսի» ժամանակ վստահեցրեց արդարադատութեան նախարար Յովհաննէս Մանուկեանը:

Նրա խօսքով՝ մոնիտորինգային որեւէ իրաւապաշտպան կազմակերպութեան կամ որեւէ երկրի քաղաքական զեկոյցներում արձանագրուած չէ, որ Հայաստանում քաղբանտարկեալներ կան:

Դիտարկմանը, թէ Շանթ Յարութիւնեանն ու Վոլոդիա Աւետիսեանը ճաղերի հետեւում յայտնուեցին հենց քաղաքական գործունէութիւն ծաւալելու համար, նախարարը պատասխանեց. «Քաղաքականութիւնը եւ քրէական իրաւունքը տարբեր բաներ են, մարդը կարող է քաղաքական որոշակի գործընթացի մասնակից լինել եւ դրանց մասնակից լինելով՝ թոյլ տալ այնպիսի բնոյթի խախտումներ, որոնք կարող են Քրէական օրէնսգրքի տրամաբանութեան մէջ որակուել՝ որպէս հակաօրինական եւ քրէօրէն հետապնդելի»,- ասաց նա:

## ԼՈՒՐԵՐ

### Հեֆերն. «Հայաստանը Բիզնեսի Համար Պայմանագրային Ուժեղ Հիմքի Կարիք Ունի»



ԱՄՆ դեսպան Ճոն Հեֆերն

*Հայաստանը բիզնեսի համար պայմանագրային աւելի ուժեղ հիմքի ապահովման կարիք ունի: Այս մասին Դեկտեմբերի 10-ին Մարդու իրաւունքների պաշտպանութեան օրուայ առթիւ կազմակերպուած կլոր սեղանի ընթացքում յայտարարել է Հայաստանում ԱՄՆ դեսպան Ճոն Հեֆերնը:*

*Այնուամենայնիւ, ըստ Հեֆերնի, Հայաստանը զգալի առաջադիմել է «Doing Business»-ի վարկանիշում, որը կազմում է Համաշխարհային բանկը: Միեւնոյն ժամանակ, Հայաստանը զիջում է գործնական պայմանագրերին հետեւելու մասով՝ 189 երկրների շարքում մնալով 119-րդը:*

*ԱՄՆ դեսպանատունը կը շարունակի համագործակցութիւնը ՀԿ-ների հետ՝ օրէնքի գերակայութիւն առաջ տանելու համար: «Դժուար է մոռանալ մէկ վատ լուրը, նոյնիսկ եթէ մնացածները լաւն են: Այդ պատճառով էլ երկրում բիզնեսկլիմայի ուժեղ կողմերը նոյնպէս պէտք է առանձնանան», - յայտարարել է դեսպանը:*

*Նա սփիւռքահայերին կոչ է արել բիզնես հնարաւորութիւններ որոնել Հայաստանում՝ նշելով, որ պատասխանը միշտ նոյնն է, բիզնեսը կանխատեսելի գործընկերների եւ վէճերի լուծման արդար համակարգի կարիք ունի: Ճոն Հեֆերնն ընդգծել է, որ դա խօսում է այն մասին, որ մարդու իրաւունքները եւ օրէնքի գերակայութիւնը կարեւոր են ոչ միայն որպէս ինքնուրոյն արժէքներ, այլեւ այն պատճառով, որ դրանք նպաստում են բարգաւաճմանը: Այդպիսով, երկրները, որոնցում գոյութիւն ունի օրէնքի գերակայութիւն, աւելի լաւ են ապրում, արագ զարգանում եւ աւելի շատ արտասահմանեան ներդրումներ գրաւում:*

### Վրացական եւ Հայկական Արժոյթի Փլուզումը

*Վրաստանի արժոյթը դոլարի հանդէպ ընկաւ մինչեւ վերջին 10 տարիների ամենացածր մակարդակի, իսկ հայկական դրամը՝ 2006 թուականից ի վեր ամենացածր մակարդակի: Այս մասին գրում է միջազգային գործարար «Financial Times» պարբերականը:*

*«Ռուսաստանի հարեւաններն առեւտրային կապերի եւ դրամական փոխանցումների միջոցով սերտօրէն կապուած են իրենց նախկին տիրող տնտեսութեան հետ: Երբ ռուբլին ընկնում է, այն ազդում է նրանց արժոյթների վրայ: Ղազախստանն այս տարեսկզբին ստիպուած էր դիմել տենգէի արժեզրկման, երբ ռուբլին առաջին անգամ սկսեց անկում ապրել, իսկ հիմա դա հասաւ նաեւ Հայաստան եւ յատկապէս Վրաստան»,- նշում է հրատարակութիւնը:*

*Պարբերականի համաձայն, «Standard Bank»-ի աշխատակից Թիմոթի Էշն այդ առիթով ասել է. «Ռուսաստանը կարեւոր առեւտրային գործընկեր է այդ երկու երկրների համար, քանի որ երկուսն էլ օգտւում են աշխատանքային միգրանտների դրամական փոխանցումներից: Դէպի Ռուսաստան արտահանումը նոյնպէս բաւական զգալի է երկուսի համար էլ»:*

*«Նրանք յոյս ունեն օգուտ քաղել Արեւմուտքի դէմ ռուսական պատժամիջոցներից, սակայն Ռուսաստանում մեծ արժեզրկումն ակնյայտօրէն սպառնում է առեւտրին»,- ընդգծել է Թիմոթի Էշը:*

### Հրանդ Տինքի Սպանութեան Հարցով

*Շարունակուած էջ 1-էն*

*ալ սերտ կապեր ունէին Միացեալ Նահանգներու մէջ բնակող կրօնական գործիչ Ֆեթհուլա Գիւլենի ղեկավարած «Հիզմեթ» շարժման հետ:*

*Ներկայիս Գիւլենի եւ Թուրքիոյ նախագահ, նախկին վարչապետ Ռեճէփ Էրտողանի յարաբերութիւնները խիստ սրուած են, սակայն Տինքի սպանութեան ժամանակ «Հիզմեթ»-ը իշխող իսլամիստներու գլխաւոր աջակիցներէն մէկն էր: Գիւլենականներու եւ Աքիւրեքի սերտ կապերու մասին տակաւին 2007-ի Յունուարին՝ Տինքի սպանութիւնէն մի քանի օր առաջ, գրած էր թրքական «Ճումհուրիյէթ» թերթը: Իսկ, Սամասթի ցուցմունքներուն մէջ յիշատակուած Ռամազան Աքիւրեք մի քանի ամիսէ բանտարկուած է: Ան եւս, երեք տասնեակ այլ ոստիկաններու հետ միասին, կը մեղադրուի 2008-2010 թուականներուն իշխող «Արդարութիւն եւ Զարգացում» կուսակցութեան բարձրաստիճան ներկայացուցիչներուն անօրինականօրէն գաղտնալսելու մէջ:*

*Վերադառնալով Օգիւն Սամասթի ցուցմունքներուն, կը յայտնուի, որ ան դատարանէն ներս մէջբերած է նաեւ Տինքի սպանութեան գործով ներգրաւուած եւս մէկ առանցքային մեղադրեալի՝ ցմահ ազատազրկման դատապարտուած Եասին Հայալի՝ Տինքի սպանութենէն առաջ Տրապիզոնի մէջ ըսած հետեւեալ խօսքերը. - «Մենք շատ լուրջ աջակցութիւն ունինք»:*

*«Եասինը սափրիչի խանութին մէջ ատրճանակը դրաւ իմ գրպանը եւ բացատրեց. - «Կը Կրակես ուղիղ անոր վրայ: Ոստիկանութիւնը քեզի կը ձերբակալէ Սամսոնի մէջ: Եթէ քեզի բռնեն Տրապիզոնի մէջ, քու ղեկավար Ռամազանին [Աքիւրեքին] վտանգի տակ կը դնես»:*

*«Ռամազանը, նոյնիսկ Իսթանպուլի ոստիկանութեան ղեկավարը տեղեակ են այս ամէնուն: Անոնք կ'աջակցին մեզի, դուն հերոս պիտի դառնաս», - ըսած է Եասին Հայալ Օգիւն Սամասթին սպանութենէն մի քանի օր առաջ:*

*Սամասթ դատարանին մէջ պնդած է, թէ ինք պատրաստ էր շատ աւելի կանուխ պատմել բարձրաստիճան ոստիկաններու՝ Տինքի սպանութեան հետ ունեցած առնչութեան մասին, սակայն իրեն ստիպած են լռել:*

*«Երբ ես յայտարարեցի, թէ պիտի խօսիմ դատական երկրորդ նիստի ժամանակ, բանտին մէջ ենթարկուեցայ յարձակման, ինծի ահաբեկեցին: Բացի այդ, ահազանգեր եղան ինծի տեղափոխող մեքենային մէջ եւ դատարանին մէջ տեղադրուած ռումբերու մասին», - ըսած է Սամասթ՝ աւելցնելով. - «Այսօր սակայն ես այլեւս չեմ վախնար»:*

### Կենտրոնական Բանկի Նախագահի Համաձայն Դրամի Արժեզրկման Պատճառները Արտաքին են



ՀՀ Կենտրոնական Բանկի նախագահ Արթուր Ջաւադեան

*Կենտրոնական բանկի նախագահ Արթուր Ջաւադեանն բացատրեց վերջին մէկ ամսուայ ընթացքում տեղի ունեցած դրամի արժեզրկման պատճառները: Նա ընդգծեց, որ «չոկը եկել է դրսից», եւ այն, ինչ կատարուեց, տնտեսական տեսութիւններից դուրս էր: Վերջինս նշեց, որ պատճառներից մէկը համաշխարհային զարգացումներն են:*

*«ԱՄՆ տնտեսութեան զարգացումների ներքոյ՝ զարգացող եւ զարգացած երկրները գրանցեցին իրենց արժոյթների արժեզրկումը: ԱՄՆ տնտեսութեան աճի վերականգմանը զուգընթաց, վերջին մէկ տարուայ ընթացքում ԱՄՆ-ի դաշնային պահուստների համակարգը դադարեցրեց քանակական ընդլայնման իր ծրագիրը, որի միջոցով ամսական 85 մլրդ ԱՄՆ դոլարի իրացուելիութիւն էր ներարկւում պետական արժեթղթերի գնումների միջոցով:*

*Երկրորդը տարածաշրջանային զարգացումներն են: ԱՊՀ երկրների վրայ այս ամէնի ազդեցութիւնը բազմապատկուեց տարածաշրջանային աշխարհաքաղաքական խնդիրներով եւ նաւթի գների անկմամբ: Այս երկու գործօնները բերեցին ՌԴ տնտեսական աճի կտրուկ կրճատմանը եւ ռուբլու փոխարժէքի արժեզրկմանը»,-ասաց նա:*

*Այնուհետեւ Արթուր Ջաւադեանն անդրադարձաւ ներքին զարգացումներին եւ նշեց, որ իրավիճակի սրացմանը նպաստեց Հայաստանի ներսում տնտեվարող սուբիեկտների այն վարքագիծը, որ ազատ դրամական եւ վարկային միջոցները սկսեցին վերածել արտարժոյթի՝ դրա հետեւանքով դրամային արտայայտութեամբ լրացուցիչ օգուտներ ստանալու ակնկալիքով:*

*«Նման գործողութիւնները պարունակում են մեծ ռիսկեր, որոնք ոչ մասնագէտ անձինք չեն կարող ճշգրիտ գնահատել: Ամբողջ աշխարհի փորձը ցոյց է տալիս, որ խուճապային վարքագիծը բերում է նրան, որ արժոյթի շուկայում մեծանում է գնման եւ վաճառքի փոխարժէքների տարբերութիւնը: Նման տատանողական իրավիճակներում խորհուրդ ենք տալիս զերծ մնալ անհարկի փոխարկումներից»,-ասաց նա:*

### «ՀՀ-ում Մարդու Իրաւունքների Խախտումները Համակարգային բնոյթ են կրում»

*Հայաստանի Հանրապետութիւնում մարդու իրաւունքների խախտումները համակարգային բնոյթ են կրում: Այդ մասին նշուած է «Իրաւունքների պաշտպանութիւն առանց սահմանների» ՀԿ-ի հաղորդագրութեան մէջ, որն ամփոփել է իրենց կողմից քաղաքացիներին տրամադրուած իրաւախորհրդատուութեան արդիւնքները:*

*ՀԿ-ի տարածած հաղորդագրութեան մէջ ասւում է.*

*«Թէեւ գործող օրէնսդրութիւնը տեսականօրէն կարող է ապահովել անձի իրաւունքների պաշտպանութիւնը, սակայն օրէնսդրութեան հիման վրայ ձեւաւորուած պրակտիկան եւ արդիւնաւէտ կառավարման մշակոյթի բացակայութիւնը հիմք են հանդիսանում իրաւունքների շարունակական խախտումների համար: Միւս կողմից պետական գերատեսչութիւնների գործունէութեան շրջանակներում դրսեւորուող տարբեր չարաշահումները եւ դրանց համարժէք պատասխանատուութեան բացակայութիւնը ձեւաւորում են մարդու իրաւունքների խախտումները համակարգային բնոյթը:*

*Հարկ է նշել նաեւ, որ դատական համակարգում առկայ խնդիրների հետեւանքով նոյնիսկ այն դէպքերում, երբ առկայ է դատական կարգով խախտուած իրաւունքի վերականգնման հաւանականութիւնը, այդ դէպքերում եւս պետական կառավարման մարմինների անգործութիւնը կամ ոչ իրաւաչափ գործունութիւնը չի հանգեցնում իրաւունքի խախտումների կանխարգելմանն ու վերականգնմանը:*

*Միւս կողմից, դեռեւս բաւականին ցածր է քաղաքացիների իրաւագիտակցութիւնը, եւ իրաւունքների խախտումների մեծ մասը տեղի է ունենում հենց այն պատճառով, որ քաղաքացին չունի պատկերացումներ իր հիմնարար իրաւունքների եւ ազատութիւնների վերաբերեալ: Այս մասին է վկայում նաեւ այն հանգամանքը, որ իրաւախորհրդատուութեան համար քաղաքացիների զգալի մասը կազմակերպութեանը դիմել է այն դէպքերում, երբ արդէն անարդիւնաւէտօրէն սպառել է գոյութիւն ունեցող քրէական, վարչական եւ դատական պաշտպանութեան գործող միջոցները:*

*Այս հանգամանքը հնարաւորութիւն է տուել գնահատել պետական մարմնի՝ քաղաքացիների խնդիրների լուծմանն ուղղուած գործողութիւնների իրաւաչափութիւնը եւ դուրս բերել գոյութիւն ունեցող համակարգային եւ օրէնսդրական այնպիսի խնդիրներ, որոնց առկայութիւնը, ցաւօք, հիմք է հանդիսանում իրաւունքների խախտումների շարունակականութեան համար»:*

# ՖԱԹԻՀ ԱՔԻՆԻ «ԽԶՈՒՄ»Ը ՑՈՒՑԱԴՐՈՒԵՑԱՒ ԹՈՒՐՔԻՈՅ ՄԷՋ

Դեկտեմբեր 2-ի իրիկունը հոգեկան նոր «փորձութեան» օր մըն էր բոլոր անոնց համար, որոնք հրաւիրուած էին մասնակցելու Թրքական ծագումով գերման յայտնի բեմադրիչ Ֆաթիհ Աքինի «Խզում» («Տը Քաթ») ժապաւէնի կալա-ներկայացման: Այս ժապաւէնին նիւթը անգամ մը եւս մեզ դէմ յանդիման պիտի թողուր հայ ժողովուրդի մօտիկ անցեալի պատմութեան ողբերգական ու տառապալից էջերուն հետ, կրկին ու կրկին պիտի կոտտացնէր մեր սիրտերը եւ պատճառ պիտի դառնար, որ մենք այդ ժապաւէնի գլխաւոր հերոսի անձին ու իր ընտանիքի ողբերգական պատմութեան մէջ մեր հոգիի խորերէն ողբայինք նաեւ մեր բի՜ւր նահատակներու դժբախտ ճակատագիրին վրայ, ապրէինք հազարաւոր հայրենակիցներ կորսնցնելու մեծ ու անդարմանելի ցաւը ու մեր սիրտերուն մէջ «խունկ վառէինք» անոնց անթառամ յիշատակին:




«Խզումը» ժապաւէնի համաշխարհային կալան տեղի ունեցած էր 31 Օգոստոսին, Վենետիկի շարժապատկերի միջազգային փառատօնին ընթացքին, ապա ցուցադրուած էր եւրոպական բազմաթիւ երկիրներու մէջ, իսկ այժմ Թուրք արուեստասէրներու համար է որ առիթ կը ստեղծուէր՝ անձնական մօտեցումով, անձնական ներաշխարհի տեսանկիւնէն գլուխ գլխի մնալու այն ոդիսականին հետ, որուն դատապարտուած էր այս հոյակապ ժապաւէնի հերոսը՝ Նազարէթ Մանուկեանը: Ժապաւէնը Թուրքիոյ շարժապատկերի սրահներուն մէջ պիտի սկսի ցուցադրուիլ 5 Դեկտեմբերին, իսկ «Քանիոն», երեկոյեան ալ Նշանթաշը «Սիթիգ» հանրախանութներու շարժապատկերի սրահներուն մէջ կայացան կալա-ցուցադրութիւն ները: Հոն էին բեմադրիչը՝ Ֆաթիհ Աքին, դերասաններէն Գէորգ Մալիքեանը, Պարթու Քիւչիւքչաղլայեանը, Հինտի Զահրան, որոնք ժապաւէնի մեծադիր գովազդին առջեւ լուսանկարուեցան, ապա Ֆաթիհ Աքին խօսեցաւ ժապաւէնի գեղարուեստական արժէքին մասին:

Հրաւիրեալներուն մէջ կը գտնուէին շարժապատկերի յայտնի քննադատներ, լրագրողներ, յառաջադէմ քաղաքագէտներ, դերասաններ, որոնց եւս, հայ հրաւիրեալներու նման, հոգեկան փորձութիւն կը սպասուէր, ի տես շարժապատկերի այն դրուագ-ներուն, որոնք 1915-ի տարա-գիրներու տառապանքը կը պատմէին գաղթի ու աքսորի ճամբուն վրայ:

Ծանօթ է, որ ամիսներէ ի վեր շատ բան գրուեցաւ «Խզում»ին մասին եւ թէ՛ բեմադրիչը, թէ՛ շարժապատկերի արտադրիչները մեծապէս քննադատուեցան ազգայնապաշտ շրջանակներու կողմէ: Այո՛, անկարելի է առանց յուզումի ու ցաւի, առանց ափսոսանքի ու ներքին տուայտանքներու դիտել ժապաւէնը: Մանաւա՛նդ Թուրք հասարակութեան համար, վստահաբար անկարելի է նաեւ առանց ինքնահաշուեյարդարի, առանց զգացականութեան, առանց ժապաւէնի հերոսի ոդիսականին հետ հաղորդ մնալու՝ հետեւիլ ժապաւէնի ցուցադրութեան ու բաժնուիլ սրահէն: Այո՛, Ֆաթիհ Աքին շատ համարձակ ու խիզախ իրագործում մը կատարած է, ու այս տեսակէտէն՝ ծափահարելի է իր բարձր անհատականութիւնը, որովհետեւ բեմադրիչը անդրադարձած է խիստ կարեւոր հարցի մը. Թուրք ժողովուրդին համար իր պատմական անցեալին հետ հաշուեյարդար տեսնելու անհաճոյ ու միշտ բանավէճի ենթակայ նիւթին:

Ի՞նչ է ժապաւէնին նիւթը: 1915 Թուականի Մարտինի մէջ է որ կը սկսին դէպքերը: Գիշեր մը, օսմանեան զինուորներ քաղաքի բոլոր հայ այրերը կը հաւաքեն ու անոնց հետ միասին իր ընտանիքէն կը փրցնեն նաեւ դարբին Նազարէթ Մանուկեան անունով գլխաւոր հերոսը, որուն ոդիսականը կը սկսի գաղթի ճամբուն վրայ: Նազարէթ երկուորեակ երկու աղջիկներու՝ Արսինէի ու Լուսինէի, հայրն էր. կինը՝ Ռաքել ու աղջիկները, ամբողջ ընտանիքին հետ միասին կը քշուին դէպի Տէր Զօրի անապատը, հազարաւոր տեղահանուածներու հետ միասին: Ժապաւէնի առաջին հատուածը շատ ազդու տեսարաններ ունի. գլխաւոր հերոսի եւ իրեն հետ միասին ձերբակալուած մարտինցիներու տառապալից օրերու ծանր ապրումները, սպանութեան դրուագը, երբ իր բոլոր ընկերները վայրագօրէն կը գլխատուին, սակայն իր ոճրագործին ձեռքը չ՚երթար սպաննելու զինք: Նազարէթ Մանուկեան ծանրօրէն կը վիրաւորուի, բայց կը փրկուի իր դահիճին՝ Մեհմետի կողմէ, որ մարդասիրական մօտեցումով զինք կը հանէ այդ վայրէն: Մանուկեանի ձայնալարերը կը վնասուին ու այլեւս չի կրնար խօսիլ, բայց ան ապրելու եւ ընտանիքը գտնելու մեծ վճռակամութեամբ կը բռնէ տարագրութեան ու որոնումի ճամբան:

Յետագայ տեսարանները կը շարունակուին Սուրիոյ, յետոյ Քուպայի ու Ամերիկայի մէջ, երբ հերոսը կը տեղեկանայ, թէ իր դուստրերը ողջ են: Դէպքերու գնացքը այս անգամ կը փոխէ իր աշխարհագրութիւնը եւ Նազարէթի ոդիսականը յա մառ պայքարի շունչով կը շարունակուի ամերիկեան ափերուն վրայ:

Հո՛ն է որ, ի վերջոյ, Նազարէթ Մանուկեան կը գտնէ իր երկուորեակներուն հետքերը եւ կը կայանայ «մեծ հանդիպումը»:

Նազարէթ, որ եօթը տարի շարունակ փնտռտուքի մէջ էր, կը գտնէ իր երկուորեակ աղջիկներէն մէկը՝ Լուսինէն, որ կաղ մնացած էր գաղթի ճամբուն վրայ, եւ եօթնամեայ դադարէ ետք, իր կոկորդէն կ՚ելլէ դստեր անունը: Գալով միւս աղջկան՝ Արսինէին, ան դժբախտաբար մեռած էր վարակի մը հետեւանքով ու հօրը կը մնար միայն դստեր պաղ շիրիմը համբուրել օտար այդ երկրի օտար գերեզմանատան մը մէջ:

Ընդհանրապէս ժապաւէնը կարելի է երկու մասի բաժնել: Առաջին մասը հայ ժողովուրդին ցաւը, իսկ երկրորդ բաժինը, շարժապատկերային արուեստի տեսանկիւնէն՝ յոյսի զգացումն է որ կը ցոլացնէ: Նոյնիսկ ամէնէն վայրագ ու դաժան տեսարանները հաւասարակշռուած ձեւով մատուցուած են. դերեր ունին Արսինէ Խանճեան, Սիմոն Աբգարեան, Գէորգ Մալիքեան, կը լսուին նաեւ հայկական խօսակցութիւններու պատառիկներ ու մեղեդիներ:

Վերջաւորութեան, ամբողջ սրահը ծափահարութիւններով իր գնահատանքը յայտնեց բեմադրիչ Ֆաթիհ Աքինին, որ իր կարգին հրապարակաւ շնորհակալութիւն յայտնեց «Անատոլու Քիւլթիւր» հիմնարկի տնօրէն Օսման Քաւալային եւ իր քանի մը ընկերներուն, Թուրքիոյ մէջ ժապաւէնի ցուցադրութիւնը ապահովելու համար:

Ն. Ս.

# ՀՀ ԴԵՍՊԱՆ ԴՈԿՏ.ԱՐՇԱԿ ՓՈԼԱՏԵԱՆ ԿԸ ԴԱՍԱԽՕՍԷ ԴԱՄԱՍԿՈՍԻ ԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՄԷՋ



Համագործակցութեամբ Դամասկոսի մէջ ՀՀ դեսպանատան, Կիրակի 7 Դեկտեմբեր 2014-ին Դամասկոսի Համալսարանին մէջ բացումը կատարուեցաւ հայկական մշակութային օրերու, «Լեզուներու բարձրագոյն ուսումնարան»-ի կազմակերպած «Լեզուներն ու քաղաքակրթութիւնները» միջոցառման ծիրին մէջ, որ ընդգրկած էր նաեւ պարսկական եւ ռուսական մշակութային օրերը:

Ներկայ էին Դամասկոսի Համալսարանի նախագահ Հասսան ալ Քուրտին, ՀՀ դեսպան Դոկտ. Արշակ Փոլատեան, Բանասիրութեան Դեկան դոկտ. Խալետ Հալպունի, «Լեզու ներու բարձրագոյն ուսումնարան»-ի նախագահ Դոկտ. Մեյսաա Սիուֆի, համալսարանի բաժիններու տնօրէններ, Իրանի եւ Ռուսական մշակութային կեդրոններու ներկայացուցիչներ, դասախօսներ, ուսանողներ եւ բազմաթիւ հետաքրքրուողներ:

Հայկական Մշակութային օրերու ծիրին մէջ ՀՀ դեսպան Դոկտ. Արշակ Փոլատեան դասախօսութիւն մը ներկայացուց «Հայաստանը արաբ իսլամական պատմութեան մէջ» վերնագիրով:

Ան անդրադարձ կատարեց Հայաստանի եւ արաբական երկիրներու միջեւ պատմական յարաբերութիւններուն եւ արաբ պատմագիրներու եւ աշխարհագիրներու դերակատարութեան:

Դեսպան Փոլատեան յոյս յայտնեց որ հայկական մշակութային օրերը առիթ պիտի հանդիսանան հայ-սուրիական յարաբերութիւններու ամրապնդման մէջ:

Ապա ցուցահանդէսի բացումը կատարուեցաւ Դամասկոսի Համալսարանի նախագահ Հասսան ալ Քուրտիի եւ ՀՀ դեսպան Դոկտ. Արշակ Փոլատեանի ձեռամբ:

Ցուցահանդէսը կ՚ընդգրկէր հայերէն լեզուի եւ գրականութեան արաբերէն լեզուով գիրքեր, Երեւանի պետական համալսարանի Արեւելագիտութեան Ֆակուլտետի հրատարակութիւններ, հայկական տարազներ, Հայաստանի մասին լուսանկարներ, Մատենադարանին մէջ ցուցադրուած հայկական մանրանկարչութեան նմուշներ եւ արաբերէն լեզուով ձեռագրերու նմուշներ:

Առաջին օրուան օրակարգին մէջ ներկայացուեցան Արեւելագիտութեան մասին ճանաչողական ֆիլմ եւ Սուրիական պատկերասփիւռի կայանի պատրաստած «Հայաստանը՝ երէկ եւ այսօր» ֆիլմը:

Յիշենք, որ հայկական մշակութային շաբաթը կ՚ընդգրկէ հայերէն լեզուի եւ մշակոյթի մասին դասախօսութիւններ, ինչպէս նաեւ ֆիլմերու ցուցադրութիւն եւ հայկական հոգեւոր եւ մշակութային նմուշներու ցուցահանդէս:



# ՎԱԶԳԷՆ ԳԱԼԹԱՔՃԵԱՆ. «ՊԱՏՐԱՍՏ ԵՆՔ ՄԻՇՏ ՕԳՏԱԿԱՐ ԸԼԼԱԼՈՒ ՀԱՅՈՒԹԵԱՆ»



*Հարցազրոյցը վարեց՝*
***ԱՆՈՒՇ ԹՐՈՒԱՆՑ***

*Օրերս Երեւանի մէջ Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեան «Մխիթար Գոշ» մետալով պատուեց Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական վարչութեան անդամ, Հայ-Ամերիկեան խորհուրդի ԱՄՆ Լուիզիանա նահանգի ատենապետ՝ Վազգէն Գալթագճեանը:*

*«Մխիթար Գոշ» մետալը Հայաստանի Հանրապետութեան պետական պարգեւներու մէջ իր ուրոյն տեղը ունի: Ան կը շնորհուի ակնառու պետական ու հասարակական-քաղաքական գործունէութեան, ինչպէս նաեւ՝ դիւանագիտութեան, իրաւագիտութեան ու քաղաքագիտութեան ասպարէզներուն մէջ եղած նշանակալի ծառայութիւններու համար:*

*Այս տարի ԱՄՆ Լուիզիանա նահանգի ծերակոյտը միաձայնութեամբ ընդունեց բանաձեւ մը, որուն միջոցաւ դատապարտեց Ատրպէյճանի հակահայկական ծրագիրները եւ կոչ ուղղեց Ատրպէյճանի կառավարութեան՝ ստիպել պաշտօնական Պաքուն՝ պատասխանատուութեան ենթարկելու յանցաւորները: Ասիկա եղաւ նման բովանդակութեամբ առաջին բանաձեւը ԱՄՆ-ի մէջ, որ կը վաւերացուի պետական որեւէ կառոյցի կողմէ:*

*Իսկ 2013 Թուականին մէկ այլ բանաձեւով Լուիզիանայի ծերակոյտը ճանչցաւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան անկախութիւնը՝ դառնալով ԱՄՆ չորրորդ նահանգը, որ ճանչցած է ԼՂՀ անկախութիւնը: Լոպպիստական այս հսկայ աշխատանքի ետին կանգնած է մեր հայրենակից Վազգէն Գալթագճեանը, որ նահանգի ճանչցուած դէմքերէն է եւ մեծ վստահութիւն կը վայելէ ծերակուտական ճիւղին Միւրելի եւ նահանգի այլ պաշտօնեաներու կողմէ: Վազգէն Գալթագճեանին հանդիպեցայ Երեւանի մէջ գտնուող Ս.Դ.Հ.Կ.-ի գրասենեակին մէջ, ուր ունենցանք զրոյց մը.*

- Պարոն Գալթագճեան, ե՞րբ տեղափոխուեցաք Լուիզիանա:

*- 1977 Թուականին տեղափոխուեցանք եւ արդէն 36 տարի է՝ Լուիզիանա նահանգի մայրաքաղաքը՝ Պաթոն Ռուժ կը բնակիմ: Բնիկ դամասկոսցի եմ, իմ մայրս լիբանանցի է, հայրս՝ դամասկոսցի: Լուիզիանա հաստատուեցանք եւ ճաշարանի գործով զբաղեցանք, մինչ այսօր:*

- Իսկ կուսակցական գործունէութիւնը որքանո՞վ տեղ ունի Ձեր կեանքին մէջ:

*- Վերջին տասնհինգ տարիները կուսակցական գործերով զբաղած եմ, ասկէ վեց տարի առաջ Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական վարչութեան անդամ ընտրուեցայ եւ կուսակցական գործունէութիւն կը ծաւալեմ տարբեր հայագաղութներու մէջ: Լուիզիանա նահանգին մէջ մեր կուսակցական անդամներուն Թիւը քիչ է, բայց մենք կը հետեւինք մեր Վարիչ Մարմնին, որ Գալիֆորնիա կը գտնուի՝ Լոս Անճելըս եւ կուսակցական լայն գործունէութիւն կը ծաւալենք:*

- Ինչպէ՞ս յաջողեցաք հասնիլ արդիւնքներու՝ Լուիզիանայի ծերակոյտին մէջ:

*- Երկու բանաձեւերու յաջողութիւնը տարիներու աշխատանքի արդիւնք է: Նախ, այս ամէն ինչը չէր ըլլար, եթէ չ՚ըլլային իմ անձնական կապերս՝ նահանգի ղեկավարութեան, պաշտօնեաներու, ազդեցիկ գործիչներու հետ: Իսկ այդ կապերը հաստատուած են տարիներու ընթացքին: 1977-ին, երբ մեր ընտանիքը տեղափոխուեցաւ ԱՄՆ Լուիզիանա նահանգը, մենք ոչինչ գիտէինք ո՛չ տեղի բնակչութեան, ո՛չ սովորութիւններու մասին, լեզուն ալ կարգին չէինք գիտեր: Շատ-շատ դժուարութիւններ յաղթահարեցինք, մինչեւ հաստատուեցանք, գործ հիմնեցինք: Այսօր Լուիզիանայի մայրաքաղաք Պաթոն-Ռուժի մէջ հայկական անունով եօթը ճաշարան ունինք (ճաշարանները կը կրեն հօրս անունը՝ «Սերոբ»): Այդ ճաշարաններուն մէջ ալ ծանօթացած եմ նահանգի ազդեցիկ մարդոց: Անոնք սկիզբը պարզ մարդիկ էին կամ սովորական փաստաբաններ, յետոյ դարձան դատախազներ, անուանի փաստաբաններ, ղեկավարներ: Տարիներով պատմած եմ հայերու, մեր ժողովուրդի անցած ճանապարհի մասին, բազմաթիւ նիւթեր, գիրքեր տուած եմ կարդալու, հարիւրաւոր հանդիպումներ ունեցած եմ: Իմ ամէնօրեայ աշխատանքս տարիներով անոնց աչքին առջեւ էր: Այդ պայմաններուն մէջ էր, որ մեր առաջարկած երկու բանաձեւերը յաջողութեամբ ընդունուած են:*

- Ինչպիսի՞ն եղած է երկու պարագային ատրպէյճանական լոպպինկի հակազդեցութիւնը:

*- 2013-ին ատրպէյճանական լոպպինկը բաւականին ջանք թափեց, որ ԼՂՀ անկախութիւնը ճանչնալու բանաձեւը չընդունուի, բայց յաջողութիւն չունեցաւ, որովհետեւ անոնք ծերակուտականին հանդէպ շատ յարձակողական մօտեցում դրսեւորեցին, իրենց ձեւը սովորաբար յարձակողական է, ինչը, բնականաբար, կը դառնայ վանողական : Անցեալ տարուան բանաձեւը անձամբ ծերակուտականը ներկայացուց, ինչը ի նպաստ մեզի եղաւ: Բանաձեւով ոչ միայն Լուիզիանան ճանչցաւ ԼՂՀ անկախութիւնը, այլ միաժամանակ Միացեալ Նահանգներու նախագահին եւ Քոնկրէսին կոչ ըրաւ օժանդակելու զարգացող ժողովրդավարական պետութեան ինքնորոշման եւ ժողովրդավարական անկախութեան:*

*Իսկ այս տարի, երբ մենք ներկայացուցինք Սումկայիթի եւ Պաքուի դէպքերը դատապարտող բանաձեւը, Ատրպէյճանը միեւնոյն ժամանակ մէկ այլ բանաձեւ մը ներկայացուց, որը միտուած էր Լուիզիանա նահանգի եւ Ատրպէյճանի հանրապետութեան կապերու զարգացման: Մենք ոչ միայն Ատրպէյճանի կառավարութիւնը դատապարտող մեր բանաձեւը կրցանք յաջողցնել, այլ հասանք անոր, որ իրենց բանաձեւը դուրս հանուի քննարկումէն:*

*Այսօր ծերակուտականը շատ լաւ տեղեակ է հայ ժողովուրդի պամութենէն: Ան սեւամորթ է, ժամանակին հայերու մասին չէր ալ լսած: Շնորհիւ իր հետ իմ բազմաթիւ հանդիպումներուս՝ արդէն շատ լաւ պատկերացում ունի, թէ ինչո՞ւ մենք կը բնակինք Լուիզիանա եւ ոչ թէ՝ մեր հայրերու ծննդավայրը՝ Արեւմտեան Հայաստան, գիտէ՝ ինչո՞ւ հայերը ցրուած են աշխարհով մէկ, կը տեսնէ, որ մենք ենք այդ ցեղասպանուածներուն Թոռները: Մենք անոր նաեւ կը ներկայացնենք այն հայերուն մասին, որոնք ԱՄՆ-ի մէջ տարբեր ասպարէզներու մէջ մեծ դերակատարում ունեցած են, իսկ անոնց Թիւը քիչ չէ:*

- Ի՞նչ կարեւոր առանձնայատկութիւն ունի լոպպիստական գործունէութիւնը:

*- Պէտք է կարենաս քու հաստատած կապերդ, ծանօթութիւններդ ճիշդ գործածել, եւ այդ մէկը պիտի ընես ոչ թէ մարդոց մտերմութիւնը չարաշահելու օգտին, այլ հասնիս անոր, որ քու դիմացդ գտնուողը անձամբ համոզուի այն հարցին իրաւացիութեան:*

*Ամէնէն կարեւոր գործօնը վստահութիւնն է: Եթէ վստահութիւն չի կրցար շահիլ, ոչինչի կը հասնիս: Ծերակուտականը ինծի հանդէպ ունեցած վստահութեան դիմաց միայն այդպիսի քաղաքական համարձակ բովանդակութեամբ բանաձեւ ներկայացուց եւ ներկայացուց անձամբ ինքը, ինչը ի նպաստ մեզի եղաւ:*

*Բայց միայն մէկ ծերակուտականով չէ, կապերդ շատ պիտի ըլլան, միւս բոլոր պաշտօնեաներուն հետ ալ պիտի կարենաս կապ հաստատել: Քաղաքական գործիչներու հետ աւելի դիւրին է շփուիլ եւ աշխատիլ ոչ թէ պաշտօնական վայրերու մէջ, այլ նոյնպէս աշխատանքէն դուրս:*

- Ինչպէ՞ս է կեանքը Լուիզիանայի մէջ, հայերը ինչո՞վ կը զբաղին հոն:

*- ԱՄՆ-ի հայերու մասին խօսելու ատեն, շատերուն կը թուի, որ հայերը հիմնականը միայն Լոս Անճելըս, Նիւ Եորք, Պոսթըն եւ խոշոր կեդրոններու մէջ են: Բայց այդպէս չէ. ես կրնամ ըսել, որ ԱՄՆ-ի բոլոր նահանգներուն մէջ*

*Շար.ը էջ 20*




# ԹՈՒՐՔԻՈՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԹԱՔՑՈՒՑԱԾ Կ՛ԸԼԼԱՅ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ, ԵԹԷ ԽԱՓԱՆԷ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԳԻԾԸ

***ՅԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆԵԱՆ***
***«Քալիֆորնիա Քուրիըր» թերթի հրատարակիչ եւ խմբագիր***

*Անցեալ շաբաթ Թուրք երեսփոխան մը առաջարկ մը ներկայացուց Թուրքիոյ խորհրդարանին՝ դատապարտելու համար Հայոց Ցեղասպանութիւնը, շարք մը այլ վայրագութիւններ եւ պետական աճաբեկչութեան դրուագներ:*

*Քրտամէտ ժողովուրդներու դեմոկրատական կուսակցութեան անդամ Սեպահաթ Թունճէլ այս փաստաթուղթով կը պահանջէ, որ նախագահ Էրտողան ճանչնայ եւ ներում հայցէ խորհրդարանին մէջ՝ Հայոց Ցեղասպանութեան, Տերսիմի, Մարաշի, Սվազի եւ Զորումի ջարդերուն, 1980 Սեպտեմբեր 12ի զինուորական յեղաշրջումէն ետք զանգուածային կախաղաններուն, ինչպէս նաեւ պետական ահաբեկչութեան պատճառով մարդկութեան դէմ գործուած այլ յանցագործութիւններու համար:*

*Առաջարկուած բանաձեւը նաեւ կը պահանջէ, որ Թուրքիոյ նախագահը այցելէ զանգուածային կոտորածներու վայրերէն մէկը, հրապարակաւ կրկնէ ներողութիւնը եւ Ապրիլ 24ը յայտարարէ պաշտօնական սուգի օր: Մէկ տարուան ընթացքին խորհրդարանը պէտք է ձեւաւորէ ճշմարտութեան յանձնախումբ եւ հրապարակէ այս ոճրագործութիւններուն վերաբերեալ պետական արխիւներուն մէջ պահուած բոլոր փաստաթուղթերը: Նաեւ բարոյական եւ նիւթական փոխհատուցում պէտք է տրամադրուի զոհերու ժառանգորդներուն:*

*Սպասելի է, որ Թուրքիոյ խորհրդարանը մերժէ այս առաջարկին քննարկումը: Ամենայն հաւանականութեամբ, Թունճէլի իրական նպատակը Հայոց Ցեղասպանութեան եւ միւս զանգուածային ջարդերու հարցերուն բարձրացումն է խորհրդարանին մէջ՝ անկախ անոնց արդիւնքէն: Նման օրինագիծի լոկ ներկայացումն իսկ ազգային իրարանցում պիտի յառաջացնէ խորհրդարանին մէջ, լրատուամիջոցներու եւ Թուրք ժխտողականներու շրջանակներուն մէջ: Թունճէլ պէտք է գիտակցի, որ ինք կրնայ զրկուիլ իր երեսփոխանական անձեռնմխելիութենէն եւ մեղադրուիլ Թուրքիոյ քրէական օրէնսգիրքի 301րդ յօդուածով, արգիլուած թեմաներ բարձրացնելուն համար:*

*Ողջունելով Թունճէլի համարձակ եւ յանդուգն առաջարկը՝ հայերը, թուրքերը, քիւրտերը եւ ուրիշներ պէտք չէ մոռնան, որ Թուրքիոյ մէջ առաջին անգամ չէ, որ կը բարձրացուի հայերու տեղահանութեան եւ ջարդերու հարցը: 4 Նոյեմբեր 1918ին, երիտթուրքերու վարչակարգի անկումէն անմիջապէս ետք եւ նախքան Քեմալ Աթաթուրքի կողմէ 1923 թուականի Թուրքիոյ Հանրապետութեան հիմնադրութիւնը, օսմանեան խորհրդարանին մէջ առաջարկ ներկայացուեցաւ Միութիւն եւ յառաջդիմութիւն կոմիտէին գործած ոճրագործութիւններուն վերաբերեալ. «Բնակչութեան մէկ միլիոնը, որոնց միակ մեղքը հայ ազգին պատկանիլն էր, կոտորեցին եւ բնաջնջեցին, նոյնիսկ՝ կիներն ու երեխաները»: Այդ օրերուն ներքին գործոց նախարար Ֆեթհի պէյ պատասխանեց խորհրդարանին՝ ըսելով, որ «կառավարութեան մտադրութիւնն է՝ դարմանել մինչ օրս կատարուած իւրաքանչիւր անարդարութիւն այնքան, որքան միջոցները հնարաւորութիւն տան, վերադարձնել իրենց տուները անոնց, որոնց աքսորած են, եւ հնարաւորինս փոխհատուցել անոնց կրած նիւթական վնասները»:*

*Խորհրդարանական քննչական կոմիտէն անցաւ հաւաքման համապատասխան փաստաթուղթերու, որոնք կը նկարագրէին հայ ժողովուրդի զանգուածային ջարդերուն պատասխանատու մարդոց գործողութիւնները եւ զանոնք յանձնեց Թուրքիոյ ռազմական դատարան: Միութիւն եւ յառաջդիմութիւն կոմիտէի պարագլուխները մեղաւոր ճանչցուեցան հայ ժողովուրդի կոտորածին համար եւ կախաղան հանուեցան կամ դատապարտուեցան երկարատեւ բանտարկութեան: Ռազմական դատարանը Գերմանիայէն պահանջեց Թուրքիոյ վերադարձնել ջարդերու գլխաւոր կազմակերպիչները, որոնք փախած էին երկիրէն: Գերմանիոյ մերժումէն ետք զանոնք հեռակայ կարգով դատեցին եւ մահուան դատապարտեցին:*

*Իր առաջարկը պատմական եւ իրաւական նախադէպերով հիմնաւորելու համար Թունճէլ պէտք է Թուրքիոյ խորհրդարան ներկայացնէ 1918 թուականի խորհրդարանական առաջարկը եւ քննարկումը՝ Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ, որ այդ ժամանակ կը կոչուէր «Հայկական տեղահանութիւններ եւ ջարդեր»: Ան պէտք է նաեւ ներկայացնէ Թուրքիոյ ռազմական դատարաններուն կողմէ ընդունուած մեղադրական վճիռներու պատճէնները: Վերջապէս, Թունճէլ պէտք է խորհրդարանին յիշեցնէ Քեմալ Աթաթուրքի պատմական խոստովանութիւնը, զոր ան ըրած է «Լոս Անճելըս Էկզեմինըր» թերթին մէջ 1926ի Օգոստոս 1ին հրապարակուած հարցազրոյցին մէջ. «Երիտթուրքերու կուսակցութեան այս մնացորդները պէտք է պատասխան տան մեր քանի մը միլիոն քրիստոնեայ հպատակներուն, զորս դաժանօրէն արտաքսեցին իրենց հայրենի օճախներէն եւ կոտորեցին»: Կը համարձակի՞ արդեօք որեւէ Թուրք երեսփոխան ստախօս անուանել արդի Թուրքիոյ հիմնադիրը:*

*Եթէ Թուրքիոյ խորհրդարանը խափանէ Թունճէլի օրինագիծը եւ կանխէ անոր քննարկումը, ապա անիկա բացայայտած պիտի ըլլայ Էրտողանի կառավարութեան՝ ճշմարտութիւնը դիմակայելու սարսափը եւ իր նախորդներուն մեղաւորութեան քողարկումը: Անկախ վերջնական արդիւնքէն՝ այս առաջարկը անսպասելի դրական զարգացում է Հայոց Ցեղասպանութեան հարիւրամեակի նախօրէին եւ որոշ մխիթարութիւն կը բերէ Թրքական վայրագութիւններու զոհերու ժառանգորդներուն:*

*Թունճէլի առաջարկի ներկայացումը Թուրքիոյ խորհրդարան կը համընկնի Պոլիվիոյ ծերակոյտին եւ խորհրդարանին կողմէ Հայոց Ցեղասպանութեան միաձայն ճանաչման հետ: Յատկանշական է, որ այս ճանաչումը ձեռք բերուած է ցեղասպանութեան զուտ բնոյթէն*

---

# ԱԶԳԱՅԻՆԸ՝ ՄԱՐԴԿԱՅԻՆԻՆ ԿՈՂՔԻՆ

***ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱՒԻԹԵԱՆ***

*Կասկած չկայ որ այսօրուայ մեր հայրենի պատասխանատուները լաւ գործ կը տանին կամ կը ցուցաբերեն Հայկական Ցեղասպանութեան եւ Արցախի ապահովութեան հետ առնչուող մեր զոյգ ազգային հարցերուն նկատմամբ: Սփիւռքի նախարարութիւնն ու մեր դեսպանատուները եւս լաւ աշխատանք կը տանին, համախմբելով սփիւռքահայ ուժերը ազգային հարցերը կարգաւորելու եւ համադրելու խնդրին մէջ: Ամէն հայու սիրտ հրճուեցաւ ի տես այն սխրագործութեան, որ կատարեց մեր քաջարի հայրենի բանակի մասնագէտ ջոկատը, թշնամիին ծոցէն դուրս բերելով ջախջախուած ուղղաթիռի հայ սպաներու դիակները: Այս բոլորը գովելի եւ շնորհաւորելի ընթացքի երեւոյթներ են, զոր կարելի չէ անտեսել կամ ստորագնահատել եւ որուն համար մեր հայրենի իշխանութիւնը իրապէս արժանի է ամէն տեսակի գնահատանքի եւ մեծարման:*

*Սակայն ամէն հայ լաւ գիտէ, թէ հայրենի ժողովուրդի արտագաղթը ցաւալի երեւոյթ է, որուն գլխաւոր պատասխանատուն կը նկատուին անգործութիւնն ու քօղարկուած բռնատիրութիւնը:*

*Ատենօք արաբական աշխարհի իշխող դասակարգի ներկայացուցիչները երկար ժամանակ օգտագործեցին եւ շահագործեցին Պաղեստինեան Դատը, որպէսզի ամրապնդեն իրենց դիրքերը եւ պահեն ու պահպանեն իրենց բռնատիրութիւնները: Արդիւնքը եղաւ այն, որ այդ ազգային դատին ոլորտներուն մէջ կորսուեցաւ եւ անտեսուեցաւ մարդկային ընկերութեան հիմնական կարիքներու յառաջխաղացքը եւ միլիոնաւոր մարդիկ աղքատ պահուելով՝ իբրեւ ստրուկ ապրելու ենթարկուեցան:*

*Նոյն բանը կրնայ պատահիլ կամ կարելի է ըսել արդէն կը պատահի այսօր Հայաստանի մէջ, որուն պատճառաւ հայրենի ընդդիմադիր ուժեր ահազանգ կը հնչեցնեն՝ առաջքը առնելու համար նման ողբերգութեան մը: Ոմանք նոյնիսկ յուսախաբ են որ ընդդիմադրութիւնն ալ չունի իսկական փրկութեան ծրագիր եւ թէ անոր նպատակը «դուն ել, ես նստիմ»-ի շահադիտական գաղափարն է:*

*Կան տակաւին «աքթիւիստներ» կոչուած իսկական ընդդիմադիրներ, որոնք իսկապէս մտահոգ են ժողովուրդին այս խղճալի կացութեամբ եւ որպէս նախկին արցախեան մարտի հերոս ազատամարտիկներ՝ վճռած են յաջորդ տարի անպայման յեղաշրջում կատարել: Այդպիսիններուն դէմ արդէն մութ ձեռքեր ու կողմեր ահաբեկչական արարքներով ինքնաշարժ կը պայթեցնեն եւ մահափորձ կը կատարեն: Կ՚ըսուի թէ անցեալ շաբաթ նման արարքներու ենթարկուեցան եօթը աքթիւիսթի ինքնաշարժներ եւ մահափորձ կատարուեցաւ ութերորդ աքթիւիսթի մը դէմ:*

*Յաջորդ տարի Հայկական Ցեղասպանութեան հարիւրամեակն է. համայն հայութեան սիրտը պիտի բաբախէ իր նահատակներուն հանդէպ տածած իր անխախտ սիրով ու յարգանքով եւ ամբողջ մարդկութեան առջեւ ան պիտի ջանայ ցոյց տալ իր պահանջատիրութեան բռունցքուած ուժը:*

*Հայաստանի իշխանութիւններն ու անոնց հակադրուած քաղաքական ընդդիմադիր ուժերը քաջ գիտեն, որ աշխարհի առջեւ աղտոտ լաթեր չեն կրնար փռել գալ տարի՝ հարիւրամեակին առթիւ:*

*Սակայն եւ այնպէս, տօնական օրերու մթնոլորտին մէջ կարելի չէ դնել անոնք, որոնք հիւանդ են ու սուգ ունին իրենց սրտերուն ու հոգիներուն մէջ. անոնք որոնք չեն ուզեր կամ չեն կրնար այլեւս շարունակել ապրիլ աղքատ ու ստրուկ եւ «կորսուիլ, անտեսուիլ ազգային դատերու ոլորտներուն մէջ»: Այս իսկ պատճառաւ, պէտք է որ մեր ազգային ուժերու համախմբումը հարիւրամեակին շուրջ դառնայ նաեւ մեր անգործ ու աղքատ ժողովուրդի մարդկային պէտքերն ու կարիքները հոգացող ազգային համակարգի մը, որուն մէջ հարուստը աւելի չհարստանայ եւ աղքատն ալ աւելի չաղքատանայ:*

*Ազգայինը՝ մարդկայինի կողքին. ա՛յս պէտք է ըլլայ նշանաբանը մեր հայրենի կառավարութեան: Մեր ժողովուրդը, որ ճաշակած է ամէն տեսակի զուլում ու զրկանք օտարի ձեռքին տակ հայ ըլլալու յանցանքով, որ կրցած է պահել իր տունն ու ընտանիքը կարող մարդ ըլլալու իր բազմապիսի շնորհներով, իրաւունք ունի իր հայրենիքին մէջ ազգային եւ մարդկային արժէքներով լեցուն կեանք ունենալու: Իշխանաւորին անօրէն միջոցներով ժողովուրդը իրեն ենթարկելու իշխանաձեւը ապազգային է եւ օտարի պատկեր ունի մեր ազգային յիշողութեան մէջ:*

*Ազգայինը մարդկայինի կողքին՝ խոհեմութեամբ թող կիրարկուի մեր հայրենիքէն ներս, որպէսզի հայ զինուորի եղբայրն ու քոյրը հայրենիքի մէջ մնան, գործ ունենան, եւ հայը իր ապրուստի հոգով հրահրուած չկռուի ու չպայքարի հայու դէմ: Թող մեր յոգնած եւ նահատակ ժողովուրդին յուսալի եւ դէպի յառաջ տանող ներկան նահանջ չճանչնայ՝ յուսալիք դարձած ապագայ սերունդներով:*

---

*մեկնելով, առանց հայկական լոպիական ջանքերու, ինչ որ կը ժխտէ Թրքական սովորական պնդումները, ըստ որոնց՝ երկիրներ կը ճանչնան Հայոց Ցեղասպանութիւնը տեղւոյն հայ համայնքներու ճնշման տակ: Պոլիվիոյ մէջ հայկական համայնք չկայ...*

*Թարգմանեց՝*
***ՌՈՒԶԱՆՆԱ ԱՒԱԳԵԱՆ***



# «ՏԵՂԱՀԱՆՈՒԹԻՒՆ, ԿՐԹՈՒԹԻՒՆ, ՅԱՆՁՆԱՌՈՒԹԻՒՆ» ԽՈՐԱԳՐՈՎ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒՀԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ ՍԻՐԻԱՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Դեկտեմբերի 3-ին կայացաւ «Տեղահանութիւն, կրթութիւն, յանձնառութիւն» խորագրով՝ Հայաստանի բուհերում սովորող սիրիահայ ուսանողների համագումարը, որը կազմակերպուել էր «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» հասարակական կազմակերպութեան կողմից՝ ՀՀ սփիւռքի նախարարութեան հովանաւորութեամբ եւ ՄԱԿ ՓԳՀ հայաստանեան գրասենեակի աջակցութեամբ:

Համագումարին մասնակցում էր ՀՀ սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեանը, ՄԱԿ ՓԳՀ հայաստանեան գրասենեակի ներկայացուցիչ Քրիստոֆ Բիերվիրթը, Մ. Հերացու անուան ԵՊԲՀ ռեկտոր Միքայէլ Նարիմանեանը, ՀԲԸՄ կենտրոնական վարչութեան անդամ Վազգէն Յակոբեանը, «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ նախագահ Լենա Հալաջեանը եւ բուհերի ներկայացուցիչներ:

Ողջունելով համագումարի մասնակիցներին՝ ՀՀ սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեանը շնորհակալութիւն յայտնեց Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեանը եւ «Գալուստ Կիւլպէնկեան» հիմնարկութեանը՝ Սիրիայի քաղաքացիական պատերազմի հետեւանքով Հայաստան տեղափոխուած սիրիահայ ուսանողների վարձավճարները փոխհատուցելու հարցում գործուն աջակցութեան համար:

«Իհարկէ շատ կ'ուզէինք, որ այս համաժողովը տեղի չունենար, եւ մենք Սիրիայի հայ համայնքից ուսանողներ հրաւիրէինք Հայրենիք վերապատրաստման, գիտելիքների խորացման նպատակով,- նշեց նախարար Հ. Յակոբեանը՝ յաւելելով, - ցաւօք այսօր մենք ականատես ենք, թէ ինչպէս են նօսրանում Սիրիայի, Իրաքի եւ Ուկրաինայի հայ համայնքները: Հայաստանը, որպէս համայն հայութեան Հայրենիք, պատրաստ է ընդունել իր զաւակներին: Եւ նրանց հետ տարուող աշխատանքներում առանձնապէս կարեւոր է երիտասարդների՝ մայր հողին կապելու հարցը: Մենք ամէն ինչ պէտք է անենք, որ Հայաստանի բարձրագոյն եւ միջին մասնագիտական հաստատութիւններում սովորող հայ երիտասարդներն իրենց ապագան տեսնեն եւ կ'առուցեն Հայրենիքում»:

Նախարարը, դիմելով համագումարի մասնակից սիրիահայ ուսանողներին, եւս մէկ անգամ շեշտեց, որ 21-րդ դարը գիտելիքի, նորարարութեան եւ գաղափարի դար է, ուստի առաւել քան երբեւէ կարեւոր է լաւ սովորելը, մրցունակ մասնագէտ դառնալը:

Գերատեսչութեան ղեկավարը սիրիահայ ուսանողներին կոչ արեց ակտիւացնել բուհերում ուսանողների խորհուրդների աշխատանքները եւ համագործակցել բուհական ուսանողական խորհուրդների եւ «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» հասարակական կազմակերպութեան հետ:

Միաժամանակ նախարարը յաւելեց, որ սիրիահայերը օրինապաշտ եւ աշխատասէր քաղաքացիներ են, ովքեր վերջին 4 տարիների ընթացքում հիմնուելով Հայաստանում՝ իրենց ներդրումն են բերում երկրի զարգացման գործին:

ՄԱԿ ՓԳՀ հայաստանեան գրասենեակի ներկայացուցիչ Քրիստոֆ Բիերվիրթը մեծապէս կարեւորելով Հայաստանում հաստատուած սիրիահայ երիտասարդներին տրուած կրթութիւն ստանալու արտօնութիւններն ու լրացուցիչ հնարաւորութիւնները՝ նշեց, որ ՄԱԿ ՓԳՀ հայաստանեան գրասենեակը պատրաստ է աջակցել բուհերում սիրիահայ ուսանողների խորհուրդների աշխատանքներին:

Հայաստանեան գրասենեակի ներկայացուցիչն ընդգծեց, որ կրթութիւնը պահանջում է երկարատեւ ներդրում՝ միաժամանակ յաւելելով, որ վարձավճարների փոխհատուցումները տարբեր մարդկանց տրամադրւում են տարբեր չափով՝ կախուած այն բանից, թէ անձը կամ ընտանիքը որքանով է կարիքաւոր: Քրիստոֆ Բիերվիրթը կարեւորեց նաեւ ուսանողների կենսապահովման նպատակով աշխատանքի տեղաւորուելու, նրանց համար վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու անհրաժեշտութիւնը:

ՀԲԸՄ Հայաստանի ներկայացուցչութեան տնօրէնի ժամանակաւոր պաշտօնակատար Յովիկ Յորդեկեանը նշեց, որ սիրիահայ ուսանողների հիմնահարցերի կարգաւորման խնդրի շուրջ պետութիւն-համահայկական կառոյցներ համագործակցութիւնը երեք տարի շարունակ դարձել է Հայաստան-Սփիւռք գործակցութեան լաւագոյն դրսեւորումներից մէկը: Պարոն Յորդեկեանը յաւելեց, որ ՀԲԸՄ-ն կրթաթոշակներ տրամադրելու մեծ փորձառութիւն ունի եւ պիտի շարունակի ծրագիրը հատկապէս սիրիահայ ուսանողների համար:

ԵՊԲՀ ռեկտոր Միքայէլ Նարիմանեանը գոհունակութեամբ նշեց, որ ամենամեծ թուով սիրիահայ ուսանողները սովորում են բժշկական համալսարանում՝ դեղագիտութեան, ընդհանուր բժշկութեան եւ ատամնաբուժութեան բաժիններում:

Զեկուցումներով հանդէս եկան ՀՀ ԿԳՆ արտաքին կապերի եւ սփիւռքի վարչութեան առաջատար մասնագէտ Ամալիա Քոչարեանը, «Նայիրի» բժշկական կենտրոնի սրտաբան Ժորժ Բարսեղեանը, ՃՇՀԱՀ միջազգային կապերի դեպարտամենտի արտասահմանցի սովորողների բաժնի պետ Տաթեւիկ Հակոբեանը, ԵՊԲՀ օտարերկրացիների ուսուցման ֆակուլտետի դեկան Աննա Սարգսեանը, ՀՊՃՀ օտարերկրեայ քաղաքացիների ուսումնական բաժանմունքի ներկայացուցիչ Լիանա Յովհաննիսեանը, Երեւանի պետական հենակետային բժշկական քոլեջի փոխտնօրէն Դոնարա Յակոբեանը եւ այլք:

Ելոյթ ունեցան սիրիահայ ուսանողներ Լարա Երամեանը (ՀՊՃՇՀ), Վրոյր Պիլեմջեանը (ԵՊԲՀ), Յարութ Տօնոյեանը (ՀՊՏՀ), Ալեքսան Քալայջին (ԵՊՀ), ովքեր ներկայացրին իրենց կարծիքները կրթական խնդիրների վերաբերեալ:

Համագումարի շրջանակներում կայացաւ նաեւ ՀՀ բարձրագոյն եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատութիւններում սովորող սիրիահայ ուսանողների 2014-2015 ուսումնական տարուայ ուսման վարձավճարների փոխհատուցման պաշտօնական արարողութիւնը:

Քննարկուեցին սիրիահայ ուսանողների հիմնախնդիրներին եւ դրանց լուծման մեխանիզմներին վերաբերող հարցեր:








# Massis Weekly

Volume 34, No. 46 | Saturday, DECEMBER 13, 2014

## Hrant Dink Murder Case Deepens with New Testimonies




ISTANBUL -- The list of suspects in the murder case of journalist Hrant Dink, killed in 2007 in Istanbul, has been broadened, with the court listening to more high-ranking officials amid a move to merge the case of the convicted shooter with that of the alleged instigators, the Hurriyet Daily News reports.

Ergun Güngör, the Istanbul deputy governor at the time, testified on Dec. 9 at an Istanbul court as a suspect accused of negligence.

A day earlier, Ahmet Ilhan Güler, the then-chief of police intelligence, testified. The then-Trabzon police chief Resat Altay has also been called to testify, while former Istanbul police chief Celalettin Cerrah, along with seven others, are expected to appear in court soon.

A Bakirköy district court in Istanbul canceled the dismissal of charges against officials on June 6, handing the case to the Istanbul chief public prosecutor's office.

Another court decision ruled to combine convicted assailant Ogün Samast's case at the juvenile court with a case at the fifth high criminal court, in which Yusuf Hayal and Erhan Tuncel are accused of convincing Samast in the Black Sea province of Trabzon to shoot Dink in Istanbul.

"I will speak up," Samast, who was 17 years old when he shot Dink in front of the latter's office on Jan. 19, 2007, was quoted as saying in daily Taraf late last month. His words came in a letter sent to the prosecutor in charge of the investigation.

Civil servants and institutions allegedly implicated in the murder of Dink should be investigated, the Constitutional Court stated in a detailed ruling on the case on Nov. 12

## Bako Sahakyan: The Path Artsakh Has Chosen is Irreversible

STEPANAKERT -- President of the Nagorno Karabakh Republic Bako Sahakyan has issued a congratulatory address on the State Independence Referendum and Constitution Day of Artsakh:

Dear compatriots,

On behalf of the Artsakh authorities and on my own behalf, I cordially congratulate you on the NKR State Independence Referendum and Constitution Day.

This day has entered into the millennia long history of our nation as the beginning of a new path, which marked the firm determination of the Artsakh Armenians to build a free and independent state as well as a civil society based on democratic principles, universal human and national values. Both the 1991 Independence Referendum and the adoption of the basic law of our country – the Constitution in 2006 once again proved that the Artsakh people are resolute and ready to defend their interests and freedom in accordance with the norms and standards of international law.

The path we have chosen is irreversible, as it is just and sanctified by the blood of our martyrs. We are obliged to strengthen our statehood day by day, develop our economy and improve the living conditions of people.



We ought to realize our nation's aspirations and desires, guided by the letter and spirit of the law and build a strong legal state. That is the only way towards the prosperity of Artsakh, its international recognition and integration with the civilized world. And we are glad that the number of Artsakh's friends, who respect and value the decisions and efforts of our citizens to follow democratic path is steadily increasing year after year. This is an ongoing process which will definitely reach its logical conclusion, and Artsakh will occupy its worthy place among sovereign and developed states.

Respected people of Artsakh,

I once again congratulate all of us on the most significant state holiday and wish peace, robust health and all the best."

## Russian Parliament OKs Armenian Entry Into Eurasian Union

MOSCOW -- The lower house of Russia's government-controlled parliament on Wednesday unanimously ratified a recently signed treaty on Armenia's accession to the Russian-led Eurasian Economic Union (EEU).

The State Duma voted on the treaty one week after it was overwhelmingly approved by the Armenian parliament. "I want to bring your attention to the fact that in the last several years no legislation has been adopted by Armenia's parliament with such an overwhelming majority," Oleg Lebedev, a parliamentary leader of President Vladimir Putin's United Russia Party, told fellow deputies during a brief debate on the issue.

Representatives of the three other parties represented in the Russian parliament also voiced support for the treaty which Putin and his Armenian, Belarusian and Kazakh counterparts signed in Minsk in October.

Leonid Slutsky, the chairman of a Duma committee on ties with ex-Soviet states, called Armenia's upcoming membership in the EEU a "landmark event." Slutsky, who reportedly has warm ties with Azerbaijan's leaders, noted at the



same time that Yerevan's membership talks bid faced "some controversy" related to the status of Nagorno-Karabakh. "Armenia is joining the Eurasian project with its internationally recognized borders," he stressed.

Slutsky clearly alluded to misgivings voiced by Kazakhstan earlier this year. Echoing concerns expressed by Baku, Kazakh President Nursultan Nazarbayev demanded that the accession treaty make a special reference to those borders, which do not include Karabakh.

The treaty has to be also ratified by the parliaments of Kazakhstan and Belarus in order to take effect. The Armenian government hopes that the ratification process will be completed by the end of this month.

## Armenian Serviceman Killed by Azerbaijani Gunfire



STEPANAKERT — Nagorno-Karabakh Republic President Bako Sahakyan today signed a decree awarding posthumously private of the NKR Defense Army's N division Garik Ispiryan with the "For Service in Battle" medal.

According to the NKR president's official website the 19-year-old, who was killed on Monday, was awarded for "bravery shown during the defense of the NKR state border".

The Karabakh Defense Army said on mOnday Ispiryan was shot and killed in an Azerbaijani ceasefire violation at a section of "the line of contact" east of Karabakh. It gave no other details of the incident.

According to an official statement on the Nagorno-Karabakh Defense Army's website, an inquest has been launched into the circumstances.

"The Defense Army shares the grief of the heavy loss and expresses its solidarity with Ispirian's family, relatives and fellow servicemen," reads the statement.

Armenian media outlets reported later in the day that Karabakh Armenian forces killed at least 5 enemy soldiers as they thwarted an Azerbaijani commando raid on their frontline positions. "Yes, they made such an attempt but were pushed back," Davit Babayan, a senior official in Stepanakert, told yerkir.am. He declined to comment further.

# Fatih Akin's Armenian Genocide Film Hits Turkish Movie Theatres



ISTANBUL — The premiere of Turkish-German filmmaker Fatih Akin's movie, "The Cut," was held in Istanbul under heavy security. It hits Turkish movie theaters on Dec. 5.

The premiere of the movie was attended by a number of celebrities. Prominent Armenian photographer from Constantinople Ara Güler was also present at the event. Akin was accompanied by seven bodyguards.

As Akin's first movie in English, "The Cut" centers on an Armenian father who travels from the 1915 Ottoman Empire to the U.S. in search of his daughters.

The 138-minute drama stars French actor of Algerian descent Tahar Rahim who is best known for his role in the 2009 award-winning French movie "A Prophet," as well as French-Moroccan singer and actress Hindi Zahra, French-Armenian actor Simon Abjarian and Turkish actor Bartu Küçükçaglayan.

Along with Akin, Armenian-American screenwriter Mardik Martin, who has also worked with legendary filmmaker Martin Scorsese, penned the screenplay of the drama.

"I know very well that Turks would not accept a film about an Armenian hero. This is why I used the genocide of Native Americans to develop empathy with them," Akin has said about the film.

The film, which competed for the coveted Golden Lion award at the 71st Venice Film Festival, had an estimated budget of 16 million euros, according to the website imdb.com.

# Global Militarisation Index 2014: Armenia Ranked Third

BONN -- Armenia is the third most militarized country, according to the Global Militarisation Index (GMI) issued by the Bonn International Center for Conversion.

In the 2014 GMI, Israel, Singapore, Armenia, Syria, Russia, Cyprus, South Korea, Jordan, Greece and Azerbaijan (rank 1 to 10) are amongst the ten countries with the highest levels of militarization three of which are situated in the Middle East, two in East Asia and the remaining five in Western and Eastern Europe. The high levels of militarization in these countries are mostly the result of comprehensive arms purchases.

The causes for the generally high levels of militarization in The Middle East are manifold. They range from the defense of existing authoritarian regimes against possible internal adversaries to external conflicts and potential threats from the outside. All in all, one will have to assume that the level of militarization in the region will remain high or will even increase.

The neighboring states Armenia (rank 3) and Azerbaijan (rank 10), both belonging to Europe, show very high levels of militarization and have initiated major increases in their military expenditures over the past years. The high levels of militarization in these two countries must, however, be seen in the overall context. Russia (rank 5) delivers arms to both South Caucasian republics and has been pursuing a comprehensive military reform since 2008.

Between 2009 and 2013, expenditures for equipment and procurement in European NATO states fell by more than US $ 9 billion. Still, some states show high levels of militarisation (Greece: 9, Estonia: 21, Turkey: 24, Bulgaria: 27, Portugal: 28).

Singapore (rank 2) and South Korea (rank 7) are the two countries within East Asia that are amongst the ten most militarized countries in the world. Singapore's procurement efforts are a reaction to its many unresolved territorial issues, the importance of strategic waterways in the region and the Chinese anti-access / area denial strategy. South Korea's high level of militarization can be understood in the context of the ongoing state of war with North Korea, but also with unresolved territorial issues with Japan and China in the Yellow Sea.

The Global Militarisation Index (GMI) depicts the relative weight and importance of the military apparatus of one state in relation to its society as a whole. The update of the GMI 2014 is based on data from the year 2013 (i. e. the most recent year for which data has been available) and comprises 152 states. BICC's GMI is supported by the German Federal Ministry for Eco-

**Continued on page 4**

# US Senate Foreign Relations Committee Approves Nomination of New Ambassador to Armenia



WASHINGTON , DC – This week, the US Senate Foreign Relations Committee (SFRC) approved President Obama's nominees to serve as ambassador to Armenia and Azerbaijan, Richard M. Mills, Jr. and Robert F. Cekuta, respectively. The SFRC approved a slew of nominations by voice vote during a closed-door meeting in the Capitol.

The confirmation of the two nominees comes at a crucial time as increased tensions along the Line of Contact (LOC) between Nagorno Karabakh (NK) and Azerbaijan have claimed dozens of lives this year. The latest example of Azerbaijan aggression occurred on November 12th, when an Azerbaijani military unit stationed near the LOC shot down an unarmed NK army helicopter killing all three servicemen aboard.

A career diplomat, Richard M. Mills, Jr., has held numerous diplomatic positions. Currently, he is the Deputy Chief of Mission at the U.S. Embassy in Beirut, Lebanon.

He also has diplomatic experience with Armenia. Early in his career, following the dissolution of the Soviet Union, he was the desk officer at the State Department for the newly independent Armenia and Azerbaijan.

Mills has also held positions in Malta, Paris, St. Petersburg and Dublin, among others.

He is a graduate of Georgetown University's School of Foreign Service. Mills holds a J.D. from the University Of Texas School of Law, as well as an M.A. in International Security Affairs from the National Defense University.

Robert F. Cekuta is currently the Principal Deputy Assistant Secretary of State of the Energy Resources Bureau. Prior to this, he was the Deputy Assistant Secretary for Energy, Sanctions, and Commodities in the State Department's Bureau for Energy and Business Affairs. Previous overseas assignments have included stints in Tokyo and Berlin. He is a graduate of Georgetown University and holds an M.A. from the Thunderbird School of Global Management and the National War College.

With the committee's approval, their nominations move to the Senate floor for a vote, which is expected sometime next week. Senate confirmation of a number of President Obama's nominees including Mills and Cekuta are likely before Congress adjourns for the year.

# Armenian Central Bank Intervenes to Prevent Depreciation of Dram

YEREVAN — The Central Bank of Armenia (CBA) pledged to prevent a further sizable depreciation of the Armenian dram on Tuesday after stepping up its interventions in the local currency market.

"In our view, [exchange rate] fluctuations will now be negligible," said the CBA governor, Artur Javadian. "We expect that sharp fluctuations will quickly end because the exchange rate will stabilize as a result of these actions," he told a news conference.

The CBA announced on Monday that it will sell fixed amounts of U.S. dollars to Armenian commercial banks and publicize information about those transactions on a daily basis. The move followed Prime Minister Hovik Abrahamian's calls for tough CBA action against "speculative" currency trading which he blamed on the dram's weakening in recent weeks.

According to Javadian, the CBA's daily currency sales will amount to $6 million in the course of this week. He said they will be gradually lowered in the following weeks.

From November 20 up till now the Armenian national currency, the dram, has devaluated by more than 7 percent reaching 457 drams per dollary, down by about 10 percent. Some commercial banks have reportedly limited their dollar sales to customers over the past month.

Like other Armenian officials, Javadian blamed the dram's weakening on Russia's worsening economic woes resulting in large measure from the collapse of international oil prices. He said that a sharp depreciation of the Russian ruble has triggered panic buying of dollars in Armenia and other ex-Soviet states.

The CBA chief said that illicit currency speculations in Armenia has been another factor. He said the Central Bank has launched "proceedings" against some commercial banks and currency retailers that will likely result in "very strict" punishments. In particular, he said, several currency exchange shops will be fined up to 4 million drams each.

# Israeli President Backtracks on Armenian Genocide Recognition



TEL AVIV — Israeli President Reuven Rivlin, formerly an outspoken advocate of Israel's recognition of the Armenian Genocide, decided not to renew his signature on an annual petition calling for Israel to officially recognize the mass killings as genocide, the Times of Israel reports.

Those responsible for the petition were surprised by Rivlin's change of stance, Israel's Channel 10 News reported on Thursday night, which was ascribed to the heightened sensitivity of his position since Rivlin was elected president earlier this year. The TV report said Rivlin was apparently concerned not to further harm Israel's strained relations with Turkey.

Ties have been all-but frozen in recent years, notably as a consequence of the 2010 killings of nine Turkish citizens by Israeli naval commandos who were attacked when they intercepted the Turkish vessel Mavi Marmara as it sought to break Israel's security blockade of Hamas-run Gaza.

The 100th anniversary of the Armenian Genocide will be commemorated on April 24, 2015.

Beit Hanassi, the president's official residence, confirmed that Rivlin had not signed the petition, Channel 10 said. It said unnamed Foreign Ministry officials welcomed the president's "statesmanship."

Israel has avoided formally recognizing the Armenian Genocide in the political arena for years, for fear of straining diplomatic ties with Turkey, which was Israel's closest ally in the Muslim world until the deterioration under the leadership of Recep Tayyip Erdogan, an open supporter of Hamas who has issued a stream of highly critical statements about Israel.

In years past, Rivlin on numerous occasions encouraged Israeli lawmakers to reject the politicized discourse that has dominated the discussion of the issue. "I'm aware of the sensitivity, but I'm not blaming modern-day Turkey," Rivlin told Knesset members last year, when he was still an MK himself. "The government that committed these acts was overturned by Turkey itself," he said during a special session on the topic.

"I'm sure Turkey will be an ally. I think a solution needs to be found for this crisis, but it's unthinkable that the Knesset ignore this tragedy," Rivlin said. "We demand that people don't deny the Holocaust, and we can't ignore the tragedy of another nation," he said.

During an interview with Israel Army Radio in 2013, Rivlin highlighted the differences between the Holocaust and the murder of the Armenian people. But without blurring those differences, Israel must find a way to "fulfill its moral obligation of remembering wrongs done to others," he said.

# Judicial Assassination Against Sevan Nisanyan



ISTANBUL (Agos) — Sevan Nisanyan's prison sentence has been increased to 11 years and 8 months. According to Nisanyan's lawyer Murat Akçi, if the Constitutional Court does not produce an expected ruling, Nisanyan might stay in prison for years. There is not a single other case in which a person is held in a closed prison for the crime Nisanyan is charged with.

Sevan Nisanyan, imprisoned at the Aydin Yenipazar Prison at the moment, was sentenced in a different case to a total of 5 years 2 months 15 days imprisonment and given an additional fine of 12.600 TL by the Selçuk 2. Criminal Court of First Instance for opposing the Code of Protection of Cultural and Natural Properties (KTVKK). With the addition of this sentence, Nisanyan's total prison sentence now stands at 11 years 8 months. Nisanyan's lawyer Murat Akçi has stated that they will appeal these rulings as well.

Number of cases unknown

In March, the sentence passed for the same charge was reversed by the Supreme Court of Appeals, however, following a reassessment of the four files by the local court, Nisanyan was found guilty of "intentionally causing damage to immovable cultural assets under protection". Akçi explained that they did not even know the number of cases filed against Nisanyan on such charges, because regional protection decisions that form the basis of such charges are taken without being served to the person in question. Therefore, the person who is sentenced does not even know which of his or her acts was deemed to be within the scope of crime.

Akçi appealed to the Constitutional Court (AYM) for a sentence Nisanyan received for the same charges. Akçi explains that the AYM had previously quashed a similar ruling, but that a legal vacuum that remains because of the failure to amend the law leads the Supreme Court of Appeals to approve the same rulings. According to Akçi, if the Constitutional Court does not produce the expected ruling, Nisanyan might remain in prison for years. There is not a single other case in which a person is held in a closed prison Nisanyan is charged with. Akçi believes that this situation represents the 'success' of those who want to silence Sevan Nisanyan.

Nisanyan has been in prison for a year

A case was filed against Nisanyan who completed the construction of a 40-squaremeter house on a plot of land he owned, and located a kilometer away from the Sirince Village of Izmir, despite the site being twice officially sealed off, on charges that the plot was within a protected area. When the Supreme Court of Appeals approved the decision, Nisanyan received a 2-year prison sentence. Nisanyan entered prison on 2 January 2014, and a short time after was exiled to a closed prison, and forced to change prisons four times for "security" reasons. During the time he has been in prison, Nisanyan received further sentences of 2 years 10 months for opposing the Building Code, and 1 year 8 months sentence for opposing the KVTKK, resulting in a total sentence of 6 years 6 months.

Nisanyan also has a 2 year 6 months imprisonment sentence for opposing the KTVKK on appeal at the Supreme Court of Appeals. Another sentence of Nisanyan on appeal at the Supreme Court of Appeals is the 13,5 month-sentence he received for "overtly belittling religious values adopted by a section of the public" on charges of "insulting the Prophet Muhammad".

# Freedom on the Net 2014: Armenia Ranked as a "Free" Country




Armenia is ranked as a "free" country in the Freedom on the Net 2014 report released by the Freedom House today.

Georgia is also ranked as "fee," while Azerbaijan, Russia, Turkey are among countries in the "partly free" category.

Iceland tops the ranking, followed by Estonia and Canada, Armenia's southern neighbor Iran is at the bottom of the table, Public Radio of Armenia reports.

According to the report, "the internet penetration rate in Armenia has continued improving over the past few years, accompanied by fewer restrictions on online content. Additionally, citizen groups and NGOs have made use of online communication tools to organize campaigns and promote policy changes in the country."

According to the International Telecommunication Union, the internet penetration rate in Armenia stood at 46 percent in 2013, compared with 39 percent in 2012 and just 6.2 percent in 2008.

The Armenian mobile phone penetration rate reached 112.4 percent in 2013, compared to 111.9 percent in 2012 and 48.4 percent in 2008. Access to mobile broadband is available throughout the majority of the country and is affordable for much of the population.

In practice, the Armenian government and the telecommunication regulatory authority, the Public Services Regulation Commission (PSRC), do not interfere with or try to influence the planning of network topology. Operators plan and develop their networks without any coordination with either the government or the regulatory authority.

Armenian internet users enjoy access to internet resources without limitation, including peer-to-peer networks, voice and instant messaging services such as Skype and Google Talk, and popular social networks such as Facebook, YouTube, and Odnoklassniki.

The Armenian government does not consistently or pervasively block users' access to content online.

Currently, self-censorship is not a widespread practice in the online sphere. The Armenian government and the ruling political elite have avoided the application of any extralegal measures to prevent political opponents or independent internet resources from publishing online content.

Freedom on the Net 2014 – the fifth annual comprehensive study of internet freedom around the globe, covering developments in 65 countries that occurred between May 2013 and May 2014 –finds internet freedom around the world in decline for the fourth consecutive year, with 36 out of 65 countries assessed in the report experiencing a negative trajectory during the coverage period.

In a departure from the past, when most governments preferred a behind-the-scenes approach to internet control, countries rapidly adopted new laws that legitimize existing repression and effectively criminalize online dissent.

## First Armenian Interactive Multimedia Project – “Armenian Treasures” Launched




YEREVAN — “Locator” CJSC has announced the launch of “Armenian Treasures” – the first Armenian interactive multimedia 3D project which promote the ancient historical and cultural monuments of Armenia and Artsakh!

Now, everybody from around the world can download “Armenian Treasures” application and enjoy the interactive virtual 3D journeys to famous Armenian historical architectural masterpieces with own IPad – walk around the sites, watch with bird’s-eye view, get acquainted with the history, light a candle, pray, use “Augmented Reality” (AR) and other features made with high-tech.

Currently, interactive journeys to 5 monuments – Tatev, Garni, Geghard, Gandzasar and Ghazanchetsots are already available! Journeys to another 4 cultural sites – Kecharis, Sevanavank, Khor Virap and Noravank… are being finalized.

The overall objective of the project is to spread Armenian ancient cultural treasures in AppStore and GooglePlay markets, thus making our homeland more recognizable and attract the attention of foreigners, thereby promoting the growth and impact of tourism.

“We are sure the project will be of interest to hundreds of thousands of young ethnic Armenians who were born outside Armenia and had no possibility to come and to see the homeland with own eyes. And perhaps, many Armenian schools of Diaspora will also be interested”. Stated project manager Emil Stepanyan.

““Armenian Treasures” also contains some hidden elements of propaganda on the Artsakh land belonging to Armenia. In this regard it is not by chance that Gandzasar and Ghazanchetsots have been selected at the initial stage of the project. In the future we are going to strengthen the elements of propaganda by including the monuments of Western Armenia, for instance ruins of Ani or Aghtamar!!” The project manager concluded.

The Project is conducted by Locator company without and external support for about 3 years.

## My Father’s Destiny : The Golgotha of Armenia Minor

Transl. by Diran Meghreblian
with an introduction by Yves Ternon
176 pp, illust., ISBN 9781909382152.
pb. US$24.00 / UK£16.00




Every destiny is unique, but that of a survivor stands out because it wasn’t interrupted when the multitude were destroyed. He is like a piece of wreckage that is thrown by the waves onto a beach after a storm to reveal the scale of the disaster and cerry with it – its echo reverberating from generation to generation – the last scream of the dead: ‘Do not forget us’ –Yves Ternon (from introduction to My Father’s Destiny)

My Father’s Destiny is one of few English language accounts of the Armenian Genocide in Sivas, the province with the largest Armenian population in the Ottoman Empire. It work is composed of a translation of Aram Gureghian’s memoirs written at the age of 16 shortly after the Armenian Genocide; the Gureghian family’s subsequent fate in France and Soviet Armenia; and a specific account of the Armenian Genocide in Sivas – the ancestral homeland of the Gureghian family. This highly readable work was originally published in French (1999), then in Turkish (2004), and is now available in English.






## Professor Richard Hovannisian in Multiple Fall Presentations



UCLA -- During the 2014 Fall Quarter at the University of California, Los Angeles, Professor Richard Hovannisian participated in twenty university and community programs. His university and academic presentations were on Modern Armenian History; the Armenian Genocide and Contemporary Denial; Historic Western Armenia; the Smyrna Calamity of 1922; Oral History and Memoirs; and the Republic of Armenia. The lectures were given at Boston University on September 25 (Kinosian Chair, Prof. Simon Payaslian); International Association of Armenian Studies and Matenadaran, Yerevan, October 9-10; Gulbenkian Foundation, Lisbon, October 15-17 (Dr. Razmig Panossian, Gulbenkian Foundation, and Prof. Sebouh Aslanian, UCLA); Loyola-Marymount University, October 20 (Dept. of History, Prof. Najwa al-Qattan); Clark University, October 24-25 (Strassler Holocaust & Genocide Studies Center, Kaloosdian-Mugar Chair, Worcester State, and NAASR); University of Michigan-Dearborn, November 2 (Armenian Research Center, Prof. Ara Sanjian); University of Michigan-Ann Arbor, November 3 (Armenian Studies Program, Prof. Katherine Babayan); Society for Armenian Studies and Middle East Studies Association, Washington, D.C., November 21-22 (Prof. Bedross Der Matossian, U. of Nebraska); and Chapman University, December 9 (History Department, Dr. Marilyn Harran).

Professor Hovannisian also continued his community talks and engagements. During the Fall Quarter, he made presentations at St. John Armenian Church in San Francisco, September 21; Organization of Istanbul Armenians, Los Angeles, September 26; St. Gregory the Illuminator Church and Community Center of the United Arab Emirates, Sharjah-Dubai, October 7; Hairenik Association Anniversary, Boston, October 26; St. Leon Church, Fairlawn, New Jersey, October 30; AGBU Manoogian School, Detroit, November 2; Hamazkayin Cultural Association and Sourp Khatch Church, Washington, D.C., November 22; Hamazkayin, London, November 30; Armenian “National Home/ Azkayin Dun”, Sofia, Bulgaria, December 1; and Armenian Community Center, Plovdiv, Bulgaria, December 2. In Bulgaria, , he also gave interviews for local Bulgarian television and was filmed for a Bulgarian documentary on the occasion of the centenary of the Armenian Genocide.

While in Yerevan in October, a ceremony was held at the American University of Armenia to acknowledge Hovannisian’s gift of his professional library to the AUA library. During this period, Richard Hovannisian also began his appointment as Adjunct Professor of History at the University of Southern California to work with the Shoah Foundation on the integration of several hundred survivor testimonies made available by the Armenian Film Foundation.

## Global Militarisation Index 2014

**Continued from page 2**

nomic Cooperation and Development (BMZ).

The GMI is divided into three overarching categories: expenditure, personnel and heavy weapons. Military spending in relation to GDP and health spending are the most important indicators for determining the level of militarization. Besides military expenditure, the level of militarization is also represented by the relation of military personnel to the total population and physicians. As its third category the GMI takes into consideration the number of an armed forces’ heavy weapons in relation to the total population.




# ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՍՐԲՈՑ ՂԵՒՈՆԴԵԱՆՑ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ



Առաջնորդանիստ Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճարին մէջ, Երեքշաբթի, Դեկտեմբեր 2ի երեկոյեան տեղի ունեցաւ տարեկան Միջ-Եկեղեցական Աղօթքի Արարողութիւնը, որուն մասնակցեցան Լոս Անճելըսի շրջանի քոյր եկեղեցիներու եւ յարանուանութեանց հոգեւորականները:

Արարողութենէն առաջ երեկոյեան ժամը 6:30ին Առաջնորդ Սրբազան Հօր գրասենեակին մէջ տեղի ունեցաւ մտերմիկ եւ հոգեւոր պահ մը, որուն ներկայ գտնուեցան արարողութեան մասնակցող Կաթոլիկ, Օրթոտոքս եւ Աւետարանական Եկեղեցւոյ հոգեւորականները: Երեկոյեան ժամը 7:00ին Հոգեւորականաց Դասը առաջնորդուեցաւ դէպի Մայր Տաճար՝ կատարելու համար Միջ-Եկեղեցական Աղօթքի Արարողութիւնը:

Կաթոլիկ Եկեղեցւոյ Առաջնորդարանի Միջ-Եկեղեցական Յարաբերութեանց Վարիչ՝ Հայր Ալէքսիս Սմիթ իր բարի գալստեան խօսքին մէջ ներկայացուց արարողութեան ներկայ գտնուող հիւր հոգեւորականները: Իսկ արարողութեան իրենց մասնակցութիւնը բերին Հոգշ. Տ. Ճան Վրդ. Պաքաս՝ Հոգեւոր Տեսուչը Սուրբ Սոֆիա Յոյն Օրթոտոքս Մայր Տաճարի, Դոկտ. Եպիսկոպոս Կայ Ըրուին՝ Հարաւային Գալիֆորնիայի Առաջնորդը՝ Լուտերական Աւետարանչական Եկեղեցիէն, Պատուելի Սալլի Ուէլչ՝ «Քրիստոսի Առաքեալներ» Եկեղեցիէն եւ Վերապատուելի Յովսէփ Մաթոսեան՝ Հիւսիսային Ամերիկայի Հայ Աւետարանական Եկեղեցիէն, Հայ Կաթոլիկ Եկեղեցիէն հայր Թովմաս Վրդ. Կարապետեան եւ Հոգեւոր Հովիւ Գէնի Պրաուն "The Ecumenical Officer for the Evangelical Lutheran Church of America."

Միջ-Եկեղեցական Արարողութեան մասնակցեցան Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճարի Խաչատուրեան Երգչախումբը՝ ղեկավարութեամբ Բրշ. Ստեփան Սրկ. Կէօզիւմեանի: Մասնակցեցան նաեւ Glendale Advantist Academy Chorale Երգչախումբը ղեկավարութեամբ Թիմըթի Հէնսընի:

Տիար Գէվին Ռապըրթ՝ Նախագահը Կլէնտէյլ Էտվէնթիստ Բժշկական Կեդրոնի իր սրտի խօսքը ուղղեց հաւատացեալներուն:

Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանի հրաւէրով, օրուան գլխաւոր պատգամաբերն էր Larry Caviness, President of the Southern California Conference of Seventh Day Adventists (Հարաւային Գալիֆորնիայի Շաբաթապահներու Համագումարի Նախագահ՝ Լէրի Գաւինէս):

«Հոգւոց» աղօթքը արտասանուեցաւ Մայր տաճարի Գլխաւոր Բարերար հանգուցեալ Լեւոն Պարոնեանի հոգիին համար:

Արարողութեան վերջաւորութեան Առաջնորդ Սրբազան Հօր խորհրդածութեան նիւթը կը վերաբերէր Բարի Սամարացիի օրինակին: Սրբազան Հայրը իր շնորհակալութիւնը յայտնեց հիւր հոգեւորականներուն՝ իրենց մասնակցութեան համար եւ Կլէնտէյլի Էտվէնթիստ Հիւանդանոցին նուիրեց խաչքար մը:

Սրբազան Հայրը իր յատուկ գնահատութիւնը յայտնեց Հայր Ալէքսի Սմիթի, որ արդէն հինգերորդ տարին ըլլալով կը ստանձնէր հանդիսավարի պաշտօնը:

Միջ-Եկեղեցական Արարողութեան աւարտին հիւր հոգեւորականներն ու հաւատացեալները ներկայ գտնուեցան Առաջնորդարանի Զօրայեան Թանգարանի Սրահին մէջ Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճարի «Բարի Սամարացի» Ընկերակցութեան կողմէ կազմակերպուած ապուրի եւ նկանակի հիւրասիրութեան:

OFFICE SPACE FOR RENT
IN PASADENA
ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

# «ՄԵՐ ԼՈՅՍ, ՄԵՐ ՅՈՅՍ» ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈԳԵԿՈՉՄԱՆ ՀԱՄԵՐԳ




Կազմակերպութեամբ Հիւսիսային Ամերիկայի Հայ Աւետարանական Միութեան եւ Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան «Մեր Լոյս, Մեր Յոյս» ընդհանուր նիւթն է յատուկ երաժշտական յայտագրի մը, որ պիտի ներկայացուի Հիւսիսային Ամերիկայի Հայ Աւետարանական Միութեան եւ Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան (ԱՀԱԸ) Ցեղասպանութեան Հարիւրամեակի Յանձնախումբին կողմէ, Շաբաթ, Յունուար 24, 2015-ին, երեկոյեան ժամը 8:00-ին, Փասատինայի Ambassador Թատերասրահին մէջ, կատարողութեամբ Կլէնտէյլի Լարք Երաժշտական Ընկերակցութեան երգչախումբին եւ նուագախումբին՝ ղեկավարութեամբ Վաչէ Պարսումեանի:

Յայտագիրը պիտի բաղկանայ երեք մասերէ, որոնք պիտի ընդգրկեն երաժշտութիւն, ասմունք եւ պար:

Առաջին Մասը պիտի արտացոլացնէ Հայ ժողովուրդի աւանդութիւններն ու հերոսութիւնները: Հայ ազգը եղած է հնագոյն քաղաքակրթութիւններէն մէկը եւ ունեցած է հոգեւոր, գեղարուեստական, ռազմական, տնտեսական եւ մտաւորական հարուստ իրագործումներ:

Երկրորդ Մասը պիտի ոգեկոչէ այն մեծ ողբերգութիւնը որ Հայ ժողովուրդը դիմագրաւեց քսաներորդ դարու սկիզբը: Յարգանք պիտի մատուցուի մեր նահատակներուն, որոնք զոհուեցան ի գին իրենց ազգային պատկանելիութեան եւ Քրիստոնէական հաւատքին:

Երրորդ Մասը պիտի հռչակէ մեր վերապրումի յաղթանակը եւ պիտի աւետէ փայլուն ապագան: Մեր գեղարուեստական ձայնով, պիտի վերանուիրենք մենք զմեզ Աստուծոյ եւ մեր Մշակոյթին:

Հարիւրամեակի Յանձնախումբը լաւատես է, որ ձեր քաջալերութեամբ եւ աջակցութեամբ պիտի կարենայ իրականացնել այս հսկայական ձեռնարկը:

Պիտի խնդրէինք որ այս նպատակին համար ձեր նուէրները ղրկէիք Հիւսիսային Ամերիկայի Հայ Աւետարանական Միութեան կեդրոնը՝ 411 East Acacia Ave., #200, Glendale, CA 91205-2821: Տոմսերը կարելի է ապահովել Լարք Երաժշտական կեդրոնէն՝ 543 Arden Ave., Glendale, CA 91203, հեռ. (818) 500-9997, ինչպէս նաեւ Itsmyseat - http://www.itsmyseat.com/Light կայքէջէն, հեռ. (818) 538-4911: Յաւելեալ տեղեկութիւններու համար կրնաք հեռաձայնել ԱՀԱԸ-ի կեդրոնատեղին՝ Բէրէմըս, Նիւ Ճըրզի, հեռ. (201) 265-2607 կամ ԱՀԱԸ-ի Արեւմտեան ափի գրասենեակը՝ Կլէնտէյլ, Քալիֆորնիա, հեռ. (818) 937-9840:

ARMENIAN COUNCIL OF AMERICA
Cordially Invites You to Our
ANNUAL HOLIDAY OPEN HOUSE
December 14
7:00 p.m. to 10:00 p.m.
815 E. Colorado Blvd., Suite 140
Glendale, CA 91205
Please R.S.V.P. by December 13 to
info@ArmenianCouncil.org or
call (818) 660-5142

# ՅԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 1988 Թ. ԵՐԿՐԱՇԱՐԺԸ

*ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐԵԱՆ*



*Ասում են ժամանակը ամենակարող դեղն է: Այն կամաց-կամաց մեղմում, ամոքում է ցաւերդ ու քեզ վերադարձնում իրական կեանքի:*

*Իսկ յիշատակման արժանի յիշողութիւնը ամրագրւում է քո ուղեղի համակարգում եւ «արթնանում» է, երբ գալիս է ժամանակը: Հայաստանի 1988 թ. երկրաշարժը յիշատակման արժանի յիշողութիւն է:*

*Դիտում էի Հ1 հեռուստածրագրով սփռուած հաղորդումը մի քիչ ուշացած, որովհետեւ հայկական հեռուստատեսութեան ծրագրերը ընդհանրապէս սովորութիւն չունեն օրուայ ծրագիրը ներկայացնելու:*

*Պատշաճ հաղորդում էր՝ նուիրուած Հայաստանի երկրաշարժի 26-րդ տարելիցին: Դիտելիս ես ինձ զգացի Հայաստանում 1988 թ. չարափաստիկ երկրաշարժի ժամանակ: Յաճախ յուզմունքը խեղդում էր ինձ եւ արցունքներս չէի կարողանում զսպել՝ անդառնալի կորուստների, հոգու ցաւի, խղճի, յուսոյ արցունքներ, որոնք երբեք չէին կարող վերադարձնել սարսափելի երկրաշարժին զոհ գնացած անմեղ մարդկանց:*

*Դժբախտաբար, 26 տարի անց, երկրաշարժից փրկուածների մեծ մասը դեռ ապրում են թիթեղեայ տնակներում եւ վտանգաւոր՝ փլման ենթակայ շէնքերում, որի հետեւանքով դժբախտ դէպքերն անպակաս են, եւ խաղաղ ժամանակներում մենք կորցնում ենք երկրաշարժից հազիւ փրկուած մեր հայրենակիցներին:*

*Ես եղայ Հայաստանում 1989 թ., այցելեցի Լենինական, Սպիտակ եւ Կիրովական քաղաքները ու Լոս Անճելոս վերադառնալուց յետոյ յօդուած գրեցի երկրաշարժի մասին, նրան կցելով նաեւ նկարներ, որոնք ցոյց էին տալիս դրա կատարած աւերածութիւնները: Լենինականի կէսը վերածուել էր աւերակի, Սպիտակը ջնջուած էր երկրի երեսից՝ մի հատ կանգուն շէնք չկար, իսկ Կիրովականում բազմաթիւ շէնքեր լուրջ վնասուածքներ էին ստացել եւ վերանորոգման լուրջ կարիք ունէին:*

*Դիտում եմ հաղորդումը: Երկրաշարժի ստեղծած փլատակներում յայտնւում են երկրաշարժից փրկուած մարդիկ, որոնց աչքերում կայ վախ ու սարսափ, շփոթուածութիւն: Երկրաշարժի մի քանի վայրկեանի հարուածը նրանց տարձրել է անտարբեր: Անջատուած ամէն ինչից, նրանք փնտռում են փլատակների տակ մնացած իրենց հարազատներին, բարեկամներին եւ եթէ յաջողւում է գտնել նրանցից մէկին ողջ, ուրախանում են նրան տեսնելով ողջ, իսկ նրանց կողքինը սգում է իր նահատակուած հարազատին: Այնպիսի պահ է ստեղծուել, որ նոյնիսկ մեռած հարազատներին գտնելիս են ուրախանում (շատերը դրան էլ չարժանացան): Ուրախութեան եւ սգի արցունքները խառնւում են իրար աշխարհից «վերացած» եւ նոյնիսկ այդ պահին իրենց գոյութիւնը չգիտակցող մարդկանց մօտ՝ ստեղծելով «մարդկային կատակերգութիւն» այդ դժբախտ մարդկանց համար:*

*Քանդուած շէնքերի կանգուն մնացած պատերին երեւում են ընտանեկան նկարներ, թանկարժէք գորգեր եւ այլ սրբութիւններ, որոնք, ո՛վ գիտի, ինչ գաղտնիքներ ու պատմութիւններ են թաքցնում իրենց մէջ այդ ընտանիքների ապագայ երազանքների մասին, եւ սպասում են իրենց տէրերին որոնք արդէն չկան: Ինչպիսի՜ սարսափելի արհաւիրք...: Ողջ մնացածները փնտռում են իրենց կորուստը: Շատերը նստած մի քարի վրայ ու շուարած, ողբի արցունքներ են թափում, չիմանալով ինչ անել...:*

*Երկրաշարժի բազմաթիւ զոհեր «պառկած են» գետնի վրայ թեթեւ շորով (լաթով) ծածկուած: Հարազատներին փնտռողները մօտենում են նրանց, մի փոքր բարձրացնելով ծածկոցը ստուգում են նրանց ինքնութիւնը: Գետնի վրայ կողք-կողքի շարուած են հազարաւոր դագաղներ:*

*Ամբողջ աշխարհի փրկարար խմբերը օգնութեան են հասնում նրանց արդիական սարքաւորումներով ու վարժեցրած շներով՝ փրկելու փլատակների տակ մնացած մարդկանց:*

*Աշխարհի բոլոր պետութիւնները, նոյնիսկ Հայաստանի տեղը չիմացող՝ մարդասիրական օգնութիւն են հասցնում տուժածներին, վերջիններս խաղաղ կեանքի պայմաններում, սեղանները լայն բացած, հիւրասիրում էին իրենց շեմից ներս մտնողին, իսկ երկրաշարժից յետոյ ձեռքներին ամաններ բռնած մօտենում էին մարդասիրական օգնութիւն ցուցաբերողներին, որպէսզի մի աման ուտելիք ստանան իրենց գոյութիւնը պահպանելու համար: Բնութեան ինչ-պիսի՜ ծաղրանք...:*

*Բազմաթիւ օդանաւեր ծանրաբեռնուած մարդասիրական օգնութեան ուտելիքով, սարքերով եւ այլ անհրաժեշտ իրերով, իրար ետեւից ժամանում էին Լենինականի (այժմ՝ Գիւմրի) օդանաւակայանը՝ հասցնելով ամէն տեսակի օգնութիւն տուժածներին:*

*Ես նայում էի փլատակների մէջ շուարած կանգնած եւ նստած երեխաների աչքերին, որոնք ահ ու սարսափ էին արտայայտում, որոնցից շատերը արդէն հոգեկան խանգարումներ ունէին:*

*Աշխարհի բոլոր կողմերից ժամանած հոգեբաններ, բժիշկներ եւ այլ մասնագէտներ օգնութեան հասան երեխաներին եւ տեղում վիրահատեցին ծանր վնասուածք ստացողներին, փրկելով նրանց կեանքը:*

*Երկրաշարժի անմեղ զոհերին միացան նաեւ մարդասիրական օգնութիւն հասցնող օդանաւի վթարի հետեւանքով զոհուած օդաչուները, որոնց որպէս յարգանքի տուրք, նրանց յիշատակին յուշակոթող է կանգնեցուած Գիւմրիում:*

*Լենինական ժամանեց Խորհրդային Միութեան Կենտրոնական Կոմիտէի քարտուղար Միխայիլ Կորպաչովը եւ իր յարգանքի տուրքը մատուցեց նահատակների յիշատակին: Այդ դաժան իրականութեան մէջ, հայ մարդը իր ցաւերը մոռացած, Կորպաչովին հարցրեց, թէ Ղարաբաղը ե՞րբ է միանալու Հայաստանին...:*

*1966 թ. Ապրիլ 26-ին Ուզբեկստանի մայրաքաղաք Տաշքենդը աւերել էր 7.5 բալ (ըստ Ռիխտերի ցուցանակի) հզօրութեամբ երկրաշարժը, որի մասին խորհրդային մամուլը յայտնեց, որ զոհուել է 68 մարդ: Խորհրդային Միութեան փլուզումից յետոյ պարզուեց, որ Տաշքենդում զոհուել էր 116 հազար մարդ: Խորհրդային Միութեան բոլոր հանրապետութիւնները օգնեցին Ուզբեկստանին եւ մի քանի տարի յետոյ քանդուած քաղաքը վերակառուցուեց:*

*Հայի ճակատագիրը միշտ նրան տանում է դէպի դժբախտութիւն: Հայաստանի երկրաշարժից երեք տարի յետոյ 1991 թ. Դեկտեմբերի 31-ին փլուզուեց Խորհրդային Միութիւնը եւ Հայաստանում երկրաշարժի կատարած աւերածութիւնները չվերականգնուեցին, որի հետեւանքով էլ դրանից տուժածները մինչեւ հիմա բնակարան չունեն: Եթէ Խորհրդային Միութիւնը մի քանի տարի ուշ փլուզուէր, նրա Հանրապետութիւնների օգնութեամբ Հայաստանի երկրաշարժի հետեւանքներն էլ կը վերանային...: Ես հաւատում եմ մարդու աստղին: Հայ ազգը չի ծնուել «բախտաւոր աստղի տակ»:*

*Ըստ պատկան մարմինների, երկրաշարժը խլեց 25 հազար մարդու կեանք, ըստ այլ աղբիւրների այն կրկնակի էր եւ աւելի...: Դժբախտաբար, այս կորուստներին աւելացաւ հազարաւոր հայ երեխաների կորուստը: Նրանց իբր թէ ժամանակաւոր պատսպարեցին Խորհրդային Միութեան այլ վայրերում, բայց նրանցից քչերը վերադարձան Հայաստան:*

*Հայ ժողովուրդը երախտապարտ մնաց եւ հիմա էլ երախտապարտ է բոլոր օգնութեան հասած պետութիւններին, կազմակերպութիւններին եւ անհատներին, որոնք ամոքելով նրա ցաւը, միաժամանակ յոյս ներշնչեցին նրան վերապրելու ու գոյատեւելու:*

*Երկրաշարժից 26 տարի յետոյ արժանի է յիշատակման Արամայիս Սահակեանի «Դիմացիր ժողովուրդ» բանաստեղծութեան հետեւեալ քառեակը.*

*Բայց այս օրերին կայ լոկ մի խորհուրդ-*

*Պիտի դիմանա՜ս, իմ հայ ժողովուրդ:*

*Դեռ պիտի յաղթես, «ապրելով յաղթես»,*

*Եւ նաեւ, ...Ծիծաղով յաղթես:*

*Երկրաշարժից փրկուած, Գիւմրիի թիթեղեայ տնակներում եւ փլատակ շէնքերում ապրողները ե՞րբ պիտի «ծիծաղեն», որ ամոքուեն իրենց ցաւերից: Անկախ Հայաստանի Հանրապետութեան Ազգային ժողովի պատգամաւոր միլիոնատէր օլիգարխները եթէ 26 երկար տարիների ընթացքում իւրաքանչիւրը մի քանի միլիոն դրամ յատկացնէր պատսպարելու համար երկտաշարժի աղէտեալներին, այսօր աւելի շատ մարդ կ՚ունենար Գիւմրին, քանի որ կենցաղային անտանելի պայմանների հետեւանքով ծնունդները պակասում են եւ արտագաղթը չի դադարում:*

*Անկախ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը պէտք է ուղիներ գտնի բազմացնելու ժողովուրդին, քանի որ ներկայ պայմանները թոյլ չեն տալիս ընտանիքներին բազմազաւակ դառնալ: Պէտք է ապահովուի ժողովրդի ապրուստի նուազագոյն պայմանները, որպեսզի դադարի արտագաղթը եւ շարունակուի ժողովրդի աճը՝ նպաստելով ծնելիութեան մակարդակի բարձրացման: Առանց ժողովրդի որեւէ պետութիւն չի կարող գոյատեւել:*

*Խոնարհւում ենք 1988 թ. երկրաշարժի անմեղ զոհերի յիշատակի առջեւ, յուսալով նաեւ, որ երկրաշարժից 26 տարի յետոյ տուժածները շուտով կ՚ունենան իրենց յարմարաւէտ բնակարանները:*


VA Print Media
Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles
Նոր Գիրքերու Տպագրութեան եւ
Հին Գիրքերու Նորոգութեան Համար
Հեռաձայնել՝ ՎԱՀԷ ԱՃԱՊԱՀԵԱՆԻն

Vahe Atchabahian
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

# ՊՏՂԱԲԵՐԸ ՅԱԼԱԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*ԲԱԳՐԱՏ ԷՍՏՈՒՔԵԱՆ*

*Ով եւ ինչ բան արգելք կրնայ ըլլալ դասականութեան, երբ հեղինակ մը յաջողած է գերազանցել իր ապրած ժամանակահատուածը: Օրինակի համար շուրջիններուն դժկամութիւնը, անհանդուրժողութիւնը, անհանդուրժողութեան հետեւանքով շիրիմն իսկ անյայտութեան մատնելը կրնայ պատճառ ըլ լալ, որ յաւիտենապէս կորչի ստեղծուած վաստակը: Մէկ կողմ թողունք անհատական դժկամութիւնները կամ թշնամութիւնը, լոկ ազգային պատկանելիութեան պատ ճառաւ որքան կրնաք քօղարկել հանճար մը, որ իր ապրած ժամանակներէն յաջողած է ցոլացնել մերօրեայ տարօրինակութիւնները:*

*Այս բոլորը ի զօրու էին արեւմտահայ գրականութեան անուանի թատերագրի Յակոբ Պարոնեանի հաշւոյն: Ան իսկապէս ալ հալածուած էր իր սրածայր գրչէն անհանգստացողներէ:*

*Մանաւանդ ալ իշխանամէտը կամ աւելի մերկ խօս քով լումայամէտ հոգեւորականները անտանելի դարձուցած էին իր կեանքը: Կ՚երեւի չէին բաւեր պալատին գրաքննութիւնները, թագաւորի մատնիչներու գրպարտութիւնները, ազգին ներկայացուցիչ համարուած աղաներ, ամիրաներ եւ անոնց փողը հնչեցնելու կամաւոր պաշտօնը ստանձնած թաղականներ, խնամակալներ ձեռք ձեռքի տուած կը տանջէին Պարոնեանը:*

*Մեր գրականութեան, յատկապէս ալ թատրերգութեան հսկան անտէրութեան մէջ մահացաւ, բաճկոնին գրպանը գլուխ մը սոխով:*

*Ով գիտէ, թերեւս այդ գլուխ մը սոխը ծիծաղելի ալ թուած էր բոլոր անոնց, որոնք միշտ դէմ եղած էին իր գրածներուն:*

*Բայց այդ գրածները Պարոնեանին պարգեւեցին անմահութիւն: «Ակօս»ի հրատարակութեան առաջին տարիներն էին, երբ խումբ մը ընկերներով ձեռնարկեցինք այս «շիրիմը անյայտ» հանճարին յուշարձան մը կառուցելու գործին: Իսթանպուլի հայոց արժանի նկարիչ ու քանդակագործ Էրոլ Սարաֆեան յանձն առաւ կիսանդրիի քանդակումը: Իսկ ճարտարապետ՝ Վազգէն Պարըն ձեւաւորեց մարմարեայ յենարանը: Երկար տատամսելու բան չէր, դիւրաւ համաձայնութիւն գոյացաւ տեղադրուելիք վայրին մասին: Նկատի ունենալով որ Պարոնեան երկար տարիներ բնակած էր Օրթագիւղ թաղին մէջ ու թաղուած էր նաեւ նոյն գիւղի գերեզմանատունը, կիսանդրին ալ պիտի դրուէր այդ գիւղի եկեղեցւոյն բակը:*

*Կիսանդրիի բացումէն ետք Ռոպէր Հատտէճեան գրքոյկի մը հրատարակութեամբ ողջունեց այս ձեռնարկը: «Յակոբ Պարոնեան վերադարձաւ» անուն այդ գրքին մէջ ան Պարոնեանի բերնէն ափսոսանք կը յայտնէր գինք անգամ մը եւս եկեղեցականներու, կղերականներու, սեւ սքեմ հագուողներու շրջափակը բատարկողներու դէմ:*

*Այդ ժամանակը ոչ մէկը կը կարծէր թէ քանի մը տարի անց թրքերէնով պիտի հրատարակուի «Ատամնաբուժն Արեւելեան» թատրերգութիւնը, որ շուտով ալ պիտի բեմադրուէր Իսթանպուլի Քաղաքապետական Թատրոնի կողմէ: Բազմածախս բեմադրութիւն մըն էր այս, որ արժանացաւ թատերասէրի ջերմ հետաքրքրութեան:*



*Նախքան այդ, Պողազիչի Համալսարանի թատերական ակումբն ալ գիւտը ըրած էր մեծ թատերգակի եւ յատուկ միջոցառում մը կազմակերպած Պարոնեանի վաստակին մասին: Այդ միջոցառման առթիւ համալսարանի դահլիճին մէջ դասախօսութիւն մը ներկայացուց գրականագէտ ու պատմաբան փրոֆ. Գէորգ Պարտաքճեան: Յաջորդ օր ալ խումբ մը թատերասէրներ Պարոնեանի ոտնահետքերով պզտիկ պտոյտ մը կատարեցին Պոլսոյ այն թաղերուն մէջ, որոնց մասին երգիծական վկայութիւններ փոխանցած էր Պարոնեան: Շարունակեց Պարոնեանի վերայայտնութեան պտղաբերումը եւ թարգմանուեցան ու հրատարակուեցան «Պաղտասար Աղբար» եւ «Մեծապատիւ Մուրացկաններ» թատրերգութիւնները: Հարկ է նշել որ «Պաղտասար Աղբար» տարիներ առաջ ալ յատուկ թարգմանութիւնով բեմադրուած էր Տրապիզոնի մէջ:*

*Բացի այս հրատարակութիւններէն, Իսթանպուլի Քաղաքապետարանն ալ գեղատիպ հատորով մը լոյս ընծայեց Պարոնեանի հիմնած ու հրատարակած «Թիյաթրօ/Թատրոն» երկլեզու պարբերականի նմանատիպը:*

*Բոլորովին վերջերս անգամ մը եւս կը քաղենք Պարոնեանի բուրաստանէն ծաղիկ մը՝ «Պտոյտ մը Պոլսոյ թաղերուն մէջ» յուշագրութիւնը: Հեղինակի երգիծական յատկութիւնները ամենացայտուն կերպով կը ցոլան մերօրեայ ընթերցողին, շնորհիւ յաջող թարգմանութեան: Իսկապէս ալ Փարիս Հիլտա Թէլէր Պապէկ շատ խօսուն թրքերէնով մը յաջողած է Պարոնեանի երգիծանքը ներկայացնել: Սակայն այստեղ ցաւով նշենք որ այս թարգմանութեան մէջ կարգ մը վրիպակներ պատճառ եղած են որ Պարոնեանի այս ժողովրդավարացման մէջ դոյզն իսկ ներդրում չունեցող գրիչներ հալածանքներ տեղացնեն թարգմանիչին դէմ: Երեւոյթը անգամ մը եւս մտածել կու տայ թէ, շատ քիչ բան փոխուած է անցնող ժամանակահատուածի ընթացքին: Անցեալին Պարոնեանը հալածողները, այժմ նոյն դժկամութեամբ կը յարձակին Պարոնեանը թարգմանողներուն վրայ: «Այսպէս է կարգն աշխարհի» կը քարկոծեն պտղատու ծառը: Եւ ով պիտի ըլլայ քարկոծողը, անշուշտ ան, որ պտղաբեր չէ, ըլլալու ալ նպատակ չունի:*

www.massispost.com

# «ՄՈԽՐԱՑԱԾ ՅՈՒՇԵՐ» ԳՐՔԻՑ

*ԱՐԱՔՍ ՄԱԿԱՐԵԱՆ*

*1998 թուականին Միացեալ Նահանգների Բոստոն քաղաքում լոյս է տեսել «Մոխրացած յուշեր» խորագիրը կրող մի գիրք, որը հետաքրքիր կարող է լինել իրանահայութեան եւ յատկապէս Թեհրանահայութեան բարքերը արձանագրելու տեսանկիւնից: Գրքի հեղինակն է Արաքս Մակարեանը՝ իրանահայ անուանի օպերայի երգչուհի՝ Շաքէ Մակարեանի մայրը: Նա այս գիրքը գրելու օրերին, բարձր տարիքում գտնուող, անկողնում գամուած կին է եղել, որ իրանահայ արձակագիր՝ Անդրանիկ Սարեանի հետ պատահական մի հանդիպումից յետոյ, նրա առաջարկով ու խրախուսութեամբ սկսել է գրել իր յուշերը: Նրա գրածները խմբագրել եւ գիրքը կազմել է Սարեանը, ով գրել է նաեւ գրքի նախաբանը: Ստորեւ ներկայացնում ենք երկու փոքրիկ հատուած, որոնց մէջ նկարագրուել է Վանաք գիւղի կեանքը երկրորդ համաշխարհային պատերազմի օրերին:*

## Մատաղը Վանաքում

*Պատերազմի առաջին տարին, 1940 թ. որպէս ամառանոց վարձել էինք այժմեան այգին, որը գնեցինք յաջորդ տարի:*

*Խառը վիճակ էր: Վատ եւ մտահոգիչ լուրեր էին տարածւում, որոնք մի տեսակ սարսափի էին մատնում ժողովրդին: Մի վիճակ, երբ թւում էր, թէ ով, ինչ ուզում է, կարող է անել: Գողութիւն, թալան, նոյնիսկ սպանութիւն եւ այլ չարիքներ...*

*Մի օր մեր մեքենավար Աշոտին, որը գիւղի լաւ տղաներից էր, ուղարկել էինք քաղաք գնումների: Մի քանի ժամ յետոյ դուրս ենք եկել գիւղի դարբասի յառաջամասի հրապարակը եւ քաղաքականութիւնից ենք խօսում ամէնքով, մէկ էլ հեռուից տեսնում ենք մեր Աշոտը՝ մի բարձրահասակ երիտասարդ իր երկար թեւերը թափ տալով գալիս է դէպի մեզ:*

*-Աշոտ, բա մեքենա՞ն,- հարցնում ենք նրան:*

*-Մի զինուորական կանգնեց մեքենայի առջեւ, ինձ հրամայեց իջնել ու ինքը նստեց մեքենան ու գնաց...*

*Շատ սովորական մի դէպք՝ այդ օրերին, երբ գահընկէց Ռեզա Շահին աքսորեցին անգլիացիները: Այդ բերումով, բոլոր զինուորականները խուճապի էին մատնուել, նրանք կամ թաքնւում էին հեռու գիւղերում, կամ փախչում երկրից:*

*Ամիսներ յետոյ մեր մեքենան գտնուեց Իսֆահանի ճամբին՝ քայքայուած դիակի նման:*

*Պարտէզում մնալը արդէն վտանգաւոր էր դարձել: Ապահովութիւն չկար: Գիւղում մի ընտանիքից երկու սենեակ վարձեցինք ամառը վերջացնելու համար, եւ ահա մի օր էլ ռումբ է ընկնում հայկական Վանաքի հողամասի մօտերքում, գործարանի մօտ, գիւղից հազիւ հինգ հարիւր քայլ հեռաւորութեան վրայ: Սարսափը տիրում է հայերին ու այդ ազդեցութեան ներքոյ, մի տիկին երազ է տեսնում, որ տիկ. Սաթենիկը դրամ է հաւաքում, որպէսզի մատաղ անելով պատերազմից փրկի Ս. Մինաս եկեղեցին: Եկան քրոջս մօտ, թէ նա պէտք է գլխաւորի եւ կարգադրի այս երազի իրականացման գործը...*

*Քոյրս գիւղից երեք հոգու հետ մի տետրակ ու մատիտ վերցնելով սկսեցին հանգանակութիւն անել: Պէտք է նշել, որ Վանաքի եկեղեցին միշտ էլ ունեցել է իր հոգաբարձութիւնը: Իսկ վերջին տարիներին էլ քոյրս հիմնեց Վանաքի Ս. Մինաս եկեղեցու Տիկնանց օժանդակ միութիւնը:*

*Դրամը հաւաքուեց, երեք մեծ ոչխար գնեցին ու ամառանոց եկած Թ.Հ.Կ. Եկեղեցասէր միութեան անդամուհի տիկ. Նինա Պետրոսեանի մայրը գլխաւորեց մատաղը եփելու եւ բաժանելու ծանր գործը՝ տեղացիների օգնութեամբ: Եկեղեցին ունի հսկայական պղնձէ մաքուր կլայեկած կաթսաներ: Աղիւսներից օջախներ շինեցին բակի պատի տակ ու եփեցին մատաղը:*

*Իւրաքանչիւր տուն իր ընտանիքի անդամների թուի համեմատ մի կաթսայ էր բերել իր բաժինն ստանալու, իսկ ով էլ չէր եկել, երիտասարդների միջոցով ուղարկւում եւ բաժանւում էր ամէնքին: Այսպիսով ժողովուրդը հաւատացած էր, որ մատաղը փրկեց Ս. Մինաս եկեղեցուն, եւ հայերին եւս ոչ մի վտանգ չպատահեց պատերազմի ամբողջ տեւողութեան ընթացքում:*

*Ամէն տարի Ս. Մինասի տօնին, ուխտաւորները գնում են ուխտի: Ոմանք ոտքով. շատերը նոյնիսկ գիշերում են եկեղեցում, ուր մի պատմական Աւետարան կայ, որով հպարտ է Վանաքի հայութիւնը:*

*Այդ եկեղեցում մկրտուել է մայրս, ես՝ Վարդավառին, աղջիկս՝ Շաքէն նոյնպէս Վարդավառին, եւ ընտանեկան աւանդութիւնը պահելու համար թոռնիկս էլ նոյն եկեղեցու աւազանում մկրտուեց Աստուածածնի տօնի օրը:*

*Մեր առաջին երեք սերունդները մկրտուել են նոյն քահանայի ձեռքով. դա հանգուցեալ վաստակաշատ Տէր Սահակ աւագ քահանայ Աբրահամեանն էր: Մայրս եղել է նրա առաջին մկրտուողը: Ձեռնադրուեց, յետոյ Շաքէս եղաւ վերջինը, երբ եկեղեցուց տարինք իր մօտ, պահպանիչ ասելու նրա գլխին: Նա իր վերջին օրերն էր ապրում:*

*Աւաղ, այլեւս աւանդութիւնը մեր ընտանիքում խախտուած եմ տեսնում՝ իմ վերջալոյսն ապրած օրերում...*

*Այդպէս եւ շատ ու շատ իմ նմանները, որոնք թողած հին աշխարհն ու հնաւանդ սովորութիւնները, նոր բնակիչներ են դարձել խորթ եւ օտար նոր աշխարհների:*

## Վանաքի Մարիամ Յարսը

*Թէ որտեղից էին բերել, կամ Վանաք էր ընկել այդ հարսը, չգիտեմ: Բարձրահասակ, շէկ, բարակիրան, բարակ մոմի նման մատնելով, մի լուռ ու մունջ կին էր: Լաչակը մինչեւ քիթը իջեցրած, ծնօտն ու բերանն էլ միշտ փակ:*

*Եթէ մէկի հետ էլ խօսելիս լինէր, հայեացքը կը մնար գետնին յառած: Խօսում էր շշուկով եւ ոչ ոք նրա ձայնը բարձր չէր լսել, ոչ ոք նրա բարկութիւնը չէր տեսել, եւ ոչ ոք նրան պարապ-սարապ, ծամոնը բերնին, գիւղի կանանց հետ զրուցելիս չէր տեսել: Առաքինութեան կատարեալ մարմնացում էր նա: Զաւակներն էլ հեզ էին, մօր նման՝ բարձրահասակ, շէկ, խելօք ու աշխատասէր:*

*Այդ հարսը մինչեւ խոր*

*Շար.ը էջ 20*

# ԵՐԱԽՏԱԳԷՏ ՀՐԵԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԸ

*Ռ. ԿՈՐԻՒՆ*

*Սեպտեմբերեան վառ արեւոտ օր, ընկերների մի խումբ՝ ութ հոգիներ, տեղաւորուած մի ինքնաշարժում, գլխաւորութեամբ՝ ընկեր Գեղամի ճանապարհուեցինք դէպի The Getty Center թանգարանային համալիրը, որտեղ Գեղամը մի քանի անգամ եղել էր, իսկ մեր առաջին անգամն էր: Բոլորս «երիտասարդ» մարդիկ՝ Գեղամ, Շաւարշ, Ջիբրայէլ, Շահէն, Վահան, Սեմիկ, Գուրգէն եւ Ռուբէն: Մեքենայում պարապ նստած չէինք, խօսակցութիւն էր գնում հայրենիքի անց ու դարձի, Արցախին կապւող իրադարձութիւնների մասին, թշնամու վերջին դիվերսիոն յարձակումներին մի լաւ դաս տալը մեր ուժերի կողմից գոհունակութեան ալիք էր առաջացրել մեր մէջ, բացի այդ՝ դէսից դէնից գրոյցներ ու յուշեր: Գեղամը հասակաւոր տարիքում է գտնւում, սակայն հենց հիմա էլ աշխուժ եւ գործունեայ մէկն է, հմուտ արհեստաւոր , իր բարձրորակ արհեստի շնորհիւ բարւոք կեանք է ստեղծել իր ընտանիքի համար, դեռ էս տարիքում էլ աշխատասէր կեանք է վարում: Նա քաղցր եւ համեստ բնաւորութեամբ սիրուած մէկն է ընկերական շրջանակում եւ օգտակար:*

*Մեքենայ վարելու ժամանակ նա բոլորիս հրաւիրեց լսելու իր կեանքում պատահած մի դէպքի մասին:*

*-Այս որ ուզում եմ պատմել իմ կեանքի ամենահետաքրքիր դէպքն է եղել, որը տարիներ ինչպէս նոր թխուած հաց մնացել է իմ յուշապատկերում, որը կարող էր իմ կեանքի հունը փոխել, ճակատագրական դեր ունենար, եթէ առաջադրանքը կատարէի, այսօր այս Գեղամը չէի, այլ ով գիտէ մի ուրիշ անունով նշանաւոր մարդ:*

*-Սիրելի Գեղա՛մ, իմ կարծիքով երբ մի ցանկութիւն կամ գործ իր ժամանակին չի իրականանում խելահասունութիւն չունենալու պատճառով եւ կորցնում է ընձեռնուած առիթը, նրա մասին խօսելը անիմաստ է, եթէներով ոչ տուն կը կառուցուի, ոչ էլ գործ կ'արուի, ամենայնդէպս շարունակիր, տեսնենք, վերջը ինչ է լինելու, մէկը տղաներից այսպէս իր մօտեցումը յայտնեց:*

*-Պատանեկութիւնս շրջած երիտասարդութեան տարիքումն էի գտնւում, էն խենթ ու կրակոտ ժամանակս, աշխատում էի հայի մօտ, պէտք է յիշեմ նրա անունը, վարպետ Երուանդ Յարութիւնեան, քանի տեղ գործեր ունէր, հոյակապ հայ մարդ, գործաւորութեան հասնող եւ օգնող էր, ուր որ է, թող ականջը խօսի: Ես որպէս հմուտ հաստոցավար, գործատիրոջս ուշադրութեան արժանի էի դարձել, նա իմ երթեւեկութեան համար մոտորցիկլետ էր գնել: Էն ժամանակները իմ նման տարիքի երիտասարդի համար թանկ հաճոյք էր, թաղի ընկերներս բարի նախանձով էին տրամադրուած, ջերմ վերաբերմունք էին ցոյց տալիս, որ իրենց նստեցնեմ, պտոյտի տանեմ:*

*-Միթէ՞ քանի տարեկանում ես աշխատանքի լծուել, որ տասնութին արդէն իսկ հմուտ հաստոցավար ես դարձել, տղաներից մէկը հարց ուղղեց:*

*-Պատանեկան տարիքից աշխատել եմ սկսել, սա էլ իր պատմութիւնն ունի, բայց թողնենք: Ամռան եղանակ էր, արձակուրդի քանի օրեր, ընկերոջս հետ իմ մոտորցիկլետով Ջալուսի ճամբով Կասպից ծով մեկնեցինք: Մեր օրերին նա Խճուղի էր, ոչ ասֆալտապատ, անտառների միջով ոլորապտոյտ երկարում էր դէպի ծովափ՝ բնութեան հրաշալի անձեռնմխելի տեսարաններով եզերուած՝ լեռներ, ձորեր եւ ամբողջութեամբ կանաչութիւն: Գիշերը մնացինք ծովափում, վաղ առաւօտեան ականատեսն եղանք արեւի ծագման, ջրի տարածութեան վրայ անարգելք արեգակի կենսատու ողջ գունդը երկինք էր դուրս եկել ցուցադրութեան, ինչպէս հարսը նազանքով ու կեցուածքով, սփռելով ոսկեթոյր ճառագայթ-շողերը: Մինչեւ կէսօր հաճելի ժամանակ անցկացրինք՝ լողալով, զբօսնելով եւ սնուելով, ապա վերադարձի նոյն ճամբան բռնեցինք:*

*-Զասացիր թէ ինչպէ՞ս մնացիք ծովափում, այսինքն բաց երկնքի տակ գիշերեցի՞ք, տղաներից մի ուրիշը հետաքրքրուեց.*

*-Մնացինք վարձու փլաժում (եղէգներից պատրաստուած յարմարաւէտ տնակ), այն օրերին, հետագային նոյնպէս, մինչեւ իսլամական յեղափոխութիւնը ծովափ գնացողները օգտւում էին աժան գիներով ջրափին դասաւորուած այդ փոքրիկ տնակներից: Իսկապէս շատ հաճելի էր գիշերը ծովի ալիքների մեղմ ծփանքի հնչեղութեան եւ աստղավառ երկնքի տակ գարեջուր խմել, զրուցել, երազներով տարուել եւ մուշ-մուշ քնանալ:*

*-Իրաւ որ այդպէս է, ես էլ եմ այդ հաճելի առիթներից ունեցել, ես կարծում եմ, բոլորս էլ այդ օրերը անց ենք կացրել, հաստատեց մի ուրիշը:*

*-Մենք հանդարտ եւ ուշադիր առաջ էինք գնում, հասել էինք Քարաջի նշանաւոր հիդրոէլեկտրակայանի աւազանին: Երկրորդ համաշխարհային պատերազմից յետոյ 1950 թուին կառուցուեց ամերիկացիների ջանքերով Քարաջ գետի վարար ջուրը կասեցնելով ամրակուռ ամբարտակի ետեւը, ուր առաջացաւ մի հսկայական լիճ, այդ տեղից Թեհրանի խմելու ջուրը եւ հոսանքը ապահովելու եւ մատակարարելու համար: Կարելի է ասել վիթխարի ստրատեգիական (ռազմավարական) ծրագիր, սարեր պայթեցուեցին, փապուղիներ բացուեցին: Աշխատում էին բազմաթիւ աշխատաւորներ, որոնց շարքին մեծաթիւ հայ վարպետ արհեստաւորներ եւ բանւորներ:*

*Էն օրերին Քարաջը մի փոքրիկ գիւղ էր, թեհրանցիների համար որպէս ամառանոց էր ծառայում գետափին կառուցուած առանձնատուններով, այդ հսկայական եւ կենսական կառոյցի պատճառով Քարաջը շատ զարգացաւ, հիմա նա Թեհրանի հարեւանութեան դարձել է մեծ քաղաք չորս-հինգ միլիոնից ոչ պակաս բնակչութեամբ:*

*-Ես եւ ընկերս հասել էինք Ջրամբարին, տեսանք մի երիտասարդ մոտորցիկլետով կարթը ձեռքին, որսորդական զէնքը ուսին մօտեցաւ մեզ պարսկերէն խօսելով, նա մեզ ներկայացաւ Քարիմէ Ռապինամթ անունով, հրեա էր:*

*-Կարո՞ղ եմ ձեզ միանալ Թեհրան գնալու համար, քանի որ մենակ եմ, կարող է օգնութեան կարիք զգացուի:*

*-Զմերժեցի նրա առաջարկը, կողք-կողքի ճանապարհը շարունակեցինք: Քարոտ եւ ոլորապտոյտ ուղին միասին ընթացանք եւ մօտ էր հասնէինք ասֆալտապատ ճամբին, նա մի ակնթարթում մեզանից առաջ ընկաւ փոշաթաթախ դարձնելով օդը, շատ չանցած բախումի ձայն լսեցինք, պտտահողմի պէս փոշի էր բարձրացել, հետաքրքրութիւնից ես իմ ընթացքը արագացրեցի դէպի դէպքի վայր: Մինչեւ այստեղ միտներդ պահէք, վերադարձին կը շարունակեմ, հասել ենք համալիրի կառատունը, պիտի ներս մտնենք:*

*Մեքենան տեղաւորուեց սահմանուած տեղում արտօնուած կտրոնով ժամը նշուած, որի հիման վրայ յետոյ վճարում պիտի կատարուէր: Հսկայ մի կառատուն հինգ յարկերից բաղկացած:*

*Վերելակով տեղափոխուեցինք գնացքի մօտ, ինչ կոկիկ կապինեթանման կառք (վագոն) բարձրախօսով եւ հաղորդիչներով օժտուած գնացք, մէկը գնում էր, իսկ միւսը ժամանում, երկուսը մետաղէ ոլորապիրկ մետաղէ պարաններով միացած, բարձրից դէպի ներքեւ եւ ներքեւից դէպի բարձունք իրար քաշող եւ հաւասարակշռութիւնը պահող:*

*Գնացքը երկար ճանապարհ կտրելով, աջ ու ձախը բնութեան տեսարաններ, դէպի բարձունք հասաւ: Դէմ հանդիման կանգնեցինք հսկայական մի բերդի, որի ներսում ճարտարապետական շէնքեր եւ կառոյցներ սպիտակին տւող սալերով ու յղկուած խոշոր քարաբեկորներով կառուցուած, կարծես՝ աշխարհի քարաժայռերը ամբողջ այստեղ էին բերուած: Շէնքերում գտնւում էին մեծ սրահներ, ուր հաւաքուած էին Եւրոպական, Ամերիկեան եւ մի շարք Ասիական երկրների տարբեր ոճի եւ տեսակի արուեստի թանկագին գործեր, ձեռարուեստի արարումներ:*

*Սրահները հսկւում էին պահակներով եւ չէր թոյլատրւում զետեղուած գործերին ձեռք տալ: Շէնքով շնորհքով բազմաթիւ պահակներ եւ պաշտօնեաներ, որոնց մէջ նաեւ հայեր կային: Վխտում էր մարդկանց բազմութիւնը տարբեր կողմերում, իւրաքանչիւր սրահ այցելելիս միայն հիացում ու զարմանք էր հնչում մեր շուրթերից, վիթխարի գանձ ու հարստութիւն, այդ բոլորը գնուած ու կենտրոնացած էր Գէթի (Getty )անունով մարդու կողմից որպէս սեփականութիւն, նրա մասին խօսելն ու գրելը երկարապատում գրութիւն կը պահանջէ մեր նիւթին չկապւող: Մուտքը համալիր անվճար էր, միայն իւրաքանչիւր մեքենայ մօտաւոր քսան դոլար էր վճարում կառավայրի համար: Ամբողջ համալիր-թանգարանը տիրապետող դիրքում էր բլուրի վրայ բազմած, որտեղից աչքի առջեւ էր Լոս Անջելըսի Down Town-ը իր երկնաքեր աշտարակներով եւ շրջակայ բնակավայրերով:*

*Բաւական երկար ժամեր տեւեց մեր պտոյտ-այցելութիւնը, վերջում յոգնած ու պարտասուած բացօթեայ ճաշարանում տեղ գրաւեցինք եւ Գեղամի նախապէս պատրաստած սնունդով կուշտ ու կուռ վայելեցինք եւ նոյն եկած ճամբով վերադարձանք մեքենայի մօտ: Դեռ ընկերներով հիացած եւ մեծ բաւարութեամբ էինք խօսում մեր այցելութեան մասին շնորհակալ լինելով Գեղամից:*

*Կէսօրը վաղ շուռ էր եկել, դէպի տուն ճամբի ընթացքում առաջարկուեց Գեղամը պատմութիւնը շարունակի:*

*-Դէպքի վայր որ հասանք, ինչ տեսնենք՝ երկու կին ամերիկեան խոցուած մեքենայի մօտ շուար ու մոլոր տագնապալի վիճակում, հարց ու փորձ արի, ինձ ասացին, թէ՝*

*-Մի երիտասարդ մոտորցիկլետով բախուեց մեզ մեր մեքենայով շուրջդարձ կատարելու ժամանակ եւ ինք մոտորցիկլետով ընկաւ ձորը:*

*-Մեքենայի վնասուածքը չնչին էր, ձորի պռնկին կանգնելով ստուգեցի, իսկապէս խորն էր նրա հետքը չտեսնւող, դեռ լոյս էր եւ արեւն երկնքումն էր, որոշեցի ինչ գնով եղել է փրկել նրան: Ընկերոջս կարգադրեցի մեր մոտորցիկլետի մօտ մնայ նրա կարթն ու զէնքը պահելով: Զգուշութեամբ եւ փրկութեան հաւատքով ձորն ի վար իջայ, յիշեցի նրա խօսքը, որ խնդրեց մեզ միանալ՝«Քանի որ մենակ եմ, կարող է օգնութեան կարիք զգացուի»:*

*-Ինչ մարգարէական նախազգուշացում, նկատեցի նրան խորքում ծառի մօտ երկար ընկած, իսկ մոտորցիկլետը մի ուրիշ կողմ: Մօտեցայ եւ ստուգեցի նրա վիճակը, աչքերը փակ էին, ոտքը արիւնլուայ, ինք յուշաթափ երկնցած, իսկ սիրտը բաբախում եւ թոյլ շնչում էր, փառք տուի Աստծուն, որ ողջ է, էլ չսպասեցի, շատ չարչարանքով նրան շալակած հասցրեցի մեքենայի մօտ եւ պահանջեցի կանանցից ճամբի վրայ ամենամօտ բուժօգնութեան հասցնեն: Ես նորից ձոր իջայ եւ դժուարութեամբ վեր հանեցի մոտորցիկլետը, շտկեցինք, դզեցինք եւ նեղութիւնով մեզ հետ քարշ տալով ճամբան շարունակեցինք այն յոյսով որ նրան կը հանդիպենք եւ իրերը կը յանձնենք:*

*Էս ինչ մարդասէր անձ, պատրաստակամ չարչարանքի եւ նեղութեան, ուրիշի կեանքը փրկելու յոյժ գնահատանքի եւ պարգեւադրման արժանի արարք:*

*-Ճամբի ընթացքում նկատեցի քարափին մարդիկ են հաւաքուած, ինչ տեսնեմ, մեր հրեա ուղեկիցը, անիծուած կանայք նրան սուս ու փուս ցած էին դրել եւ ծլկուել: Մարդկանց հասկացրի որ պէտք է օգնել նրան եւ մօտիկ բուժօգնութեան տանել: Բժիշկը նախնական խնամքներ եւ սրսկումներ կատարեց, նրա աչքերը բացուեցին, ոտ-*

*Շար.ը էջ 19*

**ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ**

**ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)**

**ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ**

**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**

**ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝**

**ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680**

# «ԱՆՈՒՇԱՒԱՆ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
# Ա. ԱԲՐԱՀԱՄԵԱՆ. «ՈՒԶՈՒՄ ԵՄ, ՈՐ ԱՒԵԼԻ ՅԱՋՈՂԱԿ ՀԱՅԵՐ ՔԱՋԱԼԵՐՈՒԵՆ ԵՒ ԻՐԵՆՔ ԷԼ ՆՄԱՆ ԳՈՐԾԵՐ ԿԱՏԱՐԵՆ»

*Հարցազրոյցը վարեց՝*
***ՀՐԱՉ ՍԵՓԵԹՃԵԱՆ***

*«Անուշաւան Աբրահամեան» Կրթական Հիմնադրամը (ԱԱԿՀ) հիմնադրուած է 2004-ին, Միացեալ Նահանգներու մէջ, որպէս բարեգործական կազմակերպութիւն, որուն նպատակն է «աջակցել ամբողջ աշխարհի երիտասարդութեանը եւ սկզբնապէս գործելով Հայաստանում՝ հիմնելով իր մասնաճիւղը Երեւանում եւ գրանցուել որպէս հայկական ոչ-շահութաբեր կազմակերպութիւն»: «Ծրագրի խնդիրներից է նաեւ նպաստել նուազեցնելու ներկայիս երիտասարդութեան արտագաղթը գիւղական շրջաններից եւ գիւղերից դէպի Հայաստանի քաղաքները...»:*

*ԱԱԿՀ-ն ներկայիս Հայաստանի տասը մարզերուն մէջ կը պահէ տասը արհեստագիտական ուսումնարաններ, ուր աւելի քան 4000 միջնակարգ վարժարանի տարիքի աշակերտներ կը սորվին ու կը տիրապետեն զանազան արհեստներու: Այդ դպրոցները նորոգուած, վերանորոգուած ու վերածնած են ԱԱԿՀ-ի նիւթական ներդրումներով եւ հետեւողական ջանքերուն շնորհիւ:*

*Ահաւասիկ, ինչպիսի նպատակներ կ'իրականացնէ ԱԱԿՀ-ն, որ իր տասներորդ տարեդարձը նշեց վերջերս, յատուկ հրաւէրներով կայացած հանդանակութեամբ: Տէր եւ Տիկին Անուշաւան եւ Օֆիկ Աբրահամեաններուն կատարած բարեգործութիւնը կը հետապնդէ նաեւ մէկ այլ նպատակ. բարի նախանձը շարժել մեր այն հայրենակիցներուն, որոնք կարողութիւնն ու փափաքը ունին օգնելու հայրենիքին, սակայն ինչ-ինչ պատճառներով դիտողի դերին մէջ են:*

*Անուշաւան Աբրահամեան ծնած է Իրան: Երիտասարդ տարիքին անցած է Գերմանիա, ուր ապրած է 27 տարի: Ամուսնացած է, ունի երեք դուստրեր, որոնք ծնած են Գերմանիա: Ապա, ընտանեօք տեղափոխուած են Միացեալ Նահանգներ: Աւելի մօտէն ծանօթանալու համար այս համեստ հայուն կատարած աշխատանքին, հետեւեալ զրոյցը ունեցանք անոր հետ:*

- Պրն. Աբրահամեան, ինչպէ՞ս ծնաւ, կեանքի եկաւ կրթական այս հիմնադրամը:

*- Երկար տարիների երազի իրականացում է հիմնադրամը: Ես որոշել էի Հայաստանի շրջաններում գիշերօթիկներ բացել ծնողազուրկ կամ կարիքաւոր երեխաների համար: Հայաստանի կառավարութեան հետ խորհրդակցելով, մանաւանդ ընկերային հարցերի, քաղաքաշինութեան եւ կրթական նախարարութիւնների հետ (այն ժամանակ Սերգէյ Երիցեանն էր նախարարը), ունեցանք գործնական հանդիպումներ: Հասանք այն եզրակացութեան, որ փոխանակ երկու շինութիւն կառուցենք, եղածը՝ հնացածը, լքուած արհեստագործական դպրոցները նորոգենք, վերակառուցենք, բարելաւենք:*

*Հայաստանը անկախացումից յետոյ շատ վատ վիճակում էր գտնւում. նոր պետութիւն էր, նոր բիւտճէով, երկրաշարժ, արցախեան պատերազմ եւ արտագաղթ, եւ միւս կողմից էլ, կրթական ոլորտում ընդհանուր ուշադրութիւնը ուղղուել էր միայն հանրակրթականին եւ համալսարաններին. անհրաժեշտ էր կենտրոնանալ երիտասարդ արհեստաւոր դասակարգին վրայ: Գաղթողներն ընդհանրապէս արհեստաւորներ էին: Այդ տարիներին որեւէ բարձրագոյն կրթութիւն ստացած արհեստաւոր չկար: Հայաստանը վերակառուցման կարիք ունէր: Բայց միայն իրաւաբանները, բժիշկներն ու հաշուապահները չէին կառուցելու երկիրը: Պէտք ունէինք ջրամատակարարման եւ շինարարութեան վարպետների, խոհարարական, վարսայարդարման ու նման աշխատանքներ կատարողների, եւայլն:*

*Այստեղից էլ ծնուեց մեր որոշումը. երկու դպրոց վերցնելու փոխարէն մեր ծրագրերը իրագործենք մարզերում: Ընտրեցինք ամէն մէկ մարզում մէկ դպրոց, բացի Երեւանից: Մայրաքաղաք-Գիւմրի ճանապարհին են գտնւում Մարալիկն ու Արթիկը, ուր այդ տարիներին ոչինչ չկար: Գիւղացիների միակ ունեցածը հողն էր: Կամ ասենք Վարդենիսի շրջանը, Սեւանի միւս ափին. ամէն ինչից հեռու եւ Ազրպէյճանի սահմանից միայն տասը քիլոմեթր հեռաւորութեան վրայ: Այս եւ նման շրջաններում ոչինչ չկար, որ երիտասարդ տղաներին եւ աղջիկներին պահէր այնտեղ: Լաւագոյնը նրանց համար գնալն էր Եւեւան, Սոչի կամ Մոսկուա եւ այնտեղ էժան աշխատուժ լինել: Որոշեցինք շրջանները զարգացնել, որպէսզի այդ տարածքները չդատարկուեն:*

- Ինչպէ՞ս գործի անցաք. ո՞րն էր գործնական առաջին քայլը:

*- Նախ եւ առաջ ասեմ, որ շէնքերը շատ կիսաքանդ վիճակում էին: Առաջին քայլը եղաւ շինութիւնների տանիքները սարքել, ջեռուցում ապահովել (իտալական մեքենաներով՝ գազով եւ դիզելով), պատուհանները նորոգել: Յաջորդ քայլը զուգարաններ տեղադրել. շատ շէնքեր չունէին զուգարան, դրանք դրսում էին եւ առանձին: Լուծուեց նաեւ ջրամատակարարման հարցը:*

*Այս ընթացքում նախարարութիւնների հետ կազմեցինք մեր տասնմէկ հիմնական արհեստների ցուցակը: Առաջին փուլում ամէն մի դպրոցում երեք արհեստանոցներ ունեցանք. վարսավիրական-դիմայարդարման, հասարակական սննդի եւ սպասարկման, եւ երրորդը՝ կար ու ձեւի: Ոչ միայն աղջիկներ, այլեւ մեծ թուով տղաներ նոյնպէս հետեւեցին այս ծրագրերին: Դրանից յետոյ երկու նոր արհեստանոցներ բացեցինք՝ փայտամշակութեան եւ շինարարութեան: Շէնքային պայմաններից ելնելով, միայն երկու դպրոցներ չունեցան փայտամշակման բաժին: Վերջինը՝ համակարգիչների դասարանն է: Իսկ հիմա փորձում ենք բարեկարգել մեր ունեցածը եւ նոր ծրագիրներ ներդնել:*

- Պրն. Աբրահամեան, ուրեմն կան նաեւ նոր ծրագիրներ: Խօսինք այդ մասին:

*- Նոր ծրագրերից առաջինը ջրամատակարարման (plumbing) խնդիրն է, որ ծախսատար է: 10-15,000 տոլարի փոխարէն, իւրաքանչիւր դպրոցի համար 40-50,000 տոլարի ծախս է պահանջւում: Երկրորդ նոր ծրագիրը, որի վրայ աշխատում ենք Robotics-ն է: Սա գիտաշխատանոց է (lab), որի համար համագործակցում ենք տարբեր ընկերութիւնների հետ: Մենք ենք առնելու իրերը եւ իրենք են սովորեցնելու: Շատ հեռանկարային մասնագիտութիւններ են Robotics-ը եւ 3D printing-ը:*

*Ճիշդ է, որ դպրոցի շէնքերի մեծ մասը նորոգել ենք, նորերն ենք կառուցել, բայց դեռ շատ աշխատանք կայ: Այլ խնդիր է քաղաքների եւ գիւղերի միջեւ փոխադրամիջոցների ապահովումը, որպէսզի աւելի հեշտացնենք խնդիրը: Մտածում ենք նաեւ ուսումնական հաստատութիւններին կից հանրակացարաններ կառուցել:*

- Պրն. Աբրահամեան, Հոկտեմբերի վերջաւորութեան դրամահաւաքհանդիպում մը տեղի ունեցաւ, ուր նշուեցաւ նաեւ ԱԱԿՀ-ի 10-ամեակը: Խնդրեմ, երկու խօսք այդ մասին:

*- Այո, վերջերս նշուեց մեր հիմնադրամի 10-ամեակը եւ այդ օր մեր աշխատանքների մասին տեղեկութիւններ տուեց Պրն. Լեւոն Թորոսը: Նա հայ գիտնական է, անդամ տարբեր հայկական կազմակերպութիւնների: Նախքան մեր հիմնադրամը կազմելը, միասին աշխատել ենք Ամերիկահայ ճարտարագէտների եւ գիտնականների միութեան, «Հայրենիք» միութեան եւ «Վարդանանց Ասպետներ» կազմակերպութեան մէջ: Հարկ է նշել, որ նա մեր հիմնադիրներից է:*

- Ինչպէս կը հոգացուին ծախսերը: Ուսուցիչներ, տնօրէններ, վերջապէս նիւթականի կարիքը հսկայական է:

*- Երբ որ սկսեցինք իւրաքանչիւր հաստատութեան մէջ 20-ից 110 աշակերտ ունէինք. հիմա՝ 250-ից 450: Բոլորը միասին մօտ չորս հազար: Ուսուցման կողքին, ներկայումս որոշել ենք Մարալիկի դպրոցից 70 հոգու՝ աշակերտ եւ ուսուցիչ մկրտել: Մեր հիմնադրամը կնքահայրի պարտականութիւնը վերցրել է իր վրայ:*

*Շատ դժուար է այս բոլորը ֆինանսաւորել եւ ներդրումներ կատարել: Եթէ աւելի մեծացնենք մեր ծրագրերը, մեր ծախսերն էլ աւելի պիտի մեծանան: Դրա համար, Արեւմտեան Թեմի առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի առաջարկով, սկսեցինք համագործակցել Ս. Էջմիածնի հետ: Ամէն մի թեմից մէկ հոգեւորական նշանակուեց, որ մաս կազմի եւ գլխաւորի մեր անկախ յանձնախմբերից իւրաքանչիւրը, կազմուած ծնողներից, ուսանողներից եւ ուսուցիչներից: Ամէն Սեպտեմբերի նոր յանձնախումբ է ընտրւում: Այս յանձնախմբերն աշխատում են տեղում լուծել առաջնահերթ խնդիրները:*

*Այստեղ, Լոս Անճելըսում, մենք ունենք ծրագրերի մեր յանձնախումբը, որը քննարկում է եւ մեր տնօրէնների խորհրդին առաջարկներ է անում:*

*Մեր հիմնադրամը Հայաստանում գրանցուած է որպէս բարեգործական կազմակերպութիւն, որի շնորհիւ մենք հարկեր չենք վճարում. տրազերծ ենք: Երեւանի գրասենեակի տնօրէնն է Պրն. Մայիս Վանոյեանը: Ամբողջ աշխատանքը վերահսկւում է շատ օրինաւոր եւ թափանցիկ: Նուազագոյն ծախսերով փորձում ենք առաւելագոյնին հասնել:*

*Տասը տարի անսայթաք գնացել ենք: Ես շատ հպարտ եմ, որ իմ սկսած համեստ աշխատանքով, հիմա չորս հազար երիտասարդի կեանքին նպաստող մեծածաւալ ծրագիր ենք ստեղծել: Միւս կողմից, երբ ես Հայաստանում եմ լինում այնպէս են դիմաւորում, որ ես հասկանում եմ որ աշխարհում ոչ մի բան չի կարող գերազանցել մարդկանց օգնելու զգացողութեանը:*

*Անցնող տասը տարիներին անձնապէս մօտ մէկուկէս միլիոն տոլար ենք ծախսել: Բայց հիմա արդէն ընդունում ենք նուիրատուութիւններ եւ համագործակցում տարբեր ընկերութիւնների հետ: Օգտուելով առիթից, գործակցութեան կոչ եմ անում մեր հայրենակիցներին: Վստահ եմ, որ ինձանից շատ աւելի կարող մարդիկ կան մեր գաղութում, Ամերիկայում: Ուզում եմ, որ աւելի յաջողակ հայեր քաջալերուեն, որ իրենք էլ նման գործեր անեն: Հասկանում եմ, որ շատ կասկածներ կան, Հայաստանում հեշտ չէ գործ կատարելը, բայց ես պատրաստ եմ նպաստելու բոլոր նրանց, ովքեր ուզում են օգնել Հայաստանին: Մենք այսքան տարուան մէջ ոչ մէկ սէնթ կաշառք չենք տուել, որովհետեւ մենք միայն օրէնքով ենք աշխատում: Հայաստանում օրէնք կայ, միայն թէ մարդիկ համբերութիւն չունեն, որպէսզի օրէնքով աշխատեն:*

- Իսկապէս օրինակելի եւ շնորհաւորելի է ձեր առած քայլն ու կատարած աշխատանքը: Շնորհակալութիւն Պրն. Աբրահամեան. դուք շատ ճիշդ նշեցիք, որ անոնք որ փափաքը եւ կարողութիւնը ունին օգնելու Հայաստանին, թող բարի նախանձով մօտենան ձեր գործին, միանան եւ կամ իրենց ծրագիրները ներկայացնեն ու գործադրեն:

*Կը շնորհաւորենք «Անուշաւան Աբրահամեան» Կրթական Հիմնադրամին 10-ամեակը, մաղթելով յարատեւ վերելք: Յաւելեալ տեղեկութիւններու համար այցելել www.aaefund.org:*



## 10 ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՐՈՆՔ ԿՐՆԱՆ ՍՊԱՌԵԼ ՄԵՐ ՈՒԺԸ

*Կեդրոնացումը անհրաժեշտ է աշխատանքի եւ արդիւնաւէտութեան համար, իսկ երբ իմանանք մեր կեդրոնացումը շեղող գործօններուն մասին բնականաբար վերջ կը փորձենք դնել անոնց: Օրինակ. Աղմուկը, անքնութիւնը, անօթութիւնը, ջղայնութիւնը գործօններ են, որոնք կրնան դժուարացնել մեր կեդրոնացման գործընթացը: Հարցը լուծելու համար կը հեռանանք աղմուկէն, անքնութեան պարագային կը քնանաք, անօթութեան պարագային կը ճաշենք, եւայլն:*

*Նոյն տրամաբանութեամբ, կեանքը մեր փափաքած ձեւով ապրելու աշխատանքի ճանապարհին վրայ խոչընդոտներ գոյութիւն ունին, որոնց պէտք է դէմ դնենք: Ժամանակի ընթացքին կարգ մը արարքներ կրկնութեան բերմամբ կը վերածուին սովորութիւններու, որոնցմէ ձերբազատուիլը կը դժուարանայ:* www.the-open-mind.com *կայքը հրատարակած է տասը սովորութիւններու մասին յօդուած մը, որոնք կրնան ի զուր վատնել մեր ուժը: Ահաւասիկ տասը սովորութիւնները:*

*1.Ջեւացնել թէ ամէն բան կարգին է: Մարդ արարածը իր բնոյթով հակամէտ է յոգնածութեան, դժգոհութեան եւ ուժասպառութեան: Բնական է, որ մեր կեանքի ընթացքին առնուազն մէկ անգամ ուժասպառ դառնանք եւ մեր համբերութիւնը հատնի՝ կարգ մը անձերու, յարաբերութիւններու կամ աշխատանքներու նկատմամբ: Կարեւոր է իմանալ, որ մեր զգացումները արտայայտելը եւ զանոնք ընդունիլը կը լուծէ բազմաթիւ հարցեր: Պէտք չէ մտածել, որ նման զգացումներ ունենալը ամօթ է կամ անբնական է: Նոյնիսկ արցունքներով արտայայտուիլը օգտակար է մեր հոգեկան առողջութեան: Որքան կանուխ արտայայտենք մեր ժխտական զգացումները, այնքան կը դիւրանայ մեր կեանքի ընթացքը սրբագրելու աշխատանքը:*

*2.Աւելի տալ, որ անցեալը քայքայէ մեր ներկան եւ ապագան: Բոլորս ունինք անցեալի պահեր, որոնք մեզ տանջած են եւ մեր մօտ կերտած են վատ յիշատակներ: Այս յիշատակներն ու դէպքերը բնական է, որ պիտի չկորսուին, այլ՝ պիտի մնան մեր մտքերուն մէջ եւ երբեմն պիտի թարմանան մեր յիշողութեան մէջ: Սակայն, ժամանակ մը ետք, առողջ ընթացք ունենալու համար, անոնք պէտք է դադրին մեզ տառապեցնելէ: Այս ընթացքին մէջ մենք ունինք մեծ դեր: Օգտակար է վերատեսութեան ենթարկել մեր ըմբռնումները անցեալին պատահած դէպքերուն վերաբերեալ եւ վերլուծել մեր ցաւի եւ տառապանքի աղբիւրները՝ անոնց հետ հաշտուելու համար: Առողջ ապագան կը կերտուի առողջ ներկային վրայ:*

*3.Համոզուած ըլլալ թէ դրական դէպքերը տեղի ունեցած են անցեալին կամ տեղի պիտի ունենան ապագային: Այս մտա ծումով, կրնանք քայքայել մեր ներկան: Իրականութեան մէջ, մենք ենք որ կը կերտենք մեր կեանքը եւ կը մշակենք յիշողութիւններ: Եթէ համոզուած ըլլանք որ անցեալին պատահած լաւութիւնները անկրկնելի են, ապա մեր ներկան կը դառնայ դժբախտ: Իսկ երբ հաւատանք որ միայն ապագան է որ մեզ պիտի բերէ լաւ օրեր, ապա դժգոհութեամբ պիտի ապրինք մեր ներկան: Մեր ամբողջ կեանքը կը վատնենք սպասելով ապագային կամ երանի տալով անցեալին: Հոգեբաններ կը շեշտեն թէ ներկայ պահը ամէնէն կարեւոր պահերէն մէկն է, որուն հիման վրան կրնայ կերտուիլ մեր ապագան:*

*4.Դիմադրել կեանքի դէպքերու ազդեցութիւնները բնաւորութեան եւ մտածելակերպին վրայ: Անժխտելի է այն իրողութիւնը թէ մարդ արարածը կրնայ մեծապէս ազդուիլ կեանքի դէպքերէն եւ դժուարութիւններէն: Կարգ մը մարդիկ դժուարութեամբ կ՛ընդունին իրենց անձի փոփոխութիւնը եւ այդ միջոցին կը տառապին: Ընդհանրապէս դժուարութիւններն են, որոնք կը բարելաւեն մեր բնաւորութեան գիծերը եւ մտածելակերպը:*

*5.Դիմադրել փոփոխութիւնները եւ յառաջդիմութիւնը: Անհրաժեշտ է ընդունիլ թէ կեանքի ամէնէն հետաքրքրական եւ օգտակար պահերը տեղի կ՛ունենան երբ մենք փորձենք դուրս ելլել մեր տարիներու ընթացքին կերտած պատեանէն: Որքան ալ ապահով թուի այդ պատեանը, եթէ օր մը անդրադառնանք թէ մեզ կը նեղացնէ, պէտք է ջանք թափենք փոփոխութիւններ կատարելու մեր կեանքին մէջ եւ դուրս ելլելու անկէ: Երբ անհանգիստ զգաք իմացէք թէ փոփոխութիւն մը տեղի կ՛ունենայ, իսկ փոփոխութիւնը կեանքի սկիզբն է եւ ոչ՝ աւարտը:*

*6.Ջափազանց մտահոգուիլ: Մտահոգութիւնը ներկայ պահը վայելելու հիմնական խոչընդոտներէն մէկն է: Ան կը զբաղեցնէ միտքը եւ կը թերացնէ կեդրոնացումն ու առողջ մտածելու կարողութիւնը: Հետեւաբար, չափազանց մտահոգութիւնը կը զբաղեցնէ միտքը եւ կը նուազեցնէ արդիւնաւէտութիւնը: Սակայն, կարեւոր է նաեւ նշել, որ մտահոգութիւնը անխուսափելի է, իսկ ոմանց պարագային մաս կը կազմէ առօրեայ կեանքին: Մտահոգութիւնը նշան է հարցի մը գոյութեան, հետեւաբար երբ մտահոգուինք անպայման պէտք է փնտռենք հարցին աղբիւրը եւ լուծենք զայն:*

*7.Միակողմանի զիջումը: Շատ մը մարդոց համար դժուար է «ոչ» ըսել կամ մերժել այլ մարդոց առաջարկներն ու խնդրանքները: Սակայն որոշ ժամանակ մը ետք, այս երեւոյթը ուժասպառ կը դարձնէ մեզ մանաւանդ երբ նման զիջումները ըլլան միակողմանի: Երբ մենք զիջինք անձի մը համար, անհատը պէտք է անդրադառնայ թէ ինք եւս պէտք է զիջի, որպէսզի գոյատեւէ յարաբերութիւնը: Ուրիշներու հոգալու կողքին, նաեւ կարեւոր է հոգալ մեր անձին: Սխալ է այն ըմբռնումը թէ մեր անձին նկատմամբ հոգատարութիւնը անձնասիրութիւն է:*

*8.Հարցերը միշտ անձնականի վերածել: Անգլերէն լեզուով ասացուածքի մը համաձայն՝ աներեւակայելի ազատութիւն կը ստանաս երբ խուսափիս հարցերը անձնականի վերածելէ: Հազուադէպ է, որ մարդիկ քեզ ուղղակի վիրաւորելու կամ վնաս հասցնելու համար կատարեն որոշ արարք մը: Ընդհանրապէս, մարդիկ անգիտակցաբար կը վիրաւորեն ուրիշները: Պէտք է լաւ վերլուծել մեր միջավայրին մէջ գտնուող մարդոց կացութիւնները եւ վարուելակերպին պատճառները:*

*9.Աւելի տալ, որ ժխտական միտքերը իշխեն մեր մտածելա - կերպին վրայ: Բոլորս ունինք կարծրատիպեր (*stereotypes*), ժխտական միտքեր, քննադատութիւններ եւ դատողութիւններ, սակայն երբ մեր որոշումները եւ զգացումները կախեալ դարձնենք այս միտքերէն, դժուարութեամբ կը հասնինք երջանկութեան: Այս ժխտականութեան ընթացքը ընդհատելու համար կարեւոր է միշտ յիշել ուրախ պահերը, դրական յիշատակները եւ շրջապատուիլ դրական անձերով:*

*10.Սարսափիլ անորոշութենէն: Անորոշութիւնը ամէնուր է եւ ամէն ժամանակներու պարագային գոյութիւն ունի: Կարեւոր է իմանալ, որ ուրախութիւնը կը կարօտի քաջութեան: Պէտք չէ խուսափիլ այն կացութիւններէն, որոնք կը պահանջեն յաւելեալ քաջութիւն եւ համարձակութիւն: Քաջութեամբ է, որ կ'իրագործուին մեր երազները:*

*Հոգեբաններ կը շեշտեն թէ վերոյիշեալ տասը վնասակար սովորութիւններէն ձերբազատուիլը կը բարելաւէ մեր կեանքի մակարդակը եւ կը ստեղծէ դրականութիւն մեր միտքերուն մէջ: Այս ձեւով մենք նաեւ կրնանք նպաստել մեր շրջապատի դրականութեան:*

## ՅԱՒԵԼԵԱԼ ԲՐՈԹԻՆԻ ՔԱՆԱԿԸ ԱՌՆՉՈՒԱԾ Է ՍՔԻԶՈՖՐԻՆԻԱ ԱՆՀԱՆԳՍՏՈՒԹԵԱՆ ՀԵՏ

*Սքիզոֆրինիա հոգեբանական անհանգստութեան հետ կապուած նախապէս յայտնաբերուած ծինը՝* NOS1AP *կրնայ ուղղակի կապ ունենալ անհանգստութեան զարգացման հետ:*

Biological Psychiatry *ամսաթերթին համաձայն՝* NOS1AP *ծինը կրնայ ազդել ուղեղի կառոյցին վրայ եւ ծինային փոփոխակը կրնայ պատճառ դառնալ ուղեղի անբնական կառոյցին՝ նոյնիսկ ծնունդէն տարիներ ետք:*

*Այս գծով նորագոյն հետազօտութիւնները յայտնաբերած են թէ* NOS1AP *ծինին մէջ յաւելեալ բրոթինի քանակը կրնայ փոփոխութեան ենթարկել ուղեղի բջիջներուն կառուցուածքը՝ կարճեցնելով անոնց հաղորդակցութեան պատասխանատու մասերը:* Dentrite*-ները, որոնք ուղեղի բջիջներուն մաս կազմող ճիւղաւոր թելերն են՝ պատասխանատու են բջիջներու միջեւ «տեղեկութիւններու» փոխանակումին: Երբ* dendrite*-ները քանակով քիչ եւ կարճ ըլլան, կը խախտեն ուղեղին մէջ տեղի ունեցող հաղորդակցութիւնները:*

*Ուղեղի բջիջներուն միջեւ տեղի ունեցած հաղորդակցու թիւններու շնորհիւ է, որ մարմինը կը կատարէ անհրաժեշտ աշխատանքներ: Այս հաղորդակցութիւնները նաեւ կ՛ապահովեն թէ՛ մտային եւ թէ՛ ֆիզիքական առողջութիւնը:* NOS1AP *ծինին մէջ յաւելեալ բրոթինը յատկապէս կը խանգարէ ուղեղի* neocortex *մասը, որ պատասխանատու է գիտակից մտածողութեան, տրամաբանութեան, շարժիչ կարողութիւններուն, զգայարաններու միջոցով ընկալման եւ լեզուի մշակումին: Երբ ուղեղի այս բաժինին մէջ գտնուող բջիջները ունենան անբնական հաղորդակցութիւն, անհատը կրնայ ցուցաբերել սքիզոֆրինիա անհանգստութեան ախտանշանները:*

*Հակառակ, որ հոգեբաններ եւ գիտնականներ մինչեւ այսօր չեն յաջողած յայտնաբերել սքիզոֆրինիայի յստակ պատճառները, անոնք յայտնաբերած են գործօններ, որոնք կրնան նպաստել անհանգստութեան զարգացման: Այս գործօններէն մէկն է* NOS1AP *ծինին մէջ գտնուող յաւելեալ բրոթինի քանակը, որ ուղղակի ազդեցութիւն կրնայ ունենալ ուղեղի բջիջներուն վրայ՝ զանոնք դարձնելով անբնական:*

*Ամերիկացի գիտնականները այս եզրակացութեան հասնելու համար փորձարկումի ենթարկած են մուկեր՝ քննելով անոնց* NOS1AP *ծինին եւ ուղեղի կառոյցին միջեւ կապը: Սքիզո ֆրինիայէ տառապող անհատներուն մօտ նաեւ սովորական է ուղեղի քիմիական նիւթերուն անհաւասարակշռութիւնը:*

*Նշենք, որ աշխարհի բնակչութեան միայն մէկ առ հարիւրը ախտաճանաչուած է սքիզոֆրինիա անհանգստութեամբ: Այս անհանգստութեան հաւանականութիւնը 10 առ հարիւրով կը բարձրանայ սքիզոֆրինիայէ տառապող անձի մը ընտանեկան պարագաներուն մօտ: Սքիզոֆրինիայի հիմնական ախտանշաններն են՝ երեւակայութեան պատրանքը, անկանոն խօսակցութիւնը, անկանոն մարմնի շարժումները եւ զգացական հարցեր:*

## ԻՇԽՈՂ ԱՆՁԵՐՈՒ ՄՕՏ ԴՐԱԿԱՆ ՅԱՏԿՈՒԹԻՒՆ ՄԸ

*Ընդհանրապէս յարաբերութեան, ընկերութեան կամ բարեկամութեան մէջ իշխող անհատները հաճելի չեն մնացեալ անձե րու կողմէ: Իշխող անձերը յաճախ կը պարտադրեն իրենց կարծիքները եւ կ՛անտեսեն իրենց կարծիքը հակասող միտքեր եւ գաղափարներ: Անոնք նաեւ չեն սիրեր խրատ ստանալ այլ մարդոցմէ եւ անպայման կը կատարեն իրենց ծրագիրները: Այս բոլորը ընկերութեան կողմէ կազմուած տեսակէտներ են եւ չունին գիտական հիմք:*

*Այս գծով, ընկերային հոգեբանութեան ծիրին մէջ ուսումնասիրութիւն մը կատարած է Հոլանտայի* Redboud *համալսարանի հետազօտական խումբը: Ըստ հետազօտութեան արդիւնքներուն, ճիշդ է, որ իշխող մարդիկ անպայման կ՛իրագործեն իրենց ծրագիրները, սակայն անոնք տարբեր ռազմավարութիւններ կ՛օգտագործեն իրենց նպատակներու իրականացման համար: Անոնք յաճախ կը դաշնակցին այլ մարդոց հետ եւ կ՛ընդունին ուրիշներու կարծիքները եւ համոզիչ գաղափարներով կը ներկայացնեն իրենց գաղափարները:*

*Սակայն այս չի նշանակեր թէ գոյութիւն չունին բռնատիրութեամբ իշխող անձեր: Հոգեբանները տարբերութիւն կը դնեն* aggressive *ձեւով իշխող եւ պարզապէս իշխող անձերու միջեւ:*

*Առաջինին պարագային է, որ ընկերութեան կողմէ կազմուած տեսակէտները կրնան ամրապնդուիլ: Հետազօտները դիտել կու տան թէ կարելի չէ բոլոր իշխող անհատները համախմբել եւ զանոնք պիտակել, որպէս բռնատէր: Ըստ հետազօտութեան արդիւնքներուն՝ իշխանութիւն սիրող մարդիկ կրնան դրական եւ ընկերային ըլլալ:*

## ՄԱՀԱԶԴ



*ՀՌԻՓՍԻՄԷ ԼԱՋԻՆԵԱՆ*
*( 1928-2014)*

*Խոր կսկիծով կը սգանք մեր մօր, մեծ մօր եւ հարազատին ՀՌԻՓՍԻՄԷ ԼԱՋԻՆԵԱՆի մահը որ պատահեցաւ Ուրբաթ, 5 Դեկտեմբեր 2014ին: Թաղման Եկեղեցւոյ կարգը տեղի պիտի ունենայ Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ Ուրբաթ, 12 Դեկտեմբեր, 2014ին առաւօտեան ժամը 11:00ին, որմէ ետք թաղման գերեզմանի կարգը տեղի պիտի ունենայ Փասատինայի Mountain View գերեզմանատան մէջ, 2400 North Fair Oaks Avenue, Altadena, CA:*

*Սգակիրներ՝*
*Տէր եւ Տիկ. Կարօ եւ Սոնա Լաչինեան եւ զաւակները*
*Տէր եւ Տիկ. Լեւոն եւ Լուսին Լաչինեան եւ զաւակները*
*Տէր եւ Տիկ. Յովիկ ԵՒ Արմինէ Լաչինեան եւ զաւակները*
*Տէր եւ Տիկ. Ջոհրապ եւ Սեդա Պօղոսեան եւ զաւակները*
*Տիկ. Շնորհիկ Տօնիկեան*
*Տիկ. Լուսին Բագեան*
*Տէր եւ Տիկ. Յովսէփ եւ Արփի Բագեան*
*Տէր եւ Տիկ. Վարդուհի Եաղլըճեան*
*եւ համայն Լաչինեան, Բագեան, Տօնիկեան, Օգնայեան, Պապեան, Բամբալեան, Շէմսեան, Քելեքեան, Ունճեան, Արբաճեան, Ատաճեան եւ Վանեան ընտանիքները:*

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

*ՀՌԻՓՍԻՄԷ ԼԱՋԻՆԵԱՆի մահուան տխուր առիթով Հ.Մ.Մ.ի Կլենտէյլի եւ Փասատինայի վարչութիւններն ու վեթերաններու համախմբումը իրենց խորազգաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի զաւակներուն եւ ընտանեկան համայն պարագաներուն:*

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

*ՀՌԻՓՍԻՄԷ ԼԱՋԻՆԵԱՆի մահուան տխուր առիթով Փասատինայի Ս.Դ.Հ.Կ. «Փարամազ» մասնաճիւղի վարչութիւնը իր խորազգաց վշտակցութիւնը կը յայտնէ հանգուցեալի զաւակներուն եւ ընտանեկան պարագաներուն:*

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

*ՀՌԻՓՍԻՄԷ ԼԱՋԻՆԵԱՆի մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ. Գէորգ եւ Լուսին Գալուստեան կը յայտնեն իրենց խորազգաց ցաւակցութիւնները հանգուցեալի զաւակներուն ու ընտանեկան բոլոր պարագաներուն: Առ այդ $100 կը նուիրեն «Մասիս»ին:*

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

*ՆԱԶԱՐԷԹ ԱԶԱՊԱՀԵԱՆի մահուան տխուր առթիւ Տէր եւ Տիկ. Յարութ եւ Անի Գասպարեան կը յայտնեն իրենց խորազգաց ցաւակցութիւնները հանգուցեալի զաւակներուն ու ընտանեկան բոլոր պարագաներուն: Առ այդ $200 կը նուիրեն «Մասիս»ին:*

*****

*ՆԱԶԱՐԷԹ ԱԶԱՊԱՀԵԱՆի մահուան տխուր առթիւ Տէր եւ Տիկ. Ջոհրապ եւ Արփի Զոլաքեան (Թեքսաս) կը յայտնեն իրենց խորազգաց վշտակցութիւնները հանգուցեալի զաւակներուն ու ընտանեկան բոլոր պարագաներուն: Առ այդ $200 կը նուիրեն «Մասիս»ին:*

*****

*ՆԱԶԱՐԷԹ ԱԶԱՊԱՀԵԱՆի մահուան տխուր առթիւ Տէր եւ Տիկ. Յովիկ Լաչինեան կը յայտնեն իրենց խորազգաց վշտակցութիւնները հանգուցեալի զաւակներուն ու ընտանեկան բոլոր պարագաներուն: Առ այդ $100 կը նուիրեն «Մասիս»ին:*

*****

*ՆԱԶԱՐԷԹ ԱԶԱՊԱՀԵԱՆի մահուան տխուր առիթով, Տէր եւ Տիկին Գէորգ Թաւուքճեան կը յայտնեն իրենց խորազգաց ցաւակցութիւնները հանգուցեալի համայն հարազատներուն եւ ընտանեկան պարագաներուն: Առ այդ կը նուիրեն 100 տոլար «Մասիս»ին:*

*****

*ՆԱԶԱՐԷԹ ԱԶԱՊԱՀԵԱՆի մահուան տխուր առթիւ Տէր եւ Տիկ. Կարպիս Պալըգճեան կը յայտնեն իրենց խորազգաց ցաւակցութիւնները հանգուցեալի զաւակներուն ու ընտանեկան բոլոր պարագաներուն: Առ այդ $100 կը նուիրեն «Մասիս»ին:*

*****

*ՆԱԶԱՐԷԹ ԱԶԱՊԱՀԵԱՆի մահուան տխուր առթիւ Տէր եւ Տիկ. Ասպետ եւ Լորի Թաթուլեան կը յայտնեն իրենց խորազգաց վշտակցութիւնները հանգուցեալի զաւակներուն ու ընտանեկան բոլոր պարագաներուն: Առ այդ $50 կը նուիրեն «Մասիս»ին:*

*****

*ՆԱԶԱՐԷԹ ԱԶԱՊԱՀԵԱՆի մահուան տխուր առթիւ Տէր եւ Տիկ. Կարօ Լաչինեան կը յայտնեն իրենց խորազգաց վշտակցութիւնները հանգուցեալի զաւակներուն ու ընտանեկան բոլոր պարագաներուն: Առ այդ $50 կը նուիրեն «Մասիս»ին:*

## ԵՐԱԽՏԱԳԷՏ ՀՐԵԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԸ

*Շարունակուածէջ 16-էն*

*քը ջարդուած էր, բժիշկը թելադրեց անմիջապէս հիւանդանոց փոխադրել: Ծախսերը հոգացի, մեքենայ վարձեցի եւ իր իրերով տուն հասցրի Թեհրանում, մայրը նկատելով զաւակին այդ վիճակում լացով ու արցունքով ընդունեց, եղելութիւնը բացատրեցի, իմ հասցէն ու անունս առնելով մեծապէս շնորհակալ եղաւ: Դէպքից մի երկու ամիս էր անցել, գիշերով մեր տան զանգը հնչեց, դուռը մայրս էր բացել, ինձ ձայն տուեց.*

*-Գեղա՛մ, քեզ են կանչում:*

*-Մօտեցայ, տեսայ Քարիմն է առողջ ու կայտառ, նա ինձ որ տեսաւ, գրկախառնուեց, պաչպչելով ու շնորհակալութիւն յայտնելով ասաց.*

*-Գեղա՛մ, ես պարտական եմ քեզ, դու իմ կեանքն ես փրկել, դու եթէ մարդկայնութիւն չանէիր, ես հիմա չկայի, դու վասն ինձ քեզ չարչարանքի եւ նեղութեան մէջ ես գցել, դրամ ես ծախսել ինձ փրկելու համար, ախր ես հրեա, դու հայ, ինչ լաւութիւն եմ արել քեզ, որ իմ կեանքի հրեշտակն ես դարձել, փառք ու պատիւ քեզ:*

*-Էդ ինչ ես ասում Քարիմ, եթէ էդ րոպէին իսկ մեզ թշնամի թուրքը լինէր, նոյնպէս պիտի ջանայի իրեն օգնել եւ սպեղանի լինել ցաւին, մարդ ենք ասել, մարդասիրութիւն ենք ասել, ինչ գոյնի եւ ազգի էլ լինի, երբ օգնութեան կարիք ունեցաւ, անհրաժեշտ է օգնել:*

*-Իսկապէս վեհանձն ու վսեմաշուք մարդ ես, արժանի ամէն տեսակ յարգանքի, այսպէս հեշտ չպիտի վերջ գտնի, հրեաները մի նշանաբան ունեն, անշուշտ Թորաթից եկած խօսք է, թէ՝ ակն ընդ ական, այս դէպքում լաւութիւնը լաւութեամբ պիտի փոխարինուի:*

*-Չէ՛, Քարիմ, ես չեմ արել, որ փոխարինուի, դա իմ սրտի կանչն էր, հոգուս պահանջը, շատ-շատ շնորհակալ եմ, որ ապերախտ չես գտնուել եւ յիշել ես ինձ, դէ՛հ, բարի գիշեր ասելով թեքուեցի, որ սենեակս գնամ, տեսայ մայրս անկիւն կանգնած լսել էր խօսակցութիւնը, մօտեցաւ, ուղջաղեց (գրկեց), համբուրեց ասելով.*

*-Ապրես տղա՛ս, հպարտ եմ քեզանով:*

*-Քարիմը չգնաց, մնաց եւ կանչեց.*

*-Վաղ առաւօտեան ոչ մի տեղ չես գնայ, կը սպասես ինձ, անպայման պիտի հանդիպեմ քեզ եւ բարի գիշեր ասելով մեկնեց:*

*-Ուրախ էի, որ կեանք էի փրկել եւ սրտեր ուրախացրել, այս տրամադրութեամբ անկողին մտել եւ հանգիստ ու խաղաղ քնել էի մինչեւ առաւօտուայ բացուելը, նախաճաշեցի եւ աշխատանքի գնալու ժամանակ Մայրս զգուշացրեց.*

*-Այ տղա՛յ, մի՞թէ Քարիմը չխնդրեց, որ տանը մնաս հանդիպելու համար:*

*-Չէ՛, մա՛մ, թող որ նա իրեն շատ պարտական չզգայ, ես գնում եմ գործի:*

*-Քարիմն եկաւ գործատեղիս, վարպետից խնդրեց, որ մի օրուայ արձակուրդ տայ ինձ:*

*-Ամբողջ մի օր իրար հետ զբօսնեցինք, իրեն ներկայացնելով ասաց.*

*-Մենք մեծահարուստ գորգի վաճառականներ ենք, Գերմանիայի Համբուրգ քաղաքում վաճառատուն ունենք հարուստ ծանօթների մեծ շրջանակով, դո՛ւ, Գեղա՛մ, ինձ նոր կեանք ես պարգեւել, որոշել եմ քեզ օգտակար լինել, որպէսզի հանգիստ կեանք ունենաս, եթէ համաձայն լինես, քեզ տանեմ Գերմանիա, այնտեղ քո համար գործ կը ստեղծեմ, կարող էք ընտանեկան կազմով գալ, ես ամենայն սիրով պատրաստ եմ առանց այլեւայլի եւ սպասելիքի օգնել եւ սատար կանգնել, լաւ մտածիր եւ պատասխան տուր, եթէ համաձայն չլինես գոնէ եկ, տանեմ Եւրոպա, երկրներ տեսնես, մարդկանց հետ շփուես, բան սովորես, կը սպասեմ պատասխանիդ:*

*-Նա հարկադրանքով էր խօսում ինձ հետ, ի սրտէ ցանկանում էր, որ անպայման օգտակար լինել, ստիպուած չմերժեցի ծնողներիս հետ խօսել: Նրանք համաձայն չեղան, որ գնամ Գերմանիա ապրեմ, սակայն մանգալու համար չհակառակեցին: Այսպէս երեք ամիս պտոյտով եղանք տարբեր երկրներ, նաեւ նրա ծախսով նուէրներով բեռնաւորուած Խորհրդային Հայաստան մեկնեցի քրոջս այցելելու համար, մտքով լուսաւորուած, թարմացած ու լիցքաւորուած տուն վերադարձայ միշտ յիշելով ու պատմելով հրեա երախտագէտ երիտասարդին:*

*Այո՛, կեանքը նաեւ այս է, լաւութիւնը, բարիքը չի կորցուի: Համաձայն մեր անմահ Վահան Թէքէեանին՝ Այն ինչ տուիր օտարին, դա կը մնայ եւ քաղցրացած կը վերադառնայ քեզ:*

## ԺՈՂՈՎԻ ՀՐԱՒԷՐ

Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան ընդհանուր անդամական ժողովը տեղի պիտի ունենայ Երկուշաբթի, 15 Դեկտեմբեր 2014, երեկոյեան ժամը 8:00ին, Փասատինայի Հ.Կ.Բ.Մ.ի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ:

Կարեւոր օրակարգ

Շրջանիս բոլոր ընկեր-ընկերուհիներու ներկայութիւնը պարտաւորիչ է:

ՆԵՐՔԻՆ ԴԻՒԱՆ

## ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

### ԵԳԻՊՏՈՍ

### ԱՆԱՊԱՀՈՎ ՎԻՃԱԿԻ ՊԱՏՃԱՌՈՎ 3 ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆԵՐ ԿԸ ՓԱԿՈՒԻՆ

*Եգիպտոսի Հանրապետութեան նախկին նախագահի դէմ դատարանը զինք անպարտ հռչակելուն առթիւ խռովութիւններու նոր ալիքի մը մղձաւանջը կը տիրէ բովանդակ երկրին մէջ: Ճիշդ այդ պատճառով եւ անապահով դրութեան բերումով Գահիրէի մէջ յաջորդաբար իրենց դռները փակեցին Գերմանիոյ, Անգլիոյ եւ Գանատայի դեսպատանատուները:*

### ԵՄԷՆ

### 13 ՄԵՌԵԱԼ, 2 ՊԱՏԱՆԴՆԵՐ ԱԶԱՏԵԼՈՒ ՁԱԽՈՐԴ ՓՈՐՁԻ ՊԱՀՈՒՆ

*Ռէօթըր գործակալութեան համաձայն 10 տարեկան տղայ մը, Ալ Քայիտայի անդամ մը եւ 11 ուրիշներ սպաննուեցան իսլամիստ ծայրայեղականներու կողմէ երբ ԱՄՆ-ի մասնայատուկ ուժեր կը փորձէին ազատագրել երկու արեւմտեան պատանդներ: Այս կապակցութեամբ ամերիկացի 33 ամեայ լրագրող եւ հարաւ ափրիկեցի ուսուցիչ 56 ամեայ Փիէռ Քորքին իսկոյն սպաննուեցան առեւանգիչներու ձեռամբ:*

### ՍՈՒՐԻԱ

### ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՕԴՈՒԺԻ ՌՄԲԱԿՈԾՈՒՄՆԵՐԸ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՕԴԱԿԱՅԱՆԻՆ ՎՐԱՅ

*Իսրայէլեան օդուժը Դամասկոսի մերձակայքը գտնուող միջազգային օդակայանին վրայ կատարած անակնկալ ռմբակոծումները մեծ ցնցում յառաջացուցին թէ երկրէն ներս եւ թէ սրտասահմանի մէջ:*

*Սուրիական կառավարութեան համաձայն վերոյիշեալ յարձակումները միայն նիւթական վնասներ պատճառած են: Իսկ իսրայէլացիները կը չեշտեն թէ ռմբակոծումներու նպատակն էր արգիլել Իրանէն ստացուած զէնքերու եւ հրթիռներու փոխադրութիւնը դէպի Լիբանան:*

*Այս առթիւ Ռուսիոյ փոխ արտաքին գործոց նախարար Միխայիլ Պոկտանով Լիբանան տուած այցելութեան ընթացքին, նշած է թէ իր երկիրը կը ջանայ երկխօսութիւն մը ստեղծել հակամարտ ուժերու միջեւ, առանց օտար միջամտութիւններու:*

*Իր կարգին Սուրիոյ արտաքին գործոց նախարար Ալ Մուալլէմ ըսաւ. սուրիան Իրաքի եւ Ռուսիոյ հետ կը ջանան նոր լուծում մը գտնել վերջ տալու համար կռիւներուն:*

### ԼԻԲԱՆԱՆ

### ՍՈՒՐԻԱՑԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՈՒՄԸ ԿԸ ԴԺՈՒԱՐԱՆԱՅ

*Լիբանան ապաստանած աւելի քան մէկ միլիոն սուրիացի գաղթականներու հարցը ներկայիս կը դիմակալէ նորանոր դժուարութիւններ: Այս առնչութեամբ ուզած է միջամտել Ռուսիոյ արտաքին գործոց նախարարի փոխանորդը՝ Միխայիլ Պոկտանով: Ան առաջարկած է ուղղակի բանակցութիւններ վարել սուրիացի իշխանութիւններու հետ: Սակայն Լիբանանի վարչապետ Թամմամ Սալամ կտրուկ կերպով մերժած է եղած առաջարկը, առարկելով որ Լիբանան չէզոք դիրքի վրայ ըլլալով չի կրնար այդպիսի միջոցներու դիմել:*

*Միւս կողմէ Ֆրանսա որոշած է 2015ի սկիզբները զինամթերք առաքել դէպի Լիբանան, Սէուտական Արաբիոյ կողմէ տրամադրուած երեք միլիառ տոլարով: Արդարեւ Լիբանանի նուէր տրուելիք այս գումարի խոստումը կատարուած էր անցեալ տարուան ընթացքին: Սակայն սէուտական իշխանութիւնները որոշ վերապահութիւն ունէին այդ յատկացումի գործադրութեան ձեւին շուրջ, քանի որ կը վախնային այդ զինամթերքին Հըզպալլայի հակակշիռին տակ առնուելուն: Ներկայիս այդ մտահոգութիւնը փարատած ըլլալով, որոշուած է առաքման գործընթացն աւարտել յառաջիկայ երեք ամիսներու ընթացքին:*

## «ՄՈԽՐԱՑԱԾ ՅՈՒՇԵՐ» ԳՐՔԻՑ

*Շարունակուած էջ 15-էն*

*ծերութիւն մնաց որպէս հարս. չէ՞ որ ուրիշ գիւղից էր եկել ու շատ սիրուած էր: Նրա մատներից հազար շնորհք էր թափւում: Մաքրասէր էր, բակն ու տան շէմքը միշտ աւլած, երեխաները՝ մաքուր: Հասնում էր կալին, կուտին, իլիկը միշտ ձեռքին, քայլելիս էլ մանում էր:*

*Ճաշից յետոյ, երբ ամբողջ գիւղը մի ժամ քուն էր մտնում, նա դուրս էր գալիս, իրենց երկու մետր բարձրութեամբ շուաքի տակ կարպետ գործում: Մաքոքը արագ-արագ իր բարակ մատների արանքով թելերի մէջից անց էր կացնում, ապա սանրով ամրացնում, թելի գոյնը փոխում, նոր նախշեր էր գցում ու պատի ստուերի անցնելուն պէս ծածկում էր գործը ու գնում ուրիշ գործի: Գիւղի գործը միթէ՞ վերջ ունի. վա՜յ թէ մի օր չհասար, ամբողջ տարուայ արածդ կը խառնուի ու տեղ չես հասնի:*

*Յիշում եմ, թէ ինչ վարպետութեամբ ձաւարի ցորենը մեծ սալաներով առուի ջրի մէջ կը լուանար: Շուարած ու հիացած, կը նայէինք թէ ինչպէս է այդ մեծ կլոր սալան դարձնում եւ ինքը իր բարակ մատները բուռ արած վերցնում ու լցնում է մի ուրիշ կողովի մէջ չորացնելու, նորից ծեծելու,ծղոտը մաքրել տալու համար:*

*Գիւղի ամենավարպետ կուժ ու կուլայ, թոնիր պատրաստողն էր Մարիամ հարսը: Իսկ թէ ի՞նչն էր խառնում ու շաղախում, ոչ ոք չգիտէր:*

*Հիմա էլ շատերի տնում անգործածելի իրերի շարքին դեռ կան նրա շինած ու թրծած թոնիրները եւ մանաւանդ՝ կտրուած կճուճները՝ նրա ձեռքով կծկուած:*

*Էլ մազի թաղկուճ, էլ բուրդ, էլ ձուի ճերմկուց եւ ուրիշ ինչեր ասես խառնելով, կտրած կճուճներ էր, այդ կծկուած մասը չէր, որ կտրւում էր, այլ թէ մի ուրիշ տեղից:*

*Մինչեւ իր կեանքի վերջը իր սկեսուրը նրա ձայնը չլսեց: Հեզ, խոնարհ. լուռ ու մունջ, իր բազմանդամ ընտանիքի հոգսը տարաւ այդ անմոռանալի Մարիամ հարսը, եւ յաւէտ էլ կը մնայ անմոռաց իրեն յիշողների սրտերում:*

## «ՊԱՏՐԱՍՏ ԵՆՔ ՄԻՇՏ ՕԳՏԱԿԱՐ ԸԼԼԱԼՈՒ ՀԱՅՈՒԹԵԱՆ»

*Շարունակուած էջ 6-էն*

*ալ հայութիւն կայ: Մեր նահանգին մէջ քիչ է հայութեան թիւը. 3,5 միլիոննոց նահանգին մէջ 125 հայ ընտանիք կայ: Պաթօն-Ռուժի մէջ 30 հայ ընտանիք կայ, որոնցմէ 14-ը մենք ենք, մեր գերդաստանն է: Միւսները ցրուած են տարբեր քաղաքներու մէջ: Բայց քիչ ըլլալով՝ մենք ուժեղ ենք, որովհետեւ համախմբուած ենք: Որեւէ հայկական հարցի շուրջ համայնքը անմիջապէս կը համախմբուի: Ունինք հայ առաքելական եկեղեցին, եկեղեցիին կից սրահ եւ գերեզմանատուն: Լուիզիանայի մէջ հայերը հիմնականը սպասարկման ոլորտի մէջ են ընդգրկուած՝ ճաշարաններու գործ, նաեւ՝ ոսկերչութեան եւ ինքնաշարժներու առեւտուր:*

- Հայախօ՞ս են:

***- Մեր սերունդը՝ այո հայախօս է: Նոր սերունդն ալ հայախօս է, բայց հայերէն գրել-կարդալ չի գիտեր: Ցաւօք, հայկական դպրոց չունինք: Երբ նոր կը հաստատուէինք նահանգին մէջ, ամէն ինչ անծանօթ էր, մեր ամէնօրեայ աշխատանքով, դժուարութիւններ յաղթահարելով, օրէնքներուն ծանօթանալով զբաղած էինք, եւ կարծես երեխաներուն հետ ժամանակ անցընելու շատ ժամանակ չէր մնար: Բայց Լուիզիանայի բոլոր հայ երախաներն ալ հայախօս են, հայկական ոգին կը կրեն, քանի որ ընտանիքներուն մէջ հայերէն կը խօսին: Լուիզիանայի հայերը երբեք իրենց հայկական դիմագիծը չեն կորսնցուցած: Յոյս ունինք, որ հայերէն լեզուն մեր զաւակները կը փոխանցեն իրենց զաւակներուն:***

- Իսկ Հայաստան տեղափոխուելու մտադրութիւններ չկա՞ն:

*- Շիտակը՝ մշտական ապրելու համար՝ ոչ: Բոլորն ալ արդէն արմատաւորուած, իրենց տունն ու տեղը, գործը հաստատած մարդիկ են, շատ դժուար կ'ըլլայ Հայաստան տեղափոխուիլը, բայց կապը միշտ կայ Հայաստանի հետ: Հայաստանին առնչուող որեւէ հարցի պարագային անմիջապէս մեր կողմէ կ'ըլլայ աջակցութիւն: Պատրաստ ենք միշտ օգտակար ըլլալու հայութեան:*

- Հայաստանցիներ կա՞ն Լուիզիանայի մէջ:

*- Քիչ են, չորս ընտանիք կայ ընդամէնը, որոնցմէ մէկը փրոֆեսոր ամուսիններ են, համալսարանին մէջ կ'աշխատին, բայց Պաքուէն տեղահանուած շատ հայեր կան: Համայնքին մէջ ընդհանրապէս սուրիահայերն ու լիբանանահայերը կը գերակշռեն:*

- Իսկ սպասարկման ասպարէզէն զատ, տեղական կառավարման մարմիններուն մէջ ինչո՞ւ չեն ընդգրկուիր հայերը: Ձեր օրինակը ցոյց տուած է, որ վստահութիւն կայ հայերու հանդէպ:

*- Այո, մեծ վստահութիւն կայ հայերու հանդէպ եւ քաջալերանք՝ տեղացի ժողովուրդին կողմէ: Լուիզիա նաեւ ընդհանրապէս՝ հարաւը, ծանօթ է հիւրասէր, ազնիւ, ջերմ բնակիչներով, որոնք հիմնականը բնիկներ են: 36 տարի է՝ հոն կը բնակիմ, եւ որեւէ խնդիր չեմ տեսած հայերու հանդէպ: Անոնք շատ կը գնահատեն մեր բոլոր ջանքերը: Պարզապէս մեր սերունդը, որ առաջին սերունդն էր, չի կրցաւ քաղաքական կենսագրութիւն ձեւաւորել, քանի որ, ինչպէս ըսի, զբաղած էինք հաստատուելով, դժուարութիւններ յաղթահարելով, անձնական գործեր հիմնելով: Հայերը, ինչպէս գիտէք, շատ հպարտ են, չեն ուզեր ոեւէ մէկուն քով աշխատիլ, եւ ամէնքն ալ իրենց սեփական գործերը հիմնած են՝ աւելի երկար աշխատելով օրուայ մէջ:*

*Բայց նոր սերունդը ազատ է, կրնայ ընդգրկուիլ քաղաքական որեւէ գործընթացի մէջ, լեզուն ալ լաւ գիտէ, մանաւանդ, որ ոչ մէկ սահմանափակում կայ ոեւէ մէկու հանդէպ:*

- Յաճախ կ' ըլլաք Հայաստան. ինչպէ՞ս կը տեսնէք երկիրը:

*- Վերջին տասներեք տարիներուն տարեկան գրեթէ 2-3 անգամ կ'այցելեմ: Խնդիրներ անշուշտ կը տեսնեմ՝ է՛ւ գործազրկութիւնը, է՛ւ արտագաղթը: Կը հանդիպիմ երիտասարդներու, որոնք անմիջապէս վաղն ալ որեւէ վիզա ունենան, կ'երթան, բայց գլխ կ'ուրախացնեն այն երիտասարդները, որոնք միայն Հայաստանի մէջ կը պատկերացնեն իրենց ապագան, համոզուած են, որ լաւ պիտի ըլլայ, համոզուած կ'ապրին եւ բանով մը կը նպաստեն այդ լաւին: Անոնք գիտեն, որ ամէն ինչ մէկ անգամէն չի տրուիր, ոչ մէկ երկրի տրուած է մէկ անգամէն, պէտք է հասնիլ ատոր, թէկուզ՝ դանդաղ քայլերով: Իսկ այդ դանդաղ քայլերը կան. տասը տարուան, նոյնիսկ հինգ տարուան մէջ փոփոխութիւն կայ: Պարզ բան մը ըսեմ. հեռաւոր Լուիզիանայի մեր փոքրիկ քաղաքի հանրախանութներուն մէջ հայկական արտադրութեան անուշեղէն, հիւթեր կը վաճառուին:*

*Այդ մէկը կը խօսի այն մասին, որ արտահանման ծաւալները մեծցած են, այդ մէկն ալ յառաջընթաց է: Պանդոկներու թիւը տարուէ տարի կ'աւելնայ, նշան է, որ զբօսաշրջիկ կու գայ, որ երկիրը զարգացման ճիշդ ուղիի վրայ է:*

- Ո՞րը պիտի ըլլայ Ձեր յաջորդ քայլը:

*- Ես միշտ ըսած եմ՝ հայրենիքիս զինուորն եմ, ինչ որ ըսեն, այն ալ՝ կ'ընեմ:*

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ